

3204  
3205  
3206  
3207

Mengel


106-108

Mengel

105

2010

33



4-5 w74

A. DEVEJIAN LIBRARY  
NEW YORK  
Ա. ՏԵՎԵՅԱՆ ԳՐԱՄՈՒՆ

Լ Ա Մ Ը Ն Ե

ԲԱՆՔ

ՀԱՒՍՏԱՑԵԼՈՅ ՈՒՐՈՒՔ

Printed in Turkey

Ա Մ Է Վ Ե

28

5-16

۸۰

## ՀԱԽԱՏԱՑԵԼՈՅ ՈՒՐՈՒՔ

ԱՐԳՄԱՆԵԱԾ

### II. 3. 950 950 600


ԳՐԱՄԱՆԿԱՐ ՀԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Ե ՏՊԱՐԱՆԻ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ա . Պ Օ Լ Ի Ս

Printed in Turkey



2001



(3116) 105-2015  
39) №105

Ի ՅԱԻԿՐԺ ՑԻՇԱՏԱԿ  
ՅԱԿՈԲԱՅ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍՍ.ՓՐՁԻ  
ՀՕՐՆ ԻՄՈՅ

ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ Ի 1856 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

Յոսկեքանդակ և մեծաշուք ՚ի դամբան  
Այլքզիւրեանց հօր պճնեն զյետինն օթևան .  
Խսկ ես՝ որոյ արտառուք և շող լուսնեկին  
Գետեն և եթ թէ ու՞ր աճիւնք Քո հանգչին ,

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԺՄԱՆՉՐԵՄ

առաջանած առաջնորդ մասն և մաշխան  
առաջի առաջնորդ առաջ և բանիք առ  
Մարդիկ համայն , ընութենէն հաւասար  
տակդեալք , մի և նոյն իրաւունքներն ու մի-  
և նոյն պարտքերն ունին :

Երկիրը , յորում գրած է զայնս զամեն  
ինչ ստեղծող Զեռնը , ամենուն հաւասար մայ-  
րըն է , և ամենքն , իրեն մի և նոյն մօր որ-  
դիք , հաւասարապէս իրաւունք ունին նորա  
յորդառատ ստեանց կաթը ծծելու :

Երկիրն հասարակաց հայրենիքն է : Անց-  
նիր մարդ , որ կեանք կ'առնու և կուգայ  
յաշխարհ , իրաւունք ունի երկնից տակ տեղ  
մը գրաւելու և իւր բաժինն ունինալու երկ-  
րին պարզներէն : Սրեառն տակ միշտ ամե-  
նուն համար բաւական տեղ կայ , և բնութեան  
սեղանը զամենքն յափեցնելու համար յոյժ  
առաստալից է ու անսպառ :

1871 Յուլիոս թօւն 1 օնութեան . Յ. Պ. Պ.

Խասդիկ . գոյածն ու խարժագիրով  
անձի՞ մասնութէ մասն զօդ քառակայք առ Ա  
միջնառու յոց և գոյածն յոց նու թափ  
անձի՞ ուն քայլու զա չի կը և մասն

Այս են օրէնքը բնութեան , և բնութեան  
օրէնքներն յատիտենուկան են , չանոյիլմայլակ  
և տիեզերական : Պայտ պէտ միեց , զգոյ սան  
ու ուրան ին մաքառալուած համեցու յայ

Բ

Նորա առջև չի'ք խտիր . ամեն անհարթութիւն և ամեն օձուածի զեղծմունք են նորա օրինաց , և նորա դէմ գործուած ոճիրք : Եակը ամեն սեռերով միայն կը զանազանին նորա առջև , և բաց յընդհանուր օրինաց՝ հըպատակը են նաև իւրաքանչիւր սեռի յատուկ օրէնքներու : Բնութեան մէջ անհատական օրէնք չկան :

Բոլանդակ մարդիկ , մի և նոյն ֆիզիգական ու բարոյական կարողութիւններով ըստեղծուած , մի միայն մէկ սեռ կը կազմեն որ կ'անուանի մարդկային սեռ : Ամենքն նըմանք են իրերաց . զնոյն օրինակ կը ծնին մերկը և տիսեղծք , կենաց մի և նոյն օրինօք կապրին , և , երբ իւրեանց ասպարէզն 'ի կատար կ'ածեն , կ'երթան մի և նոյն հողէ անկողնոյն մէջ իւրեանց յետին հանդիսան հանդւելու : Բնութիւնն , որեմն , զանոնք եղբայր ստեղծած է , և նա ո՛չ ումեք տուած է առաւել ինչ քան այլում :

Ըսել թէ նա զոմանս մեծ ըրած է , զոմանս փոքր , զմին տէր կարգած , զայլն ըստրուկ յօրինած , հայկայութիւն մ'է սոսկալի

Նորա դէմ՝ որ զինութիւնն ըրաւ և առաւ անոր իւր յաւիտենական ու անյեղլի օրէնքները :

\* \*

Մարդոյն իրաւանց գլխաւորն ու առաջինն է ազատութիւնը : Այս' նորա իրաւանց ամենէն անբունաբարելին է : Ո'վ որ զայն կը բոնաբարէ՝ կ'եղծէ բնութեան օրէնքը և կը կործանէ հաւասարութիւնը . վասն զի առանց ազատութեան չի'ք հաւասարութիւն : Մարդիկ կը ծնին ազատք կամքով և տէր իւրեանց անձանց : Աղատութիւնը նաև այն թէ ութիւններէն մին ու մեծագոյնն է՝ որովք միայն մարդը բարոյական էակ մ'է : Վ'երցու՛ր ազատութիւնը , այլ ևս մարդն չէ' այլ ինչ բայց անասուն մը բնազդմանց գերի . չէ' նա այլ ևս պատասխանատու էակ մը , վասն զի իւր շարժմանց և ընթացից մէջ ազատ ու ինքնիշխան մէկը կրնայ պատասխանատու ըլլալ իւր գործոց . այլևս առաքինութիւնը ցնորք մ'է միայն սին ու ծաղրելի , և բարւոյ ու շարի առուններն նշանակութենէ զուրկ' օդային բա-

աեր : Կասպոնել զմարդին խր աղասութենէն՝  
կը նշանակէ մարդկային սեռն խր վսեմու-  
թեան բարձունքէն գահավիժել նուասութան  
տղմին մէջ, և բանական արարածներ՝ ան-  
բանից վոհմակ մ'ընել, ջոկ մը գրաստուց՝ որք  
կ'երթեան ուր որ խթանը վարէ զիրենք :

Մարդն առանց աղասութեան կը դադրէ  
մարդ ըլլալէ : Այնու միայն նա մարդ է,  
այսինքն բարոյական էակ մը . այնու և եթ-  
մէծ է և երջանիկ, և անով միայն խր հո-  
գեկան կարողութիւնքն կրնան իրենց բովան-  
դակ առումն ու զարգացումն առանալ, և  
մարդկային սեռը՝ խր գօրութեանց և կա-  
րողութեանց բովանդակ ստացմամբն և կիրա-  
ռութեանմբ՝ զիմել անվրէպ ու արագ ՚ի կա-  
տարելութիւն :

Մարդիկ, ըստ որում ընկերական և ի-  
րերաց հետ ապրելու ճակատազրեալ, մեծ  
ու գլխաւոր սրբականութիւն մ'ունին առ-  
միմեանս . այն է յարգել միմեանց աղասու-  
թիւնը . և այս նոյն խոկ իրեանց շահուն  
չամար, վասն զի նա՝ որ կը բռնաբարէ զայ-  
րոյ իրաւոնքը՝ զիւրն կը դնէ ՚ի վասնզի :

Այս պարտականութիւնն է Հիմն և պայման  
ամեն մարդկային ընկերութեան :

\* \* \*

Աղասութիւն, Հաւասարութիւն, Եղ-  
բայրութիւն . այս է մարդկութեան նշանա-  
բանը, այս է այն եռակի կնիքը՝ զոր բը-  
նութեան Արարիշը զրոշմած է նորա ճակտին  
վերայ : Յորչափ մարդիկ հաւատարիմ կացին  
այս նշանաբանին, և ցորչափ անջինջ պահե-  
ցին իւրեանց ճակտի վերայ զայս կնիքն ասու-  
ուածեղէն, երջանիկ եղան . վասն զի տիե-  
զերաց Օրինադիրն երջանկութեան օրէնքներ  
միայն սահմանած է և ո՛չ աղիտից . նա՝ զա-  
մեն ինչ բարի ըրած է . և զաշխարհ ո՛չ ե-  
թէ ցաւոց ու թշուառութեանց կայան մը, այլ  
երանութեան դրախտ մը, միայն թէ գիտնայց  
մարդն ճանչել նորա օրէնքներն ու անոնց  
հապատակիւլ :

Այս յորմէ հետէ մարդիկ ոտնակոփ ըրին  
բնութեան օրէնքներն, յորմէ հետէ եղան  
մարդիկ՝ ոյք իրենց նմանեաց աղասութիւնը  
բռնաբարեցին և զնոտա իբրեւ ստրոկիրենց կա-

մաց դործի մ'ըրին , յորմէհ ետէ եղան մարդիկի  
ոյք բնութեան հաստատած հաւասարութիւնը  
սպաննեցին և իրենց եղբարց բռնաւորներն  
եղան , երջանկութիւնը բարձա՛ւ ՚ի միջոյ , և  
յայնմէհետէ աղէտք , արտասուք և արիւն հե-  
ղեղեցին յաշխարհ , և տկարին ճիշերը , տա-  
ռապելոյն հառաջանքն , քաղցելոյն հեծու-  
թիւնքն , օրհնութեանց ու խնդի նուազներու  
փոխան , յարաժամ երկնից կամարքը բախել  
սկսն :

Հաւասար իրաւանց տէր անհատն՝ րէ  
կազմեալ մարդկային սեռը երկու իրարմէ-  
տարբեր դասեր իւր մէջ պարունակեց . մեծք  
և փոքունք , իշխանք և ժողովուրդ . և միշտ  
այս վերջինք վաստակեցան , որպէս զի այնք  
հանգչին , սոքա սովալլուկ կորան , որպէս զի  
այնք առատութեամք յդ փանան . սոքա մերկք  
ու անպատսպարք մնացին , որպէս զի նոքա  
պալատից մէջ յօրանան . և մինչ ամեն բարիք  
և ամեն փառք նոքա կը վայելէին , ժողովը-  
դեան չարիք միայն և նախատինք եղան ՚ի-  
րաժին :

Եւ ա՛յս եղած է մարդկային ազգի ճա-

կատաղիրը յանյիշատակ դարուց հետէ :

Թշրւա՛ռ ժողովուրդ , որ մարդկութիւնն  
իսկ է , նորա արմատն ու բոնը , նորա պիրար ,  
ի՞նչ աղիտից դարերու մէջէ իւր ընթացքն  
ըրած է մինչև ցայս կէտ . ո՞րքան տառապած-  
է ու վշտակրած , և ի՞նչ փշալից ու ժեռուտ  
առապարներու վրայ իւր մարմնոյն կտորները  
թողուցած է : Արէլի արենէն մինչև Բրուսո—  
Գաղղիական անհուն նախճիրը անմեղին  
արիւնը , ժողովրդեան արիւնը , արտասու-  
թառն , քանի՞ց ծծած է երկիրը մինչև աղիք-  
ները սարսուալով :

Միշտ իրեն զնձի անարդ առ ոտն կո-  
խոտեալ , իրեն զգրաստ բեռնաբարձ և խը-  
թանահար , հնութեան գերութենէն և միջին  
դարու աւատական ստրկութենէն մինչև արդի  
դործաւորութիւնը ո՞րքան քիրտն թափած և  
փոխարէն ո՞րքան արտսուք խմած է :

Դրակոննեան օրէնքներ զաշխարհ քանի՛-  
օն բանտերով ու կաւագնարաններով լցուցին .  
քանի՛ քաղաքաց ովկիանանման հրդեհներ  
Ներոններու հրախաղութեանց հանդէմները  
եղան , և ո՞րքան բիւրաւոր մարդկային արաւ-

բածոց սրախողիսող կառափունք Թիմուրներու  
յաղթական կոթողներն յօրինեցին . . . :

\*  
\*

Սակայն տասն և ինն դար յառաջ, մինչ-  
դեռ սուրն ու երկաթեսց գաւազանը կը թա-  
գաւորէին փոխան ամեն իրաւանց ու արդա-  
րութեան, մինչդեռ ժողովրդեան դաշիճներն  
զժողովուրդն մարտիրասութեան բեմին վրաց  
տարածած, կտոր կտոր նորա մարմինը դա-  
նակելու դրազած էին, յանկարծ ձայն մը  
լսուեցաւ աշխարհի մէջ, որ կ'աղաղակէր.  
“Գթութիւն, գթութիւն. Ե՛ս կուղամ մեռ-  
նել այդ մարտիրոսին փոխան” :

Եւ այս ձայնին մէջ այնպիսի քաղցրու-  
թիւն մի կայր՝ որոյ նմանը երբէ՛ք շէր լսո-  
ւած տիեզերաց մէջ : Ասի Արդարութեան  
ձայնն էր՝ որ արտաքսուած էր յերկրէ, և  
Միրոյն՝ որ մեռած էր ՚ի մարդիկ : Մարտի-  
րոսն, յայս ձայն, բացաւ իւր ոգեշքար աշերն և  
յառեց յայն կերպարան աստուածեղէն՝ ուս-  
տի այս ձայնը կ'ուգայր : Ձայնը կրկնեց.  
“Արդարութիւն և Աէր՝ : , Այս հայեցքն

և այս ձայնը օրհասականին սրտին մէջ նոր  
կենդանութեան հուր մ'արծարծեցին և յաշն  
նորին իջամերձ յուր յաճանչ մի շղողշաց:  
Անիրաւութեան և ատելութեան մարդի-  
կըն ՚ի մահ մասնեցին Արդարութեան և Միրոյ  
այդ Առաքեալն, և իրենք ոկտան յառաջ ա-  
ծել իւրեանց գահճային դործը բայց ձայնը,  
անմեռ, կը հնչէր միշտ օդոց մէջ, և քանի որ  
կզարնէր իրենց ու Մարտիրոսին ականջաց,  
ինքեանք անծանօթ սարսուռով մը կը սարս-  
ուային, և Մարտիրոսը միշտ նոր ոյժ մը և  
յոյս մը կ'ստանայր այդ հնչիւնին մէջ . . . :

\*  
\*

Քրիստոս էր այդ Առաքեալը : Նա փըր-  
կութեան աւելակնը կը բերէր մարդկային սե-  
ռին . իւր խօսքն զմարդկութիւնը պիտի փըր-  
կէր : Նա վերստին բնութեան օրինաց մէջ  
հստատել կուդայր զմարդկութիւնն որ ան-  
տի յոյժ հեռացած էր, և ՚ի մարդիկ սահմա-  
նել Արդարութեան օրէնքը՝ որ իւր հիմն  
ունի բնութեան օրինաց մէջ, և Աէրը՝ որ եղ-  
բայրութեան օրէնքն է, այսինքն գարձեալ  
բնութեան :

Երբէ՛ք տիեզերաց մէջ քան զայս մեծաւ-  
դոյն յեղափոխութիւն մը չէ՛ եղած :

Մարդ մը , խոնարհ և աղքատ , բովան-  
դակ աղդաց բարքերը պիտի յեղաշըէր և  
տապալէր զայն աշուարակն ամբարտաւան՝ զօր  
ամբարշութեան հազարաւոր դարեր կանդ-  
նած էին երկնից գէմ:

Վրէալը զաշխարհ կորուսած էր . ճշմար-  
տութիւնը զայն պիտի փրկէր :

Ճշմարտութիւնը Նա ինքն էր : Կուգայր  
ասել առ մարդիկ , առ աղինս . “ Դուք եղ-  
բարք էք . սիրեցէ՛ք զիրեար , և երջանիկ պի-  
տի ըլլաք : ”

Նա՛ բոլոր անոնց հոմար կուգայր՝ ոյք  
կը վշտակրէին և կ'անարգուէին . ձեռն մէք  
դթոյ և օգնութեան առ Թշուառութիւնն կարա-  
կառեալ , սիրոյ ճաճանչ մը այն մութ ճառ  
կատուց վրայ՝ որք յերկիր կային հակեալ :  
Ժողովրդեան դատին առաջին առաքեալն ու  
զինուորն եղաւ :

Եւ եցոց թէ ի՞նչպէս որպատ էր փրկել  
դժողովներոց . — նորա խաչը բառնալով և  
անոր վերաց մեռնելով :

Ահ , եթէ նորա խօսքը սուրբ ու անրիծ  
միայր , ինչպէս այն առաջին օրն հնկեց , քա-  
նիօն առաւել բարիք պիտի ընէր աշխարհի :  
Եթէ անիրաւութեան , ամբարտաւանութեան  
և ասելութեան մարդիկ չժանային խեղդել  
զայդ խօսքը , եթէ՝ նորա քարողչաց գիմակն  
դգեցած՝ նիրոյ և կենաց խօսքը ասելութեան  
ու մահուան անէծքի մը չգարձէին , եթէ՝  
յանուն ճշմարտութեան լուսոյն խաւարը չը-  
տարածէին , և զմարդկութիւնն լուսաւորելու  
յատկացեալ չահովլ խարոյկներու բոցերը չը-  
բորբոքէին . . . , ժողովրդեան տառապանաց  
վերջին ժամն հնչած կ'ըլլար ցարդ :

\*  
\*

Սակայն ճշմարտութիւնը կը հալածի՝ բայց  
չմեռնիր , կը ծածկի՝ բայց չթաղէր , կ'սօղի  
բայց չինանիր . վաղ կամ անազան յաղթա-  
նակը իւրն է :

Արուսեակն այդաբեր դառաւօտն աւետեց-  
արշալոյսը կը ժմանի՚ի հորիդոնն . ո՛չչափ մրցի  
խաւարն ու տաղնաօլի իւր օրհասական ճգանց  
մէջ , տեղի տալ պարտի ու փախստեայ գնալ

Եռւսոյ արքային առջև՝ որ անշուշտ ընդ հուսդ  
իւր թագաւորութեան մէջ պիտի մտնէ :

Հիմայ փոխանցման ժամանակի մը մէջ  
եմք . ո՛չ գիշեր է ամենւին , ո՛չ առաւօտ ,  
այլ բան մը խառն այս երկուքէն . լուսոյ և  
խաւարի , ճշմարտութեան և ստութեան , ար-  
քարին և անիբաւին կոռւցն կամք հանդիսա-  
տես : Մարդկութիւնը կը հեծէ յերկունս .  
այն՝ որ պիտի ծնի , մեծ ապագայն է :

Բանը , որ յեղափոխել եկած էր , իւր  
պաշտօնը կը լնու : Աղին Քրիստոնէութեան ,  
թէ և կը բնաբարի , բայց այնքան ևս կը-  
ծաւալի : Ճշմարտութիւնը տարափոխիկ է :  
Ահա՝ Փիլիսոփայութիւնը , որ 'ի խաւարի կը-  
խարիսափէր , Աւետարանին մէջ իւրեան ա-  
ռաջնորդ ջաշը կը գտնէ , և վ.օլթէր , Ռուսօ  
Տիտոս , Տ' Ալամպէռ , սիրոյ և արդարութեան  
բանին ստոյդ շահատակները , կը պատրաստեն  
երկորդ յեղափոխութիւն մը՝ զոր Նիւկո  
մարդկութեան օծումնը կ'անուանէ , որ ընդ  
երկա՛ր շլթայեալ Ազատութեան ու իրաւանց  
ամպոց որոտումն ու կայծակումն էր , և որ ,  
դոյդ ընդ գոռալցն և շանթելցն , ծարաւա-

կէզ երկիրը պիտի յագեցնէր արդարութեան  
անձրւով :

89 Ը բարոյական աշխարհին մեծ գետ-  
նաշարժերէն մին եղաւ՝ որ մարդկութեան  
նոր շարժում ներդրեց :

Հրարուխ մ'էր այն որ Ազատութեան ,  
Հաւասարութեան և Եղբայրութեան լեռները  
վեր կը նետէր իւր ծոցէն :

Նարժումնը շարժումն կը ծնի : Յեղա-  
փոխումնը կը շարունակէ :

Աշխատութիւն մի կայ յարատե ընկերու-  
թեան ալուց մէջ : Տակու երկինք կը լուսա-  
ւորին , քօղերը կիյնան , և Բոնութիւնն ու  
Անիբաւութիւնը զինքեանս մերկ ու խայտա-  
ռակ կը դանեն : Պազինս յիրերաց անջատող  
պատուարք իրենց հիմանց վրայ կը տարաբե-  
րին : Խոր մառնչ մի կ'ելնէ խուժանին ծոցէն  
“ Իրաւունք ” կը քոչէ այս մառնչը :

Եւ տակաւ առ տակաւ վայրահակ գլ-  
ւախները կ'աղջին , և ժաղովուրդը կը թուի  
շունչ մ'առնուլ երկայն , իբր սյն թէ ահա-  
ւոր երաղէ մը արթննար :

Այս ամենայն չպատրաստէր գաշխարհն

այն մեծ դարուն՝ յորում 'ի յանդ պիտի ել-  
նէ Աւետարանի սկսած մեծ յեղափոխութիւնը,  
և ուր ազգ և ազինք միմիւանց ճակտին վրայ  
պիտի դրօշմեն համբայրն եղբայրական :

\* \* \*

Ամեն ապագայ իւր առաքեալներն ու  
մարդարէներն ունեցած է, որք զայն քարո-  
ղած և զժողովուրդս յայն պատրաստած են :  
Լամընէ, իննևտաներորդ դարուս մէջ, այս  
մեծ ապագային առաքեալն ու մարդարէն  
է եղած :

Աւետարանի ճշմարիտ պաշտօնեայ, Նորա  
հեղինակին նման հալածեալ ու լքեալ, Քրիս-  
տոնէութեան առաքինութեանց կենդանի տի-  
պար, ճշմարտութեան վեհ ախոյնան, աղաս-  
տութեան քաջալանջ զինուոր և մարդկութեան  
մեծ բարեկամ մը եղած է նա :

Ճնկերութեան մէջ տիրող աղէտք, հը-  
զօրին ոտից տակ կոփոտեալ տկարին աղաս-  
դակներն, անիրաւին ճիրանաց տակ տանջուող  
թշուառին ողբերը, սոսկայի անհաւասարու-  
թեանց տեսարանը, իրաւանց դէմ եղած

զրկանքը, Ընկերային անդարոյականութիւնը  
'ի մի բան, Զարիքն՝ իւր ամեն երեւութից  
տակ՝ նորա մեծ ու զգայուն հոգին խորին  
արդահատանօք ու բուռն զայրութիւն լցած է:

Այս արդահատանօքն ու այս զայրութը  
գուրս ժայթքած է Լամընէ այս սքանչելի  
գրքին մէջ՝ որ իրաւամբ իւր գլուխ—զործոցը  
կը համարուի :

Լամընէ ժողովրդեան կը նուիրէ իւր  
գիրքը։ Գիտէ թէ ճշմարտութեան սերմնն  
աւելի դիւրեաւ կը բողըրոջի Ընկերութեան  
նախնական խաւերուն մէջ, ժողովրդեան կոյս  
հողուն վրայ, և թէ զընկերութիւնը վերա-  
շնելու համար՝ նախ սիէտք է նորա սիրալ  
բուժել և աղնուացնել,

Ուստի առ այն կը գիմէ և կը խօսի առ  
նոր հետ իւր իրաւանց ու պարտուց, իւր  
աղիտից ու վշտաց, իւր յօյսերուն և ապա-  
գայ ճակատագրաց վրայ :

Ճշմարտութեան պարզ և անաշառ լեզ-  
ուովլը կը բայցարէ, ինչ որ ջանացինք նա-  
խորդ հատուածոց մէջ համառօտել, մարդ-  
կային սեռին սրբազն իրաւունքները, բնու-

թեան Ասառւածային ու յաւիտենական օրէնք  
ները և Աւետարանի վանմ ճշմարտութիւնները  
որք սոյն օրինաց արտայայտութիւնքն են .  
կը նկարէ հանձարէն ներշնչեալ գրչով մը ա-  
ղէսներն՝ որք հետևեցան սոյն օրինաց զեղ-  
ծուններէն , փորձերն ու տարսամ իղձերն՝ որք  
զներկայն կը յուղեն , և դայն մեծ ու երա-  
նուէտ ապագայն՝ յորում սիփի վայելեն  
ժողովուրդք՝ որք Աւետարանի ոգւով պիտի  
վերածնին :

Իւր խօսքը , անոր նման , կը լուսաւորէ ,  
կը մխիթարէ , կը յուսայնէ :

Սակայն այս խօսքը ո՛րքան սպարզ ա՛յն-  
քան վաեմ է , և թէ երբեմն իրեւ զշաղ հե-  
ղիկ կը ցօղէ , է զի իրեւ զշանթ կը շացէ և  
կը կայծակէ լի զայրացմամբ նոյա դէմ որք  
աշխարհի խաղաղութիւնը եղծած ևս զժո-  
ղովուրդս թշրւառացոցած են :

Մերթ , իրեւ իմաստուն ծերունի մը իւր  
մատաղ սերունդէն շրջապատեալ , անսեթեեթ  
լեզուով ու երբեմն առակներով իմաստութիւնը  
կուսուցանէ ժողովրդեան և կը քարոզէ անոր  
դարդարութիւնն ու սէրը և մերթ , զերթ նոր

ամն Յսայի , կը թողու ներկայն ու կը յափրշ-  
տակուի ապագայ ժամանակաց խորը , և դոդ-  
ցես խորհրդաւոր ամպի մը մէջէ , հրեղէն  
շրթամբ յօյս և ահ միանդամայն կը տեղայ  
մահկանացուաց վերայ :

Իւր ոճը բանաստեղծական է , և թէ և  
արձակ , բայց իւր մէջ երբայական քերթուա-  
ծոց չափին նման տեսակ մը չափ ունի՝ որ  
մասնաւոր գեղեցկութիւնը ու ներդաշնակութիւն  
մը կը յաւելու սոյն անմահ դրուագաց վրայ :

Երջանիկ եմք որ իննեւտաններորդ դա-  
րու այս մեծ ձայնին արձագանքը կըլլամք  
մեր ազգին մէջ : Աամընէ առ ժողովուրդն  
նոտիրած է զայս զիրքը . ուռափի մէք ալ նո-  
րա թարդմանութիւնը կը նոտիրեմք առ հայ  
ժողովուրդն :

Խիմ թէ նա , որ ժողովրդոց գուցէ ու-  
մենէն չորաբաստիկն եղած է , այս զիրիս  
մէջ կարենար ստանալ սիրոյ և եղայրութեան  
սոյն վաեմ ոգին որ միայն կրնայ անկեալները  
կանգնել և զայինս երանաւետել :

ԱՌ ԺՈՂՈՎՐԴԻՐԴՆ

Այս գիրքը գլխաւորապէս ձեզ համար  
շինուեցաւ . առ ձեզ կը նուիրեմ դայն :  
Եցի՞ւ , այնքան չարեաց մէջ՝ որք ձեր բաժի-  
նըն են , այն ցաւոց ու տառապանաց մէջ՝  
որք զըեթէ անդուղ զձեզ կը ճնշեն , Դյուզն  
ինչ ողի և միսիթարութիւն ընծայէր ձեզ :

Դուք՝ որ օրուան ծանրութիւնը կը կը-  
րէք , կը փափաքէի որ այս գիրքը ձեր վաս-  
տակաբեկ ու թշուառ հոգւոյն համար նոյնն  
ըլլար ինչ որ , ցորեկ ատեն , դաշտի մանկիւ-  
նը , ծառի մը ստուերը՝ որքան փոքր ալ-  
լլլայ՝ է անոր համար՝ որ առաւոն ՚ի բուն  
աշխատած է արեւուն հրատապ ճառագայթից  
ներքեւ :

Դուք չարաշուք ժամանակներու մէջ լ'ապ-  
րիք , այլ այս ժամանակները սիսի անցնին :

Դառնաշունչ ձմերւան խստութիւններէն  
յետոյ , Նախախնամութիւնը հեշտ եղանակ  
մը կը բերէ , և փոքրիկ թոշունը իւր դաշտաց

մէջ կ'օրհնէ զայն բարերար ձեռնը՝ որ չնորսէց իրեն կրկին և՛ ջերմութիւնը և՛ առատութիւնը, և՛ իւր ընկերը և՛ իւր անուշիկ բոյնը: Յուսացէ՛ք և սիրեցէ՛ք:

Յոյսը զամեն ինչ կը քաղցրացնէ, և սէրը դիւրին կը գործէ ամեն բան:

Այս պահուա մէջ կան մարդիկ՝ ոյք կը վշտակին յոյժ, վասն զի յոյժ զձեղ սիրեցին: Ես, նոյցա եղբայրը, անոնց ձեղ համար ըրածներուն և ուղիներուն այս պատճառաւ նոյցա դէմ գործածներուն պատմութիւնը դըրեցի. և երբ բոնութիւնն ինքնին մաշի, սիսի հրատարակեմ զայն, և յայնժամ նուազ դառն արտասուօք սիխոփ կարդաք զայն, և դուք ևս պիտի սիրէք այս մարդիկը՝ որք այնքան զձեղ սիրեցին:

Հիմայ, եթէ ձեղ անոնց սիրոյն ու տառապանաց վրայ խօսէի, զիս ևս նոյցա հետքանոերու մէջ կը նետէին:

Ցնծալից կիջնէի հոն, եթէ այնու ձեր թշուառութիւնը կարենար դոյզն ինչ ամոքիլ. բայց որովհետու ի՞նչ որ է՝ նոյնը սիխոփ ըլլայ դարձեալ, անոր համար սպասել և աղաչել

հարկ է Աստուծոյ՝ որ փորձը կարճէ:

Հիմայ, մարդիկ կը գատեն և մարդիկ կը գատապարտեն. ընդ հուպ նա՛ պիտի դատէ: Երանի՛ այնմ՝ որ նորա արդարութիւնը սիխոփ տեսնէ:

Ծերունի եմ ես. միտ դի՛ք ալւորի մը խօսքերուն:

Երկիրը տխուր և գոսացեալ է, բայց կանաչալարդ սիխոփ պճնուի վերսափն: Զարին շունչը հրակէղ հողմոյ նման չպիտի անցնի յափտեան անոր վրացէն:

Խնչ որ կ'ըլլայ, նախախնամութիւնը կուզէ՝ որ ըլլայ ձեր հրահանդմանն համար, որպէս զի սովորիք բարի և արդար ըլլալ՝ երբ ձեր ժամն համնի:

Երբ անմնք՝ որք իշխանութեամբ կը զեղծանին՝ անցնին երթան ձեր առջևէն մրրկաւ յոյզ օրուան մը մէջ վտակաց տղմին նման, այն առեն սիխոփ հասկնաք թէ բարին միայն սկական է, և պիխոփ վախնաք պղծելու ոդը՝ գոր երինացին հողմը սիխոփ որբէ:

Պատրաստեցէ՛ք ձեր հոգիները այս ժամանակին համար, զի հեռու չէ այն, կը մերձի:

Ձեզ համար խաչուած Քրիստոսն զձեզ  
փրկել խոստացաւ :

Հաւատացէք իւր խոստման , և , անոր  
կատարումը փութայնելու համար , վերաշի-  
նեցէք ինչ որ սկզբ ունի վերաշնման , վար-  
ժեցէք ամեն առաջինութեանց մէջ , և սիրե-  
ցէք զիրեար ինչպէս մարդկային սեռին Ազա-  
տարարն զձեզ սիրեց , ցմա՛հ :

Այս ժամանակ գումար պատճեն պարագան

այս ժամանակ պատճեն պարագան

## ԲԱՆՔ

### ՀԱԻՍԱՅԵԼՈՅ ՈՒՐՈՒՔ

Ա.

Յանուն Հօր և Արդւոյ և Հոգոյն Արբոյ  
Ամեն :

Փա՛ռք Աստուծոյ Երկնից բարձրութեանց  
մէջ և խաղաղութիւն Երկրի Վրայ բարեսկրտ  
մարդոյ :

Թո՛ղ նա՝ որ ականջ ունի՝ լսէ . և որ  
աչք ունի՝ բանայ՝ զայնա ու նկատէ , վասն  
զի ժամանակները կը մօտենան :

Հայրը ծնաւ զիւր Որդին , իւր Բանը ,  
և Բանը մարմին եղաւ , և մեր մէջ ընակեցաւ .  
և յաշխարհ եկաւ , և աշխարհ դնա շճանչեց :

Որդին խոստացաւ զրկել միիթարիչ Հո-  
գին , Հոգին՝ որ ՚ի Հօրէ և յՈրդւոյ կը բղիի ,  
և որ նոցա վոխաղարձ ոչըն է . պիտի գայ  
ու պիտի նորոգէ Երկրիս Երեսը , և այս իրը

Երկորդ արարչագործութիւն մը սկսակի ըլլաց :  
Տասն և ութ դար է որ Բանն աստուածային սերմնը ցանեց, և Սուրբ Հոգին զայն բեղմնաւորեց : Մարդիկ անոր ծաղկիլը տեսան, ճաշակեցին անոր պառուղները, իրենց թշուառ օթևանին մէջ միւսանդամ տնկուած կենաց ծառին պառուղները :

Կ'ըսեմ ձեզ, մեծ ուրախութիւն մ'եւ զաւ անոնց մէջ՝ երբ լուսոց ծագումնը տեսան, և երկնային հրով մը վառ զգացին զինքեանաւ Հիմայ երկիրը վերատին խաւարին ու ցուրտ եղաւ :

Մեր հայրերը արեւուն խոնարհիլը տեսան : Երբ նա հորիզոնէն վար իջաւ, բովանդակ մարդկային սեռը սարսուաց : Յետոյ այս Էգիշերուան մէջ չեմ գիտեր ո՛ր պիսի բան մ'եղաւ՝ որ անուն չ'ունի : Որդի՛ք գիշերայ, Արեւուտաքը սե ու մութ է, բայց Արեւելք լրջանալ կ'սկսի :

Բ.

Ունկն դի՛ք, և ըսէ՛ք ինձ ուստի՛ կուգայ այս շփոթ, անորոշ ու տարօրինակ աղմուկը որ յամենուատ կը լսեի :

Զեռք դրէ՛ք երկրիս վրայ, և ըսէ՛ք ինձ ինչու սարսուաց : Բան մը՝ զոր չդիտեմք կը յուզի աշխարհի մէջ . Աստուծոյ մէկ աշխատութիւնը կայ հոն :

Միթէ ամեն ոք սպասման մէջ չ' . Կա՞յ սիրու մը՝ որ չտրոփէ : Որդի մարդոյ, ե՛լ ՚ի բարձունս, և յայտնէ՛ ինչ որ կը տեսնես : Հորիզոնին վրայ կապուտակ ամպ մը կը տեսնեմ, և շարլանակի շառագոյն լոյս մը հրդեհի մը ցոլացման նման :

Որդի մարդոյ, ի՞նչ կը տեսնես տակաւին : Կը տեսնեմ որ ծովէ իւր ալիքները վեր կը վերցնէ, և լերինք իրենց կատարները կը շարժեն :

Կը տեսնեմ որ գետք իրենց ընթացքը կը փոխեն, բլուրք կ'երերին, և կործանելով ձուրերը կը լնուն :

Ամեն ինչ կը դդրդի, ամեն ինչ կը շարժէի, ամեն ինչ նոր երեսյթ մը կ'առնու :

Որդի մարդոյ, ի՞նչ կը տեսնես տակաւին :

Հեռուն վրայ մրցկացոյ ամպեր կը

ուեսնեմ, որք ամեն տեղ կը սփռին, յիրեար  
կը բաղիսին, և յիրեար կը խառնուին : Քա-  
ղաքաց վրայէն կ'անցնին, և, նոյս անցնելն  
յետոյ միմիայն դաշուլ կը տեսնուի :

Կը տեսնեմ որ ժողովուրդք յոտն կ'ել-  
չեն խառնայզ և խառնաշփոթ, և թագա-  
ւորք իւրեանց թագին ներքեւ կը տժդունին :  
Պատերազմ մը կայ նոյս մէջ, կատաղի ու  
արիւնոււշ պատերազմ մը :

Կը տեսնեմ մէկ գահ երկու գահ խոր-  
տակուած, և ժողովուրդք նոյս բեկորքն եր-  
կիս վրայ կը ցրուեն :

Կը տեսնեմ ժողովուրդ մը՝ որ կը կռուի  
ինչպէս Հրեշտակապետն Սիքայէլ կռուեցու  
Սասուանին դէմ: Իւր հարուածները սոսկալի  
են, բայց մերկ է, և իւր օսերիմը թանձր  
զրահ մը հագած է :

Ո՞վ Ասուած • կ'իյնայ • ՚ի մահ խոյե-  
նաւ: Ո՞չ, վիրաւորուեցաւ միայն • Մարիսի,  
Կուսամացը, զայն իւր վերարկուովը կը պա-  
տէ, կը ժապտի անոր, և առ վայր մի զայն  
ճակատին դուրս կը տանի:

Կը տեսնեմ ուրիշ ժողովրդեան մը ահ-

դուշ անդադար մարտնչիլն ու վայրկեան առ  
վայրկեան այս մրցման մէջ նոր ոյժ և կորով  
ստանալը: Այս ժողովուրդը սրտին վրայ Քը-  
րիստոսի նշանն ունի:

Կը տեսնեմ երրորդ ժողովուրդ մը՝ որոյ  
վրայ վեց թագաւորք ուոք դրած են, և ա-  
մեն անդամ որ շարժում մը կ'ընէ, վեց դա-  
շոյն իւր վիզը կը միմին:

Լայնաստրած շինուածի մը վրայ, օդոց  
մէջ մէծ բարձրութեան մը ծայրը, խաչ մը  
կը տեսնեմ՝ զոր հաղիւ հաղ կ'որոշեմ, վասն  
զի սկավթոյը քօղով մը ծածկուած է:

Ոգի մարդոյ, ի՞նչ կը տեսնես տակալին:  
Կը տեսնեմ Սրմելքը՝ որ ինքն յինքեան

կը խռովի: Կը նկատէ իւր հինաւուրց տաղարանից կործա-  
նել նկատէ իւր հինաւուրց տաղարանից աւերը և ա-  
նումը, իւր վաղեմի տաճարաց աւերը և ա-  
նումը կը բարձրացնէ իրու թէ ուրիշ մէծու-  
թիւններ և ուրիշ Աստուած մը վինտուելու  
համար:

Կը տեսնեմ դէմ յԱրևմուտս կին մը խը-  
րոխտ աչով և պայծառ հակառով. հաստատ  
ու աներեր ձեռքով մը թեթև ակոս մը կը

զծէ , և ուր որ խոփը կ'անցնի , հո՞ն մարդկային սերնդոց ենել կանգնիլը կը տեսնեմ՝ որ իրենց աղօթից մէջ զայն կը կարդան և իրենց երգոց մէջ զայն կ'օրհնեն :

Ի չւսիս մարդիկ կը տեսնեմ՝ որք ա՛լ միմիայն իրենց գլխուն մէջ կեղրոնացած ջերմութեան մնացորդ մ'ունին՝ որ զանոնք կը դինովէ . բայց Փրիստոս իւր խաչովը կը դըալի անոնց ; և սիրոը բարախել կ'սկսի :

Կը տեսնեմ 'ի Հարաւակոյս ցեղեր չզիտեմ ինչ անձից տակ ճնշուած գլխի կոր . ծանրակիր լուծ մը զայնա կ'ընկճէ , կը քայշեն կորաքամակ . բայց Փրիստոս կը զպչի անոնց իւր խաչովը , և կը կանգնին ուղղաբերձ :

Որդի մարդոյ , ի՞նչ կը տեսնես տակաւին :

Չպատասխաներ բնաւ . կրկին գուշնք :

Որդի մարդոյ , ի՞նչ կը տեսնես :

Կը տեսնեմ Սատանը՝ որ խոյս կուտայ ,

և դՓրիստոս շրջապատեալ իւր հրեշտակներէն որ թագաւորել կուգայ :

Գ .

Եւ մտօք սարուեցայ հին ժամանակաց մէջ , և երկիրը գեղեցիկ , ճռիս և արգասաւէտ էր . և իւր բնակիչները երջանիկ կ'ապրէին , վասն զի իրը եղբայր կ'ապրէին :

Եւ տեսայ օձը՝ որ կը սողոսկէր նոցա մէջ . շատերու վրայ իւր հզօր հայեցուածքը յառեց , և անոնց հոգին խռովեցաւ , և մօտեցան , և օձը անոնց ականջն ի վայր խօսեցաւ :

Եւ օձին խօսքը մտիկ ընելէ յետոյ , յոտն կացին և ըսին . «Թագաւոր եմք մեք : »

Եւ արել մթագնեցաւ . և երկիրը մահաշուք գոյն մ'առաւ , մեռեալները պատող պատանին նման :

Եւ խուլ մրմունջ մը , երկայն տրոտոնջ մը լուռեցաւ , և իւրաքանչիւր ոք իւր հոգւոյն մէջ դողաց :

Ճշմարտիւ , կ'ըսեմ ձեղ , այն օրուան նման եղաւ՝ յորում անդունդն իւր թումբերը խորտակեց և յորում գեղեալյորդեցաւ յերկիր ջրհեղեղն ահեղասաստ :

Երկիւղը հիւղէ 'ի հիւղ դնաց , վասն զի

դեռ պալատք չկային, և ըստու իւրաքանչիւր  
մարդոյ այնպիսի գաղանի բաներ՝ որք զայն  
սարսուայուցին :

Եւ նորք որք ըստած էին՝ « Թագաւոր եմք  
մեք », սուր առին, և Երկիւղին ետևէն  
գային տնակէ ՚ի տնակ :

Եւ անոնց մէջ տարօրինակ գաղանիքներ  
տեղի ունեցան . և եղան շղթայք, արտասուք  
և արին :

Մարդիկ գոչեցին սարսափմամբ : « Սպա-  
նութիւնը նորէն աշխարհի մէջ երեցաւ : »,  
Եւ այս եղաւ իրենց բոլոր խօսքը, վասն զի  
Երկիւղը իրենց հոգին ընդարմացուցած և ի-  
րենց բազուկներն անխլիբատ ըրած էր :

Եւ թողուցին որ շղթայեն զիրենք, իրենց  
կանայքն ու որդիքը : Եւ անոնք՝ որ « Թագաւ-  
որ եմք մեք », ըստած էին, իրբւ մեծ անձաւ  
մը փորեցին և հռն փակեցին բովանդակ մարդ-  
կային ազգը, ինչպէս անասուններ կը փակեն  
դոմի մը մէջ :

Եւ փոթորիկը ամպերը կը վանէր, և ու-  
րուսումը կը գոռայր, և լսեցի ձայն մը՝ որ կ'ը-  
սէր . « Օձը յաղթեց երկրորդ անդամ, բայց  
ոչ ընդ միշտ մը » ;

Յետ այսորիկ, ուրիշ բան չլսեցի բայց  
եթէ խառնաշխոթ ձայներ, ծիծաղներ, հեծ-  
կըստնք, հայհոյութիւնք :

Եւ հասկցայ թէ Աստուծոյ թագաւորու-  
թենէն յառաջ Սատանի թագաւորութիւն մը  
ըլլալու էր : Եւ լացի ու յուսացի :

Եւ տեսիլը՝ զոր տեսի ճշմարիտ էր, վա-  
սըն զի Սատանի թագաւորութիւնը կատար-  
ուեցաւ, և Աստուծոյ թագաւորութիւնն ալ  
պիստի կատարուի . և անոնք՝ որ լսին՝ « Թա-  
գաւոր եմք մեք », իրենց կարդին պիտի փակ-  
ուին այրին մէջ օձին հետ, և մարդկային սե-  
ռը դուրս ոլիտի ելնէ անտի . և այս իրեն  
համար իրը երկրորդ ծնունդ մը, իրը մահ-  
ուանէ ՚ի կեանս փոխանցում մը պիտի, ըլլայ չ  
եղ իցի :

Դ.

Դուք մի և նոյն հօր դաւակներ էք, և  
մի և նոյն մայրն զձեղ զիւցոյց . ինչո՞ւ ուրե-  
մըն եղբարց նման զիրեար չէք սիրեք, և  
ինչո՞ւ մանաւանդ իրը թշնամի միմեանց հետ  
կը փարուիք :

Նա՞ որ իսր եղբացը չփրեր՝ եօթնիցս  
անիծեալ է, և որ ոփերիմ կը լսյ իսր եղ-  
բօրը՝ եօթանառուն անգամ եօթնիցս անի-  
ծեալ է :

Ահա՛ ասոր համար թագաւորք և իշխանք  
և բոլոր անոնք՝ զորս աշխարհ մեծ կը կոչէ՝  
անիծուեցան . չփրեցին իրենց եղբարքը, և  
անոնց հետ՝ իբր թշնամիներու՝ վարուեցան :

Միրեցէ՛ք զիրեար, և ոչ մեծերէ, ոչ  
իշխաններէ, ոչ թագաւորներէ երկիւղ պիտի  
ունենաք :

Անոնք ուրիշ բանով դօրաւոր չեն ձեղ  
դէմ՝ բայց միայն վասն զի դուք մի չք և  
զիրեար չք սփրեր իբր եղբացը :

Մի՛ ըսէք երբէք . “Նա որիշ ժողո-  
վուրդէ է և ես ուրիշ : ” Վասն զի բոլոր ժո-  
ղովուրդները մի և նոյն հայրն ունեցած են  
յերկրի, որ է Ադամ, և մի և նոյն հայրը  
յերկինս, որ է Աստուած :

Եթէ մէկ անգամին զարնեն, բոլոր մար-  
մինը ցաւ կզգայ : Դուք ամենք մի մարմին  
էք . անկարելի է ձենէ մին կեղերել առանց  
առենքող կեղերուելու :

Եթէ գայլ մը հօտի մը վրայ նետուի,  
դայն ամբողջասկս չի լսփեր իակոյն . ոչխար  
մը կը բռնէ և դայն կուտէ . յետոյ նորէն  
քաղցելով, ուրիշ մ'ալ կառնու և կուտէ .  
և այսպէս մինչւ վերջինը, որովհետեւ իսր  
քաղցը միշտ կը նորոգի :

Մի՛ ըլլաք ոչխարաց նման՝ որք, երբ  
դայն իրենցմէ մին կը յափշտակէ, վայբ-  
կեան մը կը մարսափին և յետոյ ճարակիլ  
կ'սկսին : Որովհետեւ կը մտածեն թէ թերես  
առաջին կամ եկրորդ որոտ մը գոհ կ'ըլլայ .  
և ի՞նչ փոյթ ինձ անհանգիստ ըլլալու անոնց  
համար՝ զորս կը լսփէ . ի՞նչ վեաս ինձ . ա-  
սով ինծի աւելի խոտ կը մնայ :

Մտուդիւ կ'ըսեմ . Անոնք՝ որ իրենց սըր-  
տին մէջ այսպէս կը խորհին՝ արեամք և շաղ-  
դով անող գաղաճին ճարակ ըլլալու սահ-  
մանուած են :

Ե

Երբ ՚ի բանտ կամ ՚ի տանջանա առաջ-  
նորդուած մարդ մը կը տեսնէք, մի՛ աճա-  
պարէք լուել, “Չար մարդ մ'է սա որ մար-

գոց դէմ ոճիր մը գործած է : «

Վասն զի թերևս բարի մարդ մ' է որ  
մարդկան ծառացել ուղած և նոյս հարստահա-  
րիչներէն պատուհասուած է :

Երբ կը տեսնէք շղթայակառ ու գահնին  
ձեռքը յանձնուած ժողովուրդ մը, մի՛ փու-  
թաք ըսել, « Այդ ժողովուրդը բուռն ժո-  
ղովուրդ մ'է որ երկրի խաղաղութիւնը վրա-  
ւալել կուզէք :

Վասն զի թերևս մարտիրոս ժողովուրդ  
մ' է այն, որ մարդկային տեսին փրկութեա-  
նըն համար ՚ի մահ կը մատնոի :

Ութեատան դար յառաջ՝ Արևելից մէկ  
քաղքին մէջ, ժամանակին քահանայալետա-  
ներն ու թագաւորները, գաւազաններով գա-  
նահարելէ յետոյ, խաչի մը վրայ գամեցին  
մոլորեցուցիչ մը, հայհոյիչ մը, ինչպէս որ  
կը կոչէին զայն :

Նորա մահուան օրը դժոխոց մէջ մեծ  
սակումն և երկնից մէջ մեծ ուրախութիւն  
եղաւ :

Վասն զի արդարին արիւնը զաշխարհ  
փրկած էր :

Զ .

~~105-20/5~~ Ինչու անսառւնք, իւրաքանչիւրն իր տե-  
սակին համեմատ, իրենց սնունդը կը գըտ-  
նեն : — Վասն զի ոչ ոք 'ի նոյանէ ուրիշի  
ճարակը կը գողնայ, և իւրաքանչիւրն իրեն  
պիտոյից բաւական եղածովը կը շատանայ :

Եթէ՝ փեթակի մը մէջ, մեղու մը  
ըսէք. Հոս եղած բողոք մեղըն իմս է . և  
սկսէք ըստ իւր քմաց հասարակաց աշխատու-  
մական արդիւնքը գործածել իբրև միակ տէլ,  
բոնչ կ'ըլլային միւս մեղուները :

Երկիրն իրրև մեծ փեթակ մ'է, և մար-  
դիկ մեղուներու նման են :

(3) Անցնիւր մեղու իրաւունք ունի իւր սը-  
նընդեան կարևոր եղած մեղը բաժնին, և  
եթէ մարդոց մէջ կան այնպիսիներ՝ որք այս  
կարեւորէն զուրկ են, սպատճառն այս է որ  
արդարութիւնը և գութը անոնց մեջէն ան-  
հետ եղած են:

Արդարութիւնը կեանք է . և գութը  
դարձեալ կեանք, բայց աւելի անոյշ ու առա-  
տազեղ կեանք. <sup>ՀԱՅՐԱԿԱ ԳՐԱԴԱՐԱՆ</sup>  
ՀԱՅՀ-ՍՈՐԱ.



Նշան սուտ մարդարէներ՝ որք հաւատացուցին մէկ քանի մարդոց թէ բոլոր ուրիշներըն իրենց համար ստեղծուած էին . և սոցահաւատապայծին միւսներն ալ հաւատ ընծայեցն սուտ մարդարէից խօսքին վրայ :

Երբ այս սոսապատիր խօսքն յաղթանաշկեց , հրեշտակները լացին երկնից մէջ . վասն զի նախատեսեցին թէ բազում բռնութիւնքը բազում ոճիրը և բազում չարիք պիտի յորդեալ հեղեղէին յերկիր :

Մարդիկ , որ հաւասարք են իրենց մէջ , մի՛ միսյն Աստուծոյ համար ծնած են , և ո՛վ որ հակառակ բան մը կըսէ , կը հայհոյէ :

Ո՛վ որ մեծ ըլլալ կ'ուզէ ձեր մէջ , ըլլայ ձեր ծառայն . և ո՛վ որ ձեր մէջ առաջին կ'ուզէ ըլլալ , ամենուդ սպասաւորը թո՛ղ ըլլայ :

Աստուծոյ օրէնքը սիրոյ օրէնք մ'է , և սէրը երմէք այլոց վրայ չբարձրանար , այլ ինքը ինքը կը զոհէ այլոց :

Այն որ կ'ըսէ իւր սրտին մէջ . Ես ուրիշ մարդոց պէս չեմ , այլ ուրիշ մարդիկ ինձ տրուեցան որ հրամայեմ ես անոնց , և ըստ

հաճոյից գանոնք ու ինչ որ անոնցն է՝ գործածեմ , նա Սատանի որդին է :

Եւ Սատան այս աշխարհի թագաւորն է , որովհետեւ բոլոր անոնց թագաւորն է՝ որք այսպէս կը խորհին և կը գործեն , և նուքա՞ որք այսպէս կը խորհին ու կը գործեն , անոր խորհուրդներովն աշխարհի տէրերն եղած են :

Բայց նոցա իշխանութիւնը ժամանակի մը միայն պիտի տևէ , և այս ժամանակին վախճանը մերձ է :

Մեծ պատերազմ մը պիտի մղուի , և արդարաւթեան հրեշտակն ու սիրոյ հրեշտակը մարտակից պիտի ըլլան անոնց հետ՝ որ պիտի զինուին՝ մարդոց մէջ արդարութեան և սիրոյ թագաւորութիւնն հաստատելու համար :

Եւ շատեր այս կոռուցն մէջ պիտի իյնան , և իրենց անունը պիտի մնայ երկրի վրայ իբրեւ Աստուծոյ փառաց մէկ ճաճանչը :

Ահա ասո՛ր համար , ո՛վ տառապեալք և վշտահարք , խրախոյս առէ՛ք և ձեր հոգիքն ամբապնդեցէ՛ք . քանզի վաղը փոքչի օրը պիտի ըլլայ , այն օրը՝ յորում իւրաքանչիւր ոք ուրանութեամբ իւր կետնը ըստարդիտալ իւր եղբարք

համար . և յաջորդ օրը՝ օր փըրկութեան ։  
Ե .

Երբ ծառ մը միակ է , հողմակոծ կըտա-  
րուքերի և իւր տերեւներէն կը մերկի . և իւր  
սատերը , փոխանակ բարձրուղէշ ամբառնա-  
լու , կը խոնարհին՝ իրրու թէ գետինը իպնդ-  
րէին :

Երբ տունկ մը առանձին է , արեւուն տա-  
պոյն դէմ անպատճար մնալով . կը թօշնի՝ կը  
ցամքի և կը մեռնի :

Երբ մարդն անոք է , իշխանութեան հող-  
մը զայն դէպ յերկիր կը ծոէ , և աշխարհիս  
մեծամեծաց ցանկութեան ու զօշաքաղութեան  
տենչը . կը չորցնէ զայն սնուցանող հիւթը :

Մի՛ ըլլաք ուրեմն երբէք այն տնկոյն և  
այն ժառին նման՝ որք առանձին են . հապա-  
միացէ՛ք իրարու , յիրեար կըթնեցէ՛ք և փոխա-  
դարձաբար նեցուկու ապաւէն եղի՛ք միմեանց :

Երբ բաժանեալ ու անջատ ըլլաք և  
անցնիւր անհատ յինքն և եթ խորհի , չունիք  
այլ ինչ ի յուսալ , բայց տառապանք , և ա-  
զէտ , և կեղեցումն :

Ի՞նչ կայ տկար քան զննձլուկն , և քան  
դիմառն անզէն : Սակայն երբ զիշտիշ թըլո-  
շոնը կ'երեկի , ճնճղուկներն ու ծիծառունք  
կը յաջողին զայն վանել , անոր շորջը ժո-  
ղովելով և միահաղոյն զայն հալածելով :

Որինակ ըլլան ձեզ ճնճղուկն ու ծիծառոնը :  
Ով որ իւր եղբայրներէն կը բաժնուի ,  
երկիւղն ու ահը կը հետևեին անոր՝ երբ կը-  
քայլէ , անոր քով կը նատին՝ երբ հանգիստ  
կ'առնու , և քնոյն մէջն իսկ անբաժան են  
անկէ :

Աւրեմն , եթէ հարցնեն ձեզ . “ Քանի՞  
անձն էք . պատասխանեցէք ” , մի եմք , վասն  
դի մեք և մեր եղ բարքը մի և նոյնն եմք : ”

Աստուած չստեղծեց ո՛չ փոքր ո՛չ մեծ-  
ո՛չ տէր ո՛չ սորուկ , ո՛չ թագաւոր ո՛չ հը-  
պատակ . նա զամեն մարդիկ հաւասար ըրտւ ։

Բայց , մարդոց մէջն ոմանք աւելի ոյժ-  
ունին մարմնոյ , կամ մասց , կամ կամաց՝ և  
անոնք են որ կը չանան զայլ իրենց կըպա-  
տակներ , երբ ամբարտաւանութիւնը կամ  
ցանկութիւնը խեղզեն նոյա սրտին մէջ իւր-  
եանց եղբարց ուրբ :

Եւ Աստուած գիտէր որ այսպէս պիտի  
ըլլար, և ահա՛ ասոր համար պատուիրեց մար-  
դոց զիրեար սիրել, որպէս զի մի ըլլան,  
և տկարք հզօրաց ճնշման ու կեղեզման չեն-  
թարկին :

Վասն զի նա՞ որ զօրաւոր է քան զմի,  
տկար է քան զերկուս . և նա՞ որ զօրաւոր է  
քան զելկուս, տկար է քան դջոր . և այս-  
պէս անզօրք բնաւ բանէ մ'երկիւղ չպիտի  
ունենան, եթէ զիրեար սիրելով՝ ճշմարտիւ  
միացած ըլլան :

Մարդ մը լերան մէջ կը ճանապարհոր-  
դէր, և հասաւ այնպիսի տեղ մը՝ ուր յաղթ  
ժայռ մը ճամբան վրայ գլորած՝ զայն բո-  
լորովին գոցած էր՝ և ճամբէն դուրս չկար  
այլ ելք ո՛չ յաջ և ո՛չ յահեակ :

Արդ, այս մարդը՝ տեսնելով որ ժայռն  
արգելք կ'ըլլար իրեն իւր ճամբան շարու-  
նակելու, իրեն անցք մը բանալու համար,  
զայն շարժելու փորձ փորձեց, և շատ յոգ-  
նեցաւ այս աշխատաւթեանը մէջ, և անօդուու-  
ու ապարդին եղան իւր բոլոր ճգոնքը :

Զայս տեսնելով, նստեցաւ լի թաղժու-

թեամբ . և ըստա . “ ի՞նչ պիտի ըլլայ ինձ  
երբ զիշերը դայ հասնի այս միայնութեան  
մէջ անսնունդ, անապատան, անպատս-  
պար, ՚ի ժամուն՝ յորում վայրի դազանք իրենց  
որսը ինոռելու համար դուրս կ'ելնեն իրենց  
որջերէն :

Եւ երբ այս մտածման մէջ խորապեզ-  
եալ կայր, ահա ուրիշ ուղելոր մի ևս եկաւ,  
և սյս ալ առաջնոյն ըրածն ընելէ և ժայ-  
ուը շարժելու անկարողութիւնը տեսնելէ յե-  
տոյ, նստաւ լոիկ և հակեց ճակատը :

Ասկէ վերջը, շատ ուրիշեր ալ եկան,  
և ոչ մէկը կրցաւ շարժել զայն պարեխը . և  
ամենուն երկիւղն ու անձկութիւնը մեծ էին ու  
ասատիկ :

Հուսկ ուրեմն անոնցմէ մին ըստա միւս-  
ներուն .

Եղ բա՛րք իմ, աղօթե՛նք մեր երկնաւոր  
ջօրը, թերևս դթայ մեղ և կարեկցի սյս  
անձկութեան ժամուու մէջ :

Եւ այս խօսքը լսելի եղաւ, և աղաչե-  
ցին ՚ի սրտէ երկնաւոր Հայրը :

Եւ յետ աղօթելոյն, այն՝ որ ըստա էր

Աղօթենք,, ըսաւ նաև՝ Եղբարքիմ, ինչ  
որ՝ ոչ ոք 'ի մէնջ կրցաւ ընել միայնակ, ո՞  
գիտէ չպիտի կրնանք ընել ամենքս 'ի միասին :  
Եւ տոք ելան, և ամենքը միահամուռ  
հրեցին ժայռը, և ժայռը տեղի տուաւ, և  
խաղաղութեամբ իրենց ճամբան շարունակե-  
ցին :

Ուղեւորը մարդն է, ուղեւորութիւնը՝  
կեանքը. ժայռը՝ այն աղէտներն են, որոց  
կը պատահի իւր ճամբուն վրայ մէն միքայ-  
լափիսին :

Բնաւ մէկը չընար միակ այս պարե-  
խը բառնալ, բայց Աստուած անոր ժանրու-  
թիւնն այնպէս իմն՝ չափուծ է որ չկարենայ  
կասեցնել զանոնք՝ ոյք 'ի միասին կ'ուղեւորին :

Ը

Ի սկզբան աշխատութիւնը կարևոր չը  
մարդուն ապրելու համար. երկիրն ինքնին  
կը մատակարարէր անոր պիտոյքը :

Բայց մարդը չար գործեց. և ըստ ո-  
րում ինքը Աստուծոյ դէմ վտարանջած էր,  
երկիրն ալ իրեն դէմ վտարանջեցաւ :

Պատահէցաւ իրեն ինչ որ կը ուանուածի  
իւր հօր դէմ ապատամբող զաւկին. հայրը  
ետ կ'առնու անկէ իւր ուրը և կը լքանէ  
դինքն ինքեան . և տան ծառայները կը մեր-  
ժեն անոր ծառայել, և ինքն աստանդական  
կը թափառի՝ իւր չուառական կենաց ապրուստը  
փնտուելով և երեսաց քրտամբը շահած հացն  
ուտելով :

Այն առունէն ուրեմն, Աստուած զբոլոր  
մարդիկ աշխատութեան գատապարտած է, և  
ամենքն ունին իրենց գործն ու վաստակը,  
թէ մարմոյ և թէ մոքի. և անոնք որ  
կ'ըսեն « Զպիտի աշխատիմ », մարդոց թշուա-  
ռագոյններն են :

Վասն զի ինչպէս որդերը դի մը կը լա-  
փեն, նոյնպէս մոլութիւնները կը կեղեքեն  
այնպիսի մարդիկը և եթէ ո՛չ մոլութիւնք,  
տաղտուկը զանոնք կը կըծէ :

Եւ երբ Աստուած ուզեց որ մարդն աշ-  
խատի, գանձ մը ժածկեց աշխատութեան մէջ,  
վասն զի հայր է, և հօր մը գորովն անըս-  
պառ է և անմեռ :

Եւ այն՝ որ այս դանձը լաւ կերպով կը-

գործածէ և յիմարաբար չծախէր զայն, անոր համար հանդատեան և անդորրու ժամանակ մը կուգայ, և այն ատեն այնպէս կըլլայ ինչ պէս էին մարդիկ 'ի ս'ղբան :

Եւ Աստուած նաև այս պատուէրը տըւաւ անոնց . “ Օդնեցէ՛ք միմիանց , վասն զի ձեր մէջ զօրագոյններ ու տկարագոյններ , ողջեր ու հիւանդներ կան . և սակայն ամենքն ապրելու են :

“ Եւ եթէ այսպիսի ինչ առնէք , ամենքը պիտի ապրին , վասն զի պիտի վարձատրեմ գթութիւնը՝ զոր ցոյց պիտի տաք ձեր եղարց վրայ , և ձեր քիրտն արգասաւոր պիտի ընեմ , :

Եւ Աստուծոյ այս խոստումը ճշգրտուած է միշտ , և երբէ՛ք չէ տեսնուած որ իւր եղարց ձեռնոտու եղողն հաց շունենայ :

Արդ , երբեմն ժանտ ու յերկնից անիծ եալ մարդ մ'եղաւ : Եւ այս մարդը զօրեղ էր , եւ աշխատութիւնը կ'ատէր . այնպէս որ ըստ իւրովի . ինչ ընեմ , եթէ աշխատիմ պիտի մեռնիմ . և աշխատութիւնը անհանդարժելի է ինձ :

Ոյն ատեն դժոխվէն խորհուրդ մը մըսաւ իւր սրտին մէջ : Գիշերայն գնաց և քոնեց իւր եղբայրներէն զոմանա մինչդեռ ՚ի քուն կային , և զանոնք շղթայի զարկաւ :

“ Որովհէետև , կ'ըսէր , պիտի ստիպեմ զիւրենք գաւաղանաւ և խարաղանով ինձ համար աշխատելու , և ես անոնց աշխատութեան պըստուղը պիտի ուտեմ , :

Եւ 'ի գործ ղրաւ իւր խորհուրդը . և ուրիշներ , զայս տեսնելով , նոյնն ըրին , և ալ չեղան եղբարք , այլ տեարք և սորուկը :

Սգատխուր օր մ'եղաւ այս համայն երկրի վրայ :

Երկար ատեն վերջը , եղաւ ուրիշ մարդ մը քան զառաջինն աւելի անզդամ և աւելի անիծեալ յերկնից :

Տեսնելով որ մարդիկ ամեն տեղ բազմաց էին , և թէ իրենց բազմութիւնն անհամար էր , ըստ իւրովի .

“ Կրնայի թերեւս անոնցմէ մի քանիները շղթայել և ինձ համար աշխատելու բռնազրօնել . բայց զանոնք սնուցանել հարկ կ'ըլլայ , և այս իմ շահս կը նուազեցնէ : Կաւագոյն հը-

նարը կայ . թո՛ղ սննդարձ աշխատին . թե՞ս  
պէտ սովամահ կը մեռնին , բայց ըստ որում  
նրացա թիւը մեծ է , մինչև որ նուազի՞ ես  
ինչք և առաջուածք կուտած պիտի ըլլամ , և  
անոնցմէ ալ միշտ բաւական թիւ մը պիտի  
ըլլայ երկրիս վրայ , :

Արդ այս բովանդակ բաղմութիւնն իւր  
աշխատանաց փոխարէն ընդունած վարձովը  
կ'ապրէր :

Նա , զայս օրինակ խօսելէ յետոյ , առանց  
ձինն մօտեցաւ մի քանիներու , և իրենց ըստաւ :

“ Վեց ժամ կ'աշխատիք , և ձեր աշխա-  
տութեան փոխան դրամ մը կուտան ձեղ :

“ Տաներկու ժամ աշխատեց'ք , և անոր  
կրկինը պիտի շահիք , և աւելի զիւրակեաց  
կեանք մը պիտի առնենաք դուք , ձեր կառ-  
չայքն ու ձեր գաւակունքը : ”

Եւ հաւատացին :

Ըստ անոնց յետոյ . “ Դուք տարւոյն  
օրերուն կէմը միայն կ'աշխատիք . տարւոյն  
բազոր օրերն աշխատեցէ՛ք , և ձեր շահը կըրկո-  
նապատիկ պիտի ըլլայ : ”

Եւ դարձեալ հաւատացին :

Արդ ասոր հետեանքն այս եղաւ որ աշ-  
խատութեան քանակութիւնը կիսով չափ ա-  
ւելցած ըլլալով , առանց աշխատութեան  
պէտքն յաւելնալու , յառաջուգոյն իրենց աշ-  
խատութեամբն ապրող մարդոց կէսը ա'լ զի-  
րենք գործածող մը չգտան :

Այն ատեն այրն ժանա՞ որոյ խօսքերուն  
հաւատ ընծայած էին , ըստ իրենց . “ Զեզ  
ամենուդ գործ կուտամ , բայց այսու պայմա-  
նաւ՝ որ մի և նոյն ժամանակ պիտի աշխա-  
տիք և յառաջ վճարածիս կէսը միայն պիտի  
վճարեմ ձեզ . վասն զի կը փափաքիմ թէ և  
ձեզի բարիք ընել , բայց չեմ ուզեր ինքզին-  
քըս ալ կործանել : ”

Եւ ըստ որում նօթի էին թէ՛ իրենք և  
թէ՛ իրենց կանայքն ու որդիքը , չար մար-  
դուն առաջարկութեանն հաւանեցան և օրհ-  
նեցին զայն : “ վասն զի , կ'ըսէին , մեզի  
կեանք կը պարզեէ : ”

Եւ այսու եղանակաւ զանոնք պատրել  
շարունակելով , ժանտ մարդը միշտ անոնց  
աշխատութիւնը յաճախեց և միշտ անոնց վար-  
ձը նուազեցոյց :

ուրեք անկիւն մը հողոյ՝ ուր յերկունս եղաղ  
ձեր կինը կարենայ ծնանիլ իւր անդրանիկը ,  
ուր կարենաք հանդչիլ աշխատութենէ յե-  
տոյ , ուր , երբ ձեր կենաց վերջին կէտն  
համփք , ձնր զաւակունքը կորենան թա-  
ղել ձեր սակորները , իբր ձեզի սեփական  
տեղւոյ մը մէջ :

Ստուգիւ , մեծ աղէտ մ'է այս :

Սակայն և այնպէս , պէտք չէ որ յոյժ  
վշտանայք , վասն զի մարդկային սեռին փըր-  
կէջը գրեց :

Աղուէսն իր որջն տնի և երկնից թլու-  
շունք իւրեանց բոյնը , բայց մարդոյ Որդին  
չունի տեղ մը՝ ուր իր գլուխն հանգուցանէ :

Արդ , աղքատ եղաւ նա որպէսզի աղ-  
քատութեան տոկալ սովորեցնէ ձեզ :

Ոչ եթէ աղքատութիւնը յԱստուծոյ կու-  
գայ , այլ մարգոց ապականութեան և վատ-  
թար ցանկութեանց հետևանքնէ . և ահա այս  
պատճառաւ միշտ աղքատներ պիտի ըլլան :

Աղքատութիւնը մեղաց դուստրն է՝ որոց  
սերմնը յամենայն մարդիկ է , և սոլորկութեան  
որոյ սերմնը յամենայն ընկերութեան է :

Եւ կը մեռնէին ՚ի չդոյէ կարեսորին , եւ  
այլք անոնց տեղն անցնել կը փութային , քան-  
դի չդաւորութիւնն այն աստիճան սաստկացած-  
էր այս երկրիս մէջ , որ ամբողջ բնտանիք-  
ներ զինքեանս կը վաճառէին պատառ մը հաւ-  
ցի համար :

Եւ այրն ժանտօն որ սու՛տ խօսած էր  
իւր եղբարց՝ առաւել ինչք ու ճոխութիւն դիւ-  
զեց քան զայն՝ որ գանոնք շղթայափրկ էր  
ըրած :

Վերջնայն անունն է բռնաւոր , միւսը  
դժոխոց մէջ միայն ունի անուն :

### Թ.

Դուք այս աշխարհի մէջ իրբե օտարաք  
կաներ էք :

Գացէ՛ք ՚ի Հիւսիս և ՚ի Հաքառ , յԱրե-  
սէլս և յԱրեմուտս , ո՞ր տեղն որ կանգ առ-  
նուք , պիտի գտնէք մարդ մը՝ որ գձեղ պիտի  
վանէ անորի ըսելով . “Յայս դաշոն իմն է” :

Եւ ամեն երկիր սոլոտելէ վերջը , յետու  
պիտի դառնաք , դիտնալով թէ չկոյ և ո՛ :

Սիւստ աղքատոներ պիտի ըլլան , վասն  
զի մարդը չպիտի ջնջէ երբէք յինքեան  
մեղքը :

Սիւստ նուազ աղքատոներ պիտի ըլլան ,  
վասն զի տակու առ տակաւ սորկութիւնը  
պիտի անհետի ընկերութեան ծոցէն :

Կ'ուղէ՞ք աշխատիլ աղքատութիւնը ջըն-  
ջելու , աշխատեցէ՞ք ջնջելու մեղքը , նախ  
՚ի ձեզ , ապա յայլը , և սորկութիւնը ընկերու-  
թեան մէջէն :

Ոչ եթէ ուրիշին ինչքը գրաւելով կա-  
րելի է աղքատութիւնը բառնալ . վասն զի ,  
աղքատոներ ընելով՝ ի՞նչպէս կարելի է աղ-  
քատաց թիւը նուազեցնել :

Իւրաքանչիւր ոք իրաւունք ունի պահե-  
լու ինչ որ ունի , առանց որոյ ոչ ոք բան մը  
պիտի ունենար :

Բայց իւրաքանչիւր ոք իրաւունք ունի  
իւր աշխատութեամբն ստանալու ինչ որ չունի,  
առանց որոյ աղքատութիւնը յաւիտենական  
կըլլար :

Աղա՛տ ըրէ՞ք ուրեմն ձեր աշխատութիւ-  
նը , աղա՛տ ձեր բազուկները՝ և աղքատու-

թիւնն ա՛լ ուրիշ բան չպիտի ըլլայ ՚ի մար-  
դիկ՝ բայց եթէ Աստումէն ներուած բացա-  
ռութիւն մը , յիշեցնելու համար անոնց իրենց  
բնութեան տկարութիւնը և այն փոխադարձ  
ձեռնուտութիւնն ու ոէրը՝ դոր պարտին առ  
միմեանո :

Փ .

Միւզգեռ ողջն երկիր փրկութեան ա-  
կընկալեաց մէջ կը հեծէր , ձայն մը բարձրա-  
ցաւ Հրէտաստանէն , անո՛ր ձայնը՝ որ իւր եղ-  
բարց համար չարչարուելու և մեռնելու կուգար ,  
և զոր ոմանք արհամարհանօք Որդի հիւսան  
կը կոչէին :

Հիւսան Որդին ուրեմն , աղքատ և լըք-  
եալ այս աշխարհի մէջ , կ'ըսէր .

“Եկէ՞ք առ իս , գուք ամենքդ՝ որ աշ-  
խատութեան բեռան տակ ոգեսպառ կը թա-  
սիք , և ես զձեղ պիտի ոգեսորեմ” :

Եւ այն ժամանակէն ՚ի վեր մինչև ցայս  
օր , ՚ի նա հաւատացողներէն ո՛չ ոք իւր թըլ-  
ուս ուութեան մէջ անսփոփ ու անմիիթար մնաց :

թուժելու համար չարիքները՝ որ զմարադիկ կը լլկեն, կը քարողէր նա ամենուն արշարութիւնը՝ որ գթութեան սկիզբն է, և գթութիւնը՝ որ արդարութեան լրումն է:

Արդ, արդարութիւնը կը պատուիրէ պատուելուրիշի իրաւունքը, և երբեմն գթութիւնը կ'ուղէ որ մարդ թողու խոկ իւրը, խաղաղութեան կամ ուրիշբարիքի մը համար:

Ի՞նչ կ'ըլլար աշխարհ, եթէ իրաւունքը դադրէր հօն թագաւորելէ, եթէ անցնիւր անհամա իւր անձին նկատմամբ ապահով չըլլար, և ինչ որ իւրն է՝ չկարէր աներկիւր վայելել:

Լաւ ես կը լինէր առվրիլ անտառաց ծոցը քան այսպէս աւազակութեան ու աւարառութեան մատնուած ընկերութեան մը մէջ:

Զեր այսօր յափշտակածը՝ վաղիւ ուրիշ մը ձեզմէ պիտի յափշտակէ: Մարդիկ չուառագրյն պիտի ըլլան քան զ թռչունս երկնից, յորոց ուրիշ թռչուններն ո՛չ նոցա կերը ո՛չ ալ բոյնը կը յափշտակեն:

Ի՞նչ է աղքատ մը: — Նա է որ դեռ սեփականութիւն չունի:

Ի՞նչ կը բաղձայ: — Դաղրիլ աղքատ

ըլլալէ, այն է սեփականութիւն մը ձեռք բերել:

Արդ, այն՝ որ կը գողնայ, կ'աւարէ, ի՞նչ կ'ընէ, եթէ ոչ ըստ կարի կը չնջէ սեփականութեան իրաւունքն իսկ:

Աւարել, գողունալ կը նշանակեն ուրեմն յարձակիւ աղքատին ու հարստին վրայ միանգամայն, վեր ՚ի վայր շրջէլ մարդոց մէջ եղած ամեն ընկերութեանց հիմունքը:

Ով որ ոչինչ ոնի այն ատեն միայն կրնայ բան մ'ունենալու յաշողիլ, երբ այլք արդէն տնին. վասն զի անոնք միայն կրնան իրեն բան մը տալ փոփարէն իւր աշխառութեան:

Կարդն ու կանոնը ամենուն բարին ու շահն է:

Մի՛ խմէք բնաւ ոճրի բաժակէն. յատակալ կայ դառն վիշտ և անձկութիւնք և մահ:

ԺԱ.

Եւ տեսած էի աշխարհի վրայ հասած չարիքները, տկարը հարստահարուած, արշարութեան մուրող, չարը բարձրացեալ

՚ի մեծութիւնու և յղփայեալ ճոխութեամբք, անմեղը դատապարտուած անիրաւ դատաւորներէ, և նորա զաւակունքն արեւուն տակ թափառական :

Եւ տրտում էր անձն իմ, եւ յոյսը խոյս կուտար հոգիէս՝ իբրհւ բեկեալ ամանէ մը :

Եւ Աստուած խոր քուն մը զրկեց ինձ :

Եւ քնոյս մէջ տեսայ իբր լուսափայլ կերպարանք մը ինձ մօտ կեցած, Ոգի մը՝ որոյ անոյշ ու տուր հայեացքը մինչեւ ամենածածուկ մտածութեանցո խորը կը թափանցէր :

Եւ սարսուացի ո՛չ առ ահի կամ առ խընդութեան, բայց իբր այս երկուքին անբացատրելի մէկ խառնուրդը եղող դգացումով մը :

Եւ ոգին ըստաւ ինձ. «Ինչո՞ւ տրտում ես»,

Եւ պատասխան տուի լալով. «Ո՛չ, տե՛ս երկրիս վրայի չարիքները :»

Եւ երկնային կերպարանքը ժայտեցաւ անասելի ժպիտով մը, ու այս խօսքն եկաւ աշկանջիս.

«Քու աշդ ամեն բան այն պատիր միշոցին մէջ տեղէն կը տեսնէ՝ զոր արարածք ժամանակ կ'անուանեն : Ժամանակը քեզ հա-

մար է միայն . Աստուծոյ համար ժամանակ չկայ : „

Եւ լուս կայի . զի անիմանալի էին ինձ իւր խօսքերը :

Յանկարձուստ Ոգին՝ « Նայէ՛ » ըստաւ :

Եւ ա՛լ ինձ համար յառաջ եւ յետոյ նոյն եղան, եւ միեւնոյն վայրկենի մէջ միանդամայն տեսայ ինչ որ մարդիկ իբենց թերի ու տկար լեզուովը կը կոչեն անցեալ, ներկայ, ապագայ :

Եւ այս ամենքն մի էին, եւ սակայն, ըստելու եւ պատմելու համար ինչ որ տեսի, պէտք է որ ինչեմ վերտանի ժամանակին ծագը, պէտք է որ մարդոց թերի եւ տկար լեզուն խօսիմ :

Եւ մարդկային բովանդակ ազդը ինձ իւրեւ մի մարդ կը թուէր :

Եւ այս մարդը շատ չարիք գործած էր ու քիչ բարիք, շատ վիշտ կրած էր ու քիչ ուրախութիւն վայելած :

Եւ անկեալ զնէր մերթ սառնազատ մերթ հրակէզ երկրի մը վրայ, վտիս, սովալլուկ, չարատանջ, ջղածդութեամբք խառն նուալ-

մամբ ընկնուած եւ դիւաց բնակարանին մէջ  
դարբնուած շլթայիւք վարակեալ :

Եւր աջ ձեռնը զահեակը շլթայած էր,  
եւ ահեակը՝ զաջը, եւ իւր չարագուշակ եւ<sup>1</sup>  
բազոց մէջ այնպէ՛ս իմն թաւալած էր իւր  
երկաթից մէջ, որ բոլոր մարմինն անոնցմով  
ուժին պարաւանդուած էր :

Վասն զի եթէ գամ մի միայն դպչէին  
մարմնոյն, իւր մորթին կը մածնուին հալած  
կապարի նման, միին մէջ կը մտնէին ու ա'յլ  
եւս դուրս չէին ելներ :

Եւ այս էր մարդը, ճանչցայ զայն :

Եւ ահա լուսոյ ճառագայթ մը Արեւել-  
քէն կուգար, եւ սիրոյ ճառագայթ մը Հա-  
րաւէն, եւ զօրութեան ճառագայթ մը Հիւ-  
սիմէն :

Եւ այս եռակի ճառագայթները միացան  
այս մարդուն սրտին վրայ :

Եւ երբ լուսոյ ճառագայթը կը պլանար  
կուգար, ձայն մը կ'լսէր . “Որդի՛ Աստուծոյ,  
եղբա՛յր Քրիստոփ, կիսցի՛ր զոր զիտել պար-  
տիս : ”

Եւ երբ սիրոյ ճառագայթը կը պլանար

կուգար, ձայն մը կ'լսէր . “Որդի՛ Աստուծոյ  
եղբայր Քրիստոփ, սիրէ՛ զոր սիրել պարտիս : ”

Եւ երբ զօրութեան ճառագայթը կը ու-  
լանար կուգար, ձայն մը կ'լսէր . “Որդի՛  
Աստուծոյ, եղբայր Քրիստոփ, ըրէ՛ զոր ըւ-  
լալ պարտ է : ”

Եւ երբ երեք ճառագայթները միացան,  
երեք ձայներն ալ միացան, և անոնցմէ մէկ  
ձայն մը կազմեցաւ որ ըստ :

“Որդի՛ Աստուծոյ, եղբայր Քրիստոփ,  
ժառագայթէ՛ Աստուծոյ և անոր միայն ժառագայթէ՛ : ”

Եւ այն ատեն ինչ որ ցայն վայր միայն  
մէկ մարդ մը երևցած էր ինձ իրը աղջաց  
և աղանց ամըսիս մը թուեցաւ :

Եւ առաջին հայեցուածս զիս չէր խա-  
րած, և երկրորդն ալ չէր խարեր :

Եւ այս աղճերն ու ազինք, իրենց վըշ-  
տաց անկողնոյն վրայ արթնալով, սկսան ը-  
սել իրարու .

“Ուստի՛ են մեր տառապանքն ու տուայ-  
տանքը, և քաղցն ու ծարաւը՝ որ զմեղ կը-  
լիկին, և շլթայքն՝ որ զմեղ յերկիր կը խո-  
նարհեցնին և մեր մարմնոյն մէջ կը միմն : ”

Եւ իրենց խմացականութիւնը բացուեցաւ ,  
և 'ի միտ առին թէ Աստուծոյ որդիքը , Քը-  
րիստոսի եղբարքը , իրենց հօրմէն դասա-  
պարտուած չէին գերութեան , և թէ այս գե-  
րութիւնն էր բոլոր իրենց աղետից աղքիւր :

Իւրաքանչիւրն ուրեմն փորձ փորձեց իւր  
շնթայները խորտակելու , այլ ո՛չ ոք յաջո-  
զեցաւ :

Եւ իրարու նայեցան մեծ արգահատու-  
թեամբ մը , և , սիրոյ ներդործութիւնն ըզ-  
գալով յինքեանս , ըսին միմեանց . “ Սեք ա-  
մենքս նոյն խորհուրդն ունինք , ինչո՞ւ նոյն  
սիրով չունենանք : Նոյն Աստուծոյ որդիքը և  
նոյն Քրիստոսին եղբարքը չէմք : Ազատինք  
կամ մեռնինք 'ի միավին : ”

Եւ , այս ըսելու ատեն , յինքեանս ասո-  
ուածեղէն ոյժ մը զդացին , և լսեցի իրենց  
շնթայից շառաջմամբ խորտակումը , և վեց օր  
կոռուեցան անոնց զէմ՝ որք շնթայած էին  
զիրենք , և վեցերորդ օրը յաղթող եղան ,  
և եօթներորդ օրը եղաւ օ՛ր հանգստեան :

Եւ երկիրը՝ որ գօս էր ու ցամքած՝ միւ-  
սանդամ կանոչութիւն զզեցաւ , և ամենքը

կրցին նորա պատղներն ուտել և երթալ գալ  
առևանց մէկն իրենց ըսելու , “ Ո՞ւր կ'երթաք .  
ասոի չանցնուիր : ”

Եւ աղածրի մանկունք , ծաղիկներ քաղե-  
լով , իրենց մօրը կը բերէին՝ որ մեզմիկ իմն  
կը ժողովէին անոնց :

Եւ չային ո՛չ անանկք ո՛չ մեծատունք ,  
այլ ամենքն առասութեամբ ունէին իրենց պի-  
տոյից կարևոր եղած իրերը , վասն զի ամեն-  
քըն զիրեար կը սիրէին ու կ'օգնէին միմեանց  
իրբե եղբարք :

Եւ ձայն մը , հրեշտակի մը ձայնին նման ,  
հնչեց երկնից մէջ . “ Փա՛ռք Աստուծոյ՝ որ  
տուաւ իմացականութիւնը , սէրը , զօրութիւ-  
նը իւր գաւակաց : Փա՛ռք Քրիստոս՝ որ ա-  
զատութիւն պարզեց իւր եղբարց : ”

ԺԲ .

Երբ ձենէ մին անիրաւութիւն մը կը կրէ ,  
երբ , աշխարհի մէջ իւր ձամբուն վրայ , հա-  
րստահարիչը զայն կ'զգեանէ և սորը նո-  
րայ վրայ կը զնէ , եթէ տրտնջայ , ո՛չ ոք  
իրեն կը լսէ :

Հիքին աղաղակը մինչ առ Աստուած կել-  
նէ , բայց չհամիր մարդուն ականջը :

Եւ հարցի ինքնիրենս . “ Ուստի՞ է այս  
շարիքս . միթէ նա՞ որ ստեղծեց աղքատը ինչ-  
պէս հարուստը , անզօրը ինչպէս հզօրը , ու-  
զե՞ց բառնալ ոմանցմէ ամեն երկիւղ իրենց  
անիրաւութեանց մէջ և ոմանցմէ ամեն յոյս  
իրենց թշուառութեանց մէջ : ”

Եւ տեսայ որ ասի քստմնելի խորհուրդ մը,  
Աստուածոյ դէմ հայհոյութիւն մէր :

Որովհետեւ ձենէ իւրաքանչիւրը զիւր  
անձնը միայն կը սիրէ , որովհետեւ իւր եղ-  
բարցմէ կը բաժնուի , որովհետեւ միակ է ու  
միակ կ'ուղէ ըլլալ , իւր բողոքն անլուր  
կը մնայ :

Քարնան մէջ , երբ ամեն ինչ կ'ոգեւո-  
րի վերակենդան , դալարեաց մէջն ձայն մը  
կ'ելնէ իրը երկայն մրմոնջ մը :

Այս ձայնը , անհամար ձայներէ բաղ-  
կացած , աննշմարելի ու ամենափռքիկ ճր-  
ճիներու անթիւ բազմութեան մը ձայնն է :

Անոնցմէ ո՛չ մին կը նար ըսուիլ առան-  
ձինն , ը ելի են միահաղոյն :

Դուք եւս ծածկուած էք խոտին տակ .  
ի՞նչու բնաւ ձայն մը դուրս չելներ :

Երբ սրբնիթաց գետակէ մը անցնիլ ուղ-  
ոփի , երկու կարգ երկայն շարք մը կը կազ-  
մեն , եւ , այսպէս իրարու մօտենալով , անոնք  
որ առանձինն չպիտի կրնային ջրոց բռնու-  
թեանը դիմակալել հեշտեաւ իմն ու անաշխատ  
կը յաղթեն անոր :

Այսպէս' ըրե՛ք , եւ անիրաւութեան հո-  
սանքը պիտի տկարայնէք , որ՝ երբ միայն էք  
կ'առնու կը տանի զձեղ ու ջարդուբորդ կը-  
ձգէ եղերքին վրայ :

Զեր որոշումներն յամբ՝ այլ հաստա՛տ ըլ-  
լան : Մի՛ յաղթուիք առաջին եւ ո՛չ երկ-  
րորդ շարժումէ մը :

Բայց եթէ մէկը ձեղ դէմ անիրաւու-  
թիւն գործած է , նախ առաջին ձեր սրտէն  
վտարեցէք ամեն աստելութեան զգացումն ,  
եւ յետոյ ձեր ձեռներն ու աշերը յերկինս  
ամբաւնալով ըսէք ձեր երկնաւոր Հօրը .

“ Ով հայր , դու անմեղին և կեղեքե-  
լոյն պաշտպանն ես . որովհետեւ քու սէրդ զաշ-

խարհ ստեղծեց, և քու արդարութիւնդ զայն  
կը կառավարէ :

“ Առաջեն որ թագաւորէ աս երկրի վը-  
բաց, և չարը իւր չար կամբն անոր դէմ կը-  
հանէ :

“ Ասո՛ր համար, ահա՛ որոշեցինք չորին  
գէմ կռուիլ :

“ Ով Հայր, խորհուրդ և լցո տուր մեր  
մտաց, և ոյժ՝ մեր բազուկներուն : ”

Զեր հոգւոյն խորէն այսպէս աղօթելէ  
յետոյ, կռուեցէ՛ք անահ և անվեհեր :

Եթէ զառաջինն յաղթութիւնը ձենէ  
խոյս տալ թուր, այն փորձ մ'է միացն. ձե-  
րը պիտի ըլլայ յաղթանակը, վասն զի ձեր  
արիւնը Կայենէն խողխողեալ Արելին արեան  
նման պիտի ըլլայ, և ձեր մահը՝ մարտիրու-  
ներու մահուան պէս :

### ԺԳ.

Գիշեր մ'էր մռայլ և խաւարին. անսա-  
տրդ ու մռթ երկին մը կը ծանրանայր երկ-  
րի վրաց, ինչպէս ու կճեայ կափարիչ մը  
գերեզմանի մը վրաց :

Եւ ոչինչ այս զիշերոյս լութիւնը կ'աղա-  
մըկէր, բայ ՚ի թեսոց թեթեւ բախիւնի մը նման  
տարօքինակ ձայնէ մը՝ որ մերթ ընդ մերթ  
կը լսուէր գիւղերուն և քաղաքաց վրայէն :

Եւ այն ատեն աղջամուղ ջն ու մռայլը  
կը թանձրանային, և ամեն ոք իւր հոգւոյն  
սեղմուիլը և երակաց մէջ սարսուռի մ'ընթա-  
նալը կ'զգայր :

Եւ թխապատ ու կարմրալոյս կանթեղով  
մը լրուալորուած սրահի մը մէջ, ծիրանա-  
զգեստ և թագապատակ եօթն մարդիկ եօթն  
երկաթեայ աթոռներու վրայ բաղմած էին :

Եւ սրահին մէջտեղը ոսկրոսիներէ շին-  
ուած գահ մը կը բարձրանայր, և գահին ըս-  
տորոսը՝ աթոռակածեալ խաչելութիւն մը կար  
կործանեալ, և գահին առջև երենեայ սեղան  
մը, և սեղանին վրաց կարմիր ու փրփրաղէկ  
արեամբ լեցուն անօթ մը, և մարդկային  
գանձ մը :

Ու թագապատակ եօթն մարդիկ մռախոհ  
ու տխուր կ'երեէին, և իրենց աչքը, իւր խո-  
րափոս ակնակապէին խողէն, մերթ ընդ մերթ  
կապոյտ հրոյ կայծակներ կը թափթփէր :

Եւ անոնցմէ մին , յոտն ելնելով , դող-  
դոջաքայլ գահին մօտեցաւ , և սոքը խաչին  
վրայ դրաւ :

Սոյն պահուս , իւր անդամները դողացին  
և կարծես թէ մօտ էր 'ի նուազել : Միւսնե-  
րըն անշարժ ու անխալիք կը նկատէին . եր-  
բէք փոքրիկ շարժում մը չըրին , բայց չը-  
զիտեմ ինչ անցաւ իրենց ճակտին վրայէն ,  
և իրենց շրթանց վրայ տարօրինակ ժպիտ մը  
տեսնուեցաւ՝ որ մարդու ժպիտ չէր :

Եւ նա՝ որ նուազման մօտ երևցէր էր՝  
ձեռնը երկնդուց , արիւնալից ամանն առաւ ,  
դանկին մէջ լցուց ու խմեց :

Այս ըմպելին գողցես զինքը կաղդուրեց :

Եւ գլուխը կանգնելով , այս աղաղակը  
դուրս ելաւ իւր կուրծքէն իրբեւ խուլ հւորհ-  
շիւն մը .

“ Անիծեա՛լ ըլլայ Քրիստով՝ որ Աղա-  
տութիւնը բերաւ . յերկիր :

Եւ միւս վեց թագապասակ մարդիկը յատն  
ելին միահամուռ , և սմենքը միաձայն նոյն  
աղաղակն արձակեցին .

“ Անիծեա՛լ ըլլայ Քրիստով՝ որ Աղա-  
տութիւնը բերաւ . յերկիր :

Յետ որոց , նորէն իրենց աթոռներուն վլ-  
րայ նատելով , առաջինն լսաւ .

“ Եղբա՛րք , ի՞նչ ընելու եմք Աղատու-  
թիւնը խեղբելու համար . վասն զի մեր թա-  
գաւորութիւնը կը վերջանաց՝ երբ իւրն սկսի :  
Մեր գատը մի և նոյնն է . թո՛ղ իւրաքան-  
չիւրն առաջարկէ իրեն լսագոյն երևացած  
միջոցը :

“ Խակ ես այս խորհուրդը կուտամ . Քր-  
իստոսի գալէն յառաջ ո՞վ կրնար մեղ զէմ  
ելնել : Իւր կրօնքն է որ զմեղ կորոյս . չըն-  
չէ՛նք Քրիստոսի կրօնքը :

Եւ սմենքն պատասխանեցին . “ Ճշմարիտ  
է : Զնշէ՛նք Քրիստոսի կրօնքը : ”

Եւ երկրորդ մը յառաջացաւ գէպ ՚ի գա-  
հը , առաւ մարդկային դանկը , արիւն լցոյց  
խմեց և ըստ ապա .

“ Կրօնքը չէ՛ միայն զոր չնջել հարկ է ,  
այլ նաև զիսութիւնն ու մտածութիւնը . քան-  
զի զիսութիւնը կ'ուզէ ճանչնալ ինչ որ աղէկ  
չէ մեղ համար որ մորդը զիսնոյ . և մոտ-

ծաթիւնը միշտ պատրաստ է գորոթեան դէմ  
խեռելու : ”

Եւ ամենքը պատասխանեցին . “ Ճշմարիս  
է : Զնշենք գիտոթիւնն ու մտածութիւնը , ” :

Եւ երրորդ մը , առջի երկուքին ըրածն ը-  
նելէ յետոյ , ըստ :

“ Երբ , մարդոցմէ և' կրօնքը և' գիտու-  
թիւնը և' մտածութիւնը բառնալով , խորասու-  
զենք զիրենք անասնական ապլութեան մէջ ,  
շատ բան ըրած պիտի ըլլանք , բայց բան մը  
պիտի մնայ մեղ ընելու :

“ Անասունը վտանգաւոր բնագլումներ  
ու համակրութիւններ ունի : Պէտք է որ ժո-  
ղովուրդ մը ուրիշ ժողովրդեան մը ձայնը չը-  
լսէ , որպէս զի եթէ մին բողոք բառնայ ու  
խլրոտի , միւսն անոր նմանել չտենջայ : Թո՛ղ  
դրսէն ձայն մը մեր մէջ չթափանցէ ” :

Եւ ամենքն պատասխանեցին . “ Ճշմարիս  
է . թո՛ղ դրսէն ձայն մը մեր մէջ չթափանցէ ” :

Եւ չորրորդ մ'ըստ . “ Անք մեր շահն  
ունինք և ժողովուրդքն իրենց շահն ունին մե-  
րոյն հակառակ : Եթէ միանան այս շահը մեղ

դէմ սկաշտանելու համար , ի՞նչպէս անոնց  
դիմակալել պիտի կրնանք :

“ Բաժնենք սիրելու համար : Խրաքան-  
չիւր գաւառի , իւրաքանչիւր քաղաքի , իւ-  
րաքանչիւր աւանի՝ ուրիշ աւանաց , ուրիշ  
քաղաքաց , ուրիշ գաւառաց շահուն ներհակ  
շահ մը ասհմանեմք :

“ Այսու եղանակաւ , ամենքն դիրեալ  
պիտի ատեն , և մեղ դէմ միանալ չպիտի մը-  
տարերեն : ”

Եւ ամենքը պատասխանեցին . “ Ճշմարիս  
է . բաժնենք սիրելու համար . միութիւնն  
զմեղ կ'սպաննէ ” :

Եւ հինգերորդ մը , մարդկային դանկը  
երկիցս արեամբ լցնելէ և երկիցս պարակելէ  
յետոյ , ըստ :

“ Գեղեցիկ են բոլոր այդ միջոցները .  
Եւ են , բայց անբաւական : Անասնացուցէ՛ք ,  
լա՛ւ . բայց սոսկացուցէ՛ք այդ անասունները .  
ահաբեկ ըրէք զանոնք անողոքելի արդարու-  
թեամբ մ'ու ծայրայեղ տանջանքներով , եթէ  
չէք ուղեր վաղ կամ անագան կուր ըլլաւ .  
4

անոնց : Աւ իշխանի մ'առաջին պաշտօն-  
եայն դահիճն է :

Եւ ամենքը պատասխանեցին . “ Ճշմարիտ  
է . լաւ իշխանի մ'առաջին պաշտօնեայն դա-  
հիճն է : ”

Եւ վեցերրորդ մ'ըստ :

“ Կը ճանչեմ արագ, սոսկալի, անխու-  
սելի տանջանաց օգտակարութիւնը . սակայն  
կան զօրել հողիներ և յուսահատ հողիներ  
որք առ ոչինչ կը գրեն տանջանքը :

“ Կ'ուզէ՞ք դիւրեաւ կառավարել զմար-  
դիկ, մեղկացուցէ՞ք զանոնք հեշտութեամբ :  
Առաքինութիւնը անօգուտ է մեզ . նա զօրու-  
թիւնը կը սնուցանէ . սպառենք զայն մանա-  
ւանդ ապականութեամբ : ”

Եւ ամենքը պատասխանեցին . “ Ճշմարիտ  
է . սպառենք զօրութիւնը, եռանդն ու արի-  
ութիւնը ապականութեամբ : ”

Այն ատեն եօթներորդը, այլոյ նման  
մարդկային գանկէն խմել յետոյ, այսպէս  
խօսեցաւ, ոտներն խաչելութեան վրայ դրած .

“ Զի՞ք այլ ևս Քրիստոս . պատերազմ

մոլեգին, պատերազմ յաւխտենից անոր և  
մեր մէջ :

“ Բայց ի՞նչ հնար պէտք է հնարել ժո-  
ղովուրդներն անկէ անջատելու համար : Ա-  
պարդիւն ու նանիր փորձ մ'է այդ : Ի՞նչ  
պէտք է ընել ուրեմն : Մի՛տ դիք ինձ . պէտք  
է շահիլ Քրիստոսի պաշտօնեայները՝ ընչ իւք,  
փառօք և իշխանութեամբ :

“ Եւ նոքա, ’ի զիմաց Քրիստոսի, պիտի  
պատուիրեն ժողովրդեան հնագանդ ըլլալ մեղ  
յամենայնի, ի՞նչ որ գործենք, ի՞նչ որ հը-  
րամայեմք :

“ Եւ ժողովուրդը պիտի հաւատաց անոնց  
և պիտի հնագանդի խղճի մտօք, և մեր իշ-  
խանութիւնը աւելի ամրապինդ ու հաստա-  
տուն պիտի ըլլայ քան երբէք : ”

Եւ ամենքը պատասխանեցին . “ Ճշմա-  
րիտ . շահինք Քրիստոսի սրաշտօնեայները ” :

Եւ յեղակարծումն կանթղել՝ որ սրահը  
կը լրսաւորէր՝ շիջաւ, և եօթն մարդիկը  
բաժնուեցան իրարմէ թանձրամտծ մթու-  
թեան մէջ :

Եւ ըսուեցաւ արդարի մը՝ որ սոյն սրա-

Հուս կը հսկէր և կ'աղօթէր Խաչին առջեւ .  
“ Իմ օրս կը մերձի : Պաշտէ՛ և մի՛ երկնջիր , :

ԺԴ .

Եւ դորշ ու ծանրաբեռն մշուշի մը մէ՛  
յն տեսայ ինչպէս , վերջնալուսոյ ժամուն ,  
կը տեսնուի երկրիս վրայ մերկ , խոպան , ա-  
մայի ու ցրտին հովիս մը :

Մէջտեղը կը բարձրանայր ժայռ մը՝ ուս-  
տի շիթ առ շիթ կը ծորէր սեագոյն ջուր մը  
և այս իյնող կաթիներուն խուլ ու աղօտ հըն-  
չիւնն էր միակ հնչիւնը՝ որ կը լսուէր :

Եւ վեց շաւիղք , հովիտն օճապտոյտ կըտ-  
րելով , կուգային յանգիլ՚ի ժայռն , և , ժայ-  
ռին մօտ , երաքանչիւր շաւղին երը քար  
մը կար՝ սաղունի մը լորձունքին նման չգի-  
տեմ ինչ խոնաւ ու կանաչ բանով մը ծած-  
կըւած :

Եւ ահա , շաւիղներէն միոյն վրայ , ըստ-  
ուեր մը նշմարեցի որ կը շարժէր յամբարար .  
և տակաւ առ տակաւ ստուերը մօտենալով ,  
որոշեցի , ո՛չ թէ մարդ մը , այլ մարդու մը  
նմանութիւնը :

Եւ այս մարդ կերէն կերպարանքը սրտին  
տեղոյն վրայ արեան արատ մ'ունէր ,

Եւ նստաւ խոնաւ ու կանաչագոյն քարին  
վրայ , և իւր անդամները կը սարսռային , և ,  
գլուխ՚ի խոնարհ , բազուկներովն ինքզինք կը  
սեղմէր , իբրու թէ յերմութեան մնացորդ մը  
յինքեան պաշելու համար :

Եւ միւս վեց շաւիղներէն վեց ուրիշ ըստ-  
ուերներ հետզհետէ հասան ժայռին ստորոտը :

Եւ անոնցմէ յւրաքանչիւրը , սարսռալով  
և բազկօքն ինքզինք սեղմելով , նստաւ խոնաւ  
և կանաչագոյն քարին վրայ :

Եւ անդ կային լոկի և ընկճեալ անիմա-  
ռալի անձկութեան մը ծանրութեան ներքն :

Եւ իրենց լուռթիւնը երկարատեւ եղաւ ,  
շդիտեմ ո՛րքան երկարատեւ . քանզի արել  
շծագիր այս հովիտն վրայ . հոն ո՛չ երեկոյ  
յայտ է ո՛չ առաւօտ : Աւեգոյն ջրոյ կաթիլ-  
ները միայն իյնալու ատեն կը շաւիղն հօն մի-  
օքինակ , մթին , ծանրաստալոտուկ , յաւիտե-  
նական տեղութիւն մը :

Եւ այս տեսիլն ա՛յնպէս իմն ահարկու էր  
և քստմիեցուցիչ , որ եթէ Աստուած ինձ ոյժ

չուար , անհանդուրժելի պիտի ըլլար այն իմ  
աշաց :

Եւ , տեսակ մը ջղաձիք սաբսուռէ յե-  
սոյ , ստուերներէն մին , գլուխը վերցնելով ,  
կմակրի մը մէջ մոնչող հօղմոյն բիրտ ու վայ-  
րադ ձայնին նման ձայն մը հանեց :

Եւ ժայռը այս խօսքը զրկեց ականջիս .

„Քրիստոս յաղթեց . անիծեա՛լ ըլլայ „ :

Եւ վեց միւս ստուերները դողդղացին , և  
ամենքը միահաղոյն իրենց գլուխները վեր-  
ցընելով՝ նոյն հայհոյութիւնը դուրս ժայթքեց  
իրենց կուրծքէն .

“Քրիստոս յաղթեց , անիծեա՛լ ըլլայ „ :

Եւ յանկարծ սաստկագոյն դողումավ մը  
րոնուեցան , մշուշը թանձրացաւ , և ուսագոյն  
չուրը դադրեցաւ պահ մը ծորելէ :

Եւ եօթն ստուերք վերստին կրած էին  
նկուն ու կորաքամակ իրենց գաղտնի անձ-  
կութեան բեռան տակ , և եղաւ երկրորդ լը-  
ռութիւն մը քան զառաջինն երկարածիդ :

Յետոյ ապա մին անոնցմէ , առանց քա-  
րին վրայէն ելնելու , անյողդողդ ու զիսա-  
հակ , ըստու միւսներուն .

“ Աւրեմն ձեզ ալ նոյնը պատահեցաւ ինչ  
որ ինձ : Ի՞նչ օգուտ ըրին մեզ մեր բոլոր  
խորհուրդները : ”

Եւ ուէ լեզը յարեց . “ Հաւատքն ու միւ-  
տածութիւնը խորտակեցին ժողովրդոց շղթայ-  
քը . հաւատքն ու մտածութիւնը աղատ ըրին  
դերկիր : ”

Եւ ուրիշ մ'լսաւ . “ Կ'աղէինք զմարդիկ  
բաժնել , և մեր հարստահարութիւնը զանոնք  
մեզ դէմ միացոյց : ”

Եւ ուրիշ մը . “ Մեք արիւն թափե-  
ցինք , և այս արիւնը մեր գլուխներուն վրայ  
ինկաւ : ”

Եւ ուրիշ մը . “ Մեք ապականութիւն  
սերմանեցինք , և ապականութիւնն 'ի մեզ բող-  
րոշեցաւ և մեր ուկրները լսակինեց : ”

Եւ ուրիշ մը . “ Մեք Աղատութիւնը խեղ-  
դել կարծեցինք , և նորա շունչը ցամքեցոյց  
մեր զօրութիւնը յարմատոյն : ”

Այն ատեն եօթներորդ ստուերը .  
“ Քրիստոս յաղթեց . անիծեա՛լ ըլլայ „ :

Եւ ամենքը համաձայն և միագու պա-  
տասխանեցին .

“ Քրիստոս յաղթեց . անիծեա՛լ ըլլայ : ”

Եւ տեսի ձեռք մը՝ որ յառաջ կ'երկըն նար . թաթիւց մատոց սւեադոյն չըին մէջ՝ որոյ կաթիլքն կյալը յաւիտենակրը մեողութիւնը կը չափեն , անով նշան մ'ըրաւ եօթն ըստաւերաց ճակատուց վրայ , և այս եղաւ առ յաւէտ :

ԺԵ .

Դուք օր մը միայն ունիք անցլնելու երկուիւց վրայ , այնպէս ըրէք որ խաղաղութեամբ անցլնէք զայն :

Խաղաղութիւնը սիրոյ պտուղն է . վասն զի , խաղաղութեամբ ապրելու համար , պէտք է շատ բաներու տոկալ գիտնալ :

Ոչ ոք կատարեալ է , ամենքն իրենց թերութեւնքն ունին . անցնիւր մարդ այլոց վրայ կը ծանրանայ . և սէրը միայն այս բեռնը թեթև կը դորձէ :

Եթէ դուք չք կրնար ձեր եղբարց տանիլ , ի՞նչպէս ձեր եղբարք ձեղ պիտի տանին :

Մարեմայ որդին այսպէս գրեց . “ Քան-

դի նա սիրած էր իրեննները՝ որ յաշխարհի էին , սիրեցի՛ք զանոնք ցվախճան :

Սիրեցի՛ք ուրեմն ձեր եղբարքն՝ որ յաշխարհի են , և սիրեցի՛ք զայնս մինչեւ ցվերջ :

Աէրն անխոնջ է , չյոդնիր երբէք : Աէրըն անսպառ է . կ'ապրի և կը վերածնի ինք-ետմք , և ցորչափ աւելի գեղի , այնքան ևս կը յորդէ :

Ազ որ զիւր անձնը քան զիւր եղբայրն առաւել կը սիրէ՝ չէ արժանի Քրիստոսի՝ որ իւր եղբարց համար մեռաւ : Տոփօք ձեր ինչ-քը , տուէք նաև ձեր կեանքը . և սէրը սիրափ հատուցանէ ձեղ զամենայն :

Ճշմարտիւ կ'ըսեմ ձեղ , նա՝ որ կը սիրէ՝ իւր սիրով դրախտ մ'է յերկրի : ԶԱստուած ունի յինքեան , զի Աստուած ոէր է :

Յուրի մարդը չսիրեր , կը ցանկայ . ամենք բանի քաղց և ծարաւ ունի . իւր աչը , օձին աշին նման , կը դիւթէ և կը յանկոցանէ , բայց լավելու համար :

Աէրը անրիծ ու անարատ հոգեաց խորը կը հանգչի , ինչպէս ցողոյ շիթ մը ծաղկի մը բաժակին մէջ :

Ոչ . Եթէ գիտէիք թէ ի՞նչ է սիրելը :

Կ'ըսէք թէ կը սիրէք , և սակայն բաշումք ձեր եղբարցմէ չունին հաց՝ յագենաւըու համար , չունին զգեստ՝ իրենց մերկ անդամները ծածկելու համար , չունին յարկ մը՝ պատսպարուելու համար , ափ մը յարդ՝ վըրան ննջելու համար , մինչդեռ գուք ունիք դամեն ինչ յորդառաստ :

Կ'ըսէք թէ կը սիրէք , և սակայն կանքաղմաթիւ հիւանդք՝ որք անօդնական կըծիւրին և կը ծնդին իւրեանց թշուատ անկողնոյն վրայ , չուառք՝ որք կուլան չունենալով մէկը ողբակից , մատաղ մանկունք՝ որք , ցըրտէն ընդարմացեալ , դռնէ ՚ի դուռն կ'երթան հարուստներէն իրենց սեղանոյն մէկ փշորը խնդրելու և չեն ընդունիր :

Կ'ըսէք թէ կը սիրէք ձեր եղբարքը , և ի՞նչ պիտի ընէիք որդեմն՝ եթէ ասէիք զանոնք:

Իսկ ես կ'ըսեմ ձեղ , ո՛վ որ կարող է ու չսփոփեր իւր եղբայրը՝ որ կը տառապի՛ ու խերիմ թշնամին է իւր եղբօրը . և ո՛վ որ կարող է ու չսնուցաներ իւր եղբայրը՝ որ նօք թի է՝ եղբայրասպան է :

ԺԶ.

Կը պատահին մարդիկ՝ ոյք չեն միրեր բնաւ զԱստուած և չեն վախնար անկէ . փափէ՛ք յայնցանէ , վասն դի անիծից չագի մը կ'ելնէ անոնցմէ :

Փափէ՛ք ամպարիշտէն , զի իւր շունչը կ'սպաննէ . բայց մի՛ ատէք զայն , վասն դի ո՞ զիսէ թէ արդեօք Աստուած չ'է փոխած արդէն նորա միրով :

Այն մարդը՝ որ , նոյն խակ անկեղծօրէն կ'ըսէ , « Չունիմ հաւատոք , յաճախ ինք զինքը կըսպատրէ : Հոգոյ մէջ , անդ ՚ի խորն հաւատոյ արմատ մը կայ՝ որ չը ցամաքիր երթէք :

Խօսքը՝ որ Աստուածոյ ուրացումն է՝ կ'այրէ հրատուչոր շրթներն՝ որոց վրայէն կ'անցնի , և բերանը՝ որ հայ հոյելու համար կը բացուի՝ դժոխոց մէկ օդամուտն է :

Ամպարիշտը միակ է ՚ի տիեզերու : Համայն արարածք զԱստուած կը դրուատեն , ամեն ինչ որ կ'զգայ՝ դայն կ'օրհնէ . ամեն ինչ որ կը խորհի՝ զայն կը պաշտէ . տունջեան

աստղն ու գիշերոյ աստղերը զայն կ'երդեն  
իւրեանց խորհրդաւոր լեզուավը :

Հաստատութեան վրայ դրոշմեալ կայ նո-  
րա երիցո սուրբ անունը :

Փա՛ռք Աստուծոյ երկնից բարձրութեանց  
մէջ :

Գրած է զայն նաև մարդոյն սրտին մէջ,  
և բարի մարդը կը պահէ զայն սիրով . բայց  
այլք զայն եղծել կը նկրտին :

Խաղաղութիւն երկրի վրայ բարեսիրա-  
ռ բարեացակամ մարդոյ :

Նոցա քունը քաղցր է ու հեշտ , և իրենց  
մահն աւելի քաղցր է , զի գիտեն թէ իրենց  
հօրը կ'երթան :

Զոր օրինակ հէք մշակը , յաւուրն տա-  
րաժամել , կը մեկնի դաշտերէն , կը վերա-  
դառնայ իւր հիւղակը , և գրան առջև նստած ,  
զերկինս նկատելով իւր յոդնութիւնները  
կը մոռնայ . այսպէս , երբ երեկոյ կ'ըլլայ , յու-  
սացող մարդը բերկրութեամբ կը դառնայ իւր  
հայրենի տունը , և , սեմին վրայ նստած , յա-  
փտենականութեան տեսիլներուն մէջ աքսորա-  
նաց նեղութիւնքն ու տուայտանքը կը մոռնայ :

ԺԷ .

Երկու մարդիկ գրացի էին , և խրաքան-  
չիւրն ունէր կին մը և բազմաթիւ մանր տը-  
ղայք , և զանոնք սնուցանելու համար ո՛չ այլ  
ինչ բայց միայն իւր աշխատութիւնը :

Եւ այս երկու մարդոց մին ինքնիրեն ան-  
հանդիսա կ'ըլլար ու կը մնաստանջուէր լսելով .  
“ Եթէ մեռնիմ ես կամ հիւանդանամ , ի՞նչ  
պիտի ըլլայ իմ կնօշուու որդւոցա : ”

Եւ այս մտածութիւնը յարաժամ իրեն  
հետ էր , և կը կրծէր իւր սիրով ինչպէս որդ  
մը կը կրծէ պոտուզը՝ յորում ծածկուած է :

Արդ , թէպէտ և նոյն մտածութիւնն ու-  
նեցեր էր նաև միւս հայրը , բայց չը կեցած  
անոր վրայ . “ վասն զի , կ'ըսէր , Աստուծօ-  
որ իւր արարածները կը ճանչէ և կը հսկէ նո-  
ցա վրայ , պիտի հսկէ նաև իմ , կնօշու և գա-  
ւակացա վրայ ” :

Եւ այս վերջինը խաղաղ ու հանդարս  
կ'ասպէր , մինչգեռ առաջինը գոնէ վայրկեան  
մ'անդորր ու ներքին խնդութիւն մը վայելած  
չունէր :

Օր մը , մինչ կ'աշխատէր ՚ի դաշտին ,  
թաղծաղէմ և վհասա իւր մտատանջութեան  
մէջ , տեսաւ մի քանի թռչնոց մացառի մը  
մէջ մտնելը , անկէ դուրս ենելն ու ընդ հուպ  
հոն վերագառնալը :

Եւ մօտ գնալով , տեսաւ մէկմէկու քոյլ  
դրած երկու բոյներ , և խրաքանչխրին մէջ  
խել մը ձագեր նորածին և դեռ անփետուր :

Եւ երբ իւր աշխատութեանը վերադար-  
ձաւ , պահ ընդ պահ կը վերցնէր աչերը , և  
կը դիմէր թռչունները՝ որք կ'երթային ու  
կուգային բուտ բերելով իրենց ձագուցը :

Արդ , ՚ի պահուն՝ յօրում մայրերէն մին  
իւր աւարովը կը դառնար իւր բոյնը , անդզ  
մը զայն բռնելով կը յափշտակէ , և խեղճ  
մայրը , ՚ի դուր նորա մադիլներէն գերծանն-  
լու ճիղեր ընելով , սուր ու ցաւագին ճիշեր  
կ'արձակէր :

Յայս տեսիլ , մարդը՝ որ կ'աշխատէր՝ իւր  
հոտին յառաջունէ աւելի խոռվեալ զդաց .  
“ վասն զի , կը խորհէր , մօրը մահը զաւա-  
կաց մահն է , իմքս ալ բաց յինէն զոչ ոք  
ունին :

Ի՞նչ պիտի ըլլայ անոնց՝ երբ չըլլամ նո-  
ոց ևս : ”

Եւ օրն ՚ի բուն թաղծալից ու ախուր ե-  
ղաւ , և գիշերը չքնացաւ ընաւ :

Հետեւեալ օրը , դաշտերը դառնալով , ը-  
սաւ իւրօվի . “ կ'ուզեմ սա հէք մօրը ձա-  
գերը տեսնել . շատերն անտարակոյս արդէն  
կորսուած են : ” Եւ դէպ ՚ի մացառն ուղղուե-  
ցաւ :

Եւ տեսաւ որ ձագերը ողջ առողջ էին  
և ոչ մին զիասուած կ'երկեր :

Եւ , զարմանալով ընդ այս , ՚ի թաղըս-  
տի մոտաւ այս սքանչելեաց պատճառն իմանալու  
համար :

Եւ , խուն ինչ յետոյ , թեթև ճիչ մը  
սեց , և տեսաւ երկրորդ մայրը որ փութա-  
նակի կը բերէր ժողոված մնունդը՝ զոր ան-  
խորաբար բաժնեց ամեն ձագերու . և ամենքն  
ալ իրենց բաժինն ունեցան , և որբերն լրբ-  
եալ չմնացին իւրեանց չըւառութեան մէջ :

Եւ այն հայրը՝ որ անվասահ եղած էր  
նախավնամութեան վրայ՝ երեկոյին պատմեց  
միւս հօրը ինչ որ տեսած էր :

Եւ վերջինը ըստ , “ Ի՞նչ հարկ է անհանգիստ ըլլալ : Երբէք Աստուած չըլլքաներ իրենները . իւր մէրը գաղտնիքներ ունի որք անծանօթ են մեր : Հաւասա՞նք , յուսա՞նք , սիրե՞նք , և խաղաղութեամբ յառաջ վարե՞նք մեր ճանապարհը :

“ Եթէ հասնի ինձ յառաջ քան դքեզ մեռանել , դու իմ զաւակացս հայրը պիտի ըլլաս . եթէ դու մեռնիս նախ քան դիս , ես քուկիններուդ հայրը պիտի ըլլամ :

“ Եւ եթէ երկուքս ալ մեռնինք անոնք իրենց պիտոյքն ինքնին հայթայթելու հասակը չը հասած , իրենց Հայր պիտի ունենան որ յերկինս է :

ԺՈ.

Զեր աղօթքն ընելէ յետոյ , ձեր հոգին աւելի դոհ չ'էք զգար ,

Աղօթքը՝ փիշող նուսաղ դաւնաղէտ կը գործէ , և ուրախութիւնը առաւել անխառն ու սուրբ . ’ի մին կը խառնէ չգիտեմ ի՞նչ կազդուրիչ և քաղցր , և ’ի միւսն երկնացին անուշահուսութիւն մը :

Ի՞նչ կը գործէք յերկրի , և չունի՞ք ինչ ’ի խնդրել Անկէ որ զրտու զձեղ հոն :

Գուք ուղեոր մ՞էք՝ հայրենեաց անձկակարօտ : Մի՛ քայլէք դլուխ ՚ի խոնարհ . իւր ճամբան ճանչնալու համար պէտք է վեր վերցնել աշերը :

Զեր հայրենիքը երկինքն է . և երբ զերկինս կը նկատէք՝ միթէ ՚ի ձեղ բան մը չը՞յտողիր . միթէ բնաւ իղձ մը չվասկօր ձեր հոգւոյն մէջ , կամ միթէ այդ իղձը հա՞մը է ու անբարբառ :

Կան այնպիսիք՝ ոյք կ'ըսեն . “ Ի՞նչ շահ աղօթելէն . Աստուած այսքան ակար ու գընծուծ արարածոց լուելու համար չափազանց բարձր է մեղմէ : ”

Եւ ո՞վ ուրեմն ըրաւ այս ակար ու գծուծ արարածները , ո՞վ տուաւ անոնց զգացումն և մոռածութիւնն և խօսքը , եթէ ո՞չ Աստուած :

Եւ եթէ այսքան բարի եղաւ անոնց համոր , միթէ յետոյ զանոնք անտեհօս ընելու և իրմէ ’ի բա՞ց մերժելու նպատակաւ էր :

Ճշնարտիւ , կ'ըսեմ ձեղ , ով որ կ'ըսէ իւր որտին մէջ թէ Աստուած իւր գործերը

կ'սրհամարհէ , այնալիսին Աստուծոյ դէմ կը հայցիցէ :

Կան այլք՝ որք կ'ըսեն . Ի՞նչ շահ աղօթելին : Միթէ Աստուած քան զմեղ լու շլդիսէ՞ ինչ որ պիտոյ է մեղ :

Աստուած քան զձեղ լաւ գիտէ . ինչ որ պիտոյ է ձեղ , և ահա՛ ասոր համար կ'ուզէ որ խնդրէք զայն իրմէ . վասն զի Աստուած ինքն է ձեր առաջին պիտոյքը , և ազօթել Աստուծոյ՝ զԱստուած անենալու սկսիլ կը նըշանակէ :

Հայրը կը ճանչէ իւր որդուոյն պիտոյքը . բայց ասոր համար սկծօտք է որ որդին առ իւր հայրն խնդրուածք մը կամ գոհոթիւն մը շըյցտնէ երեք :

Երբ անասունք ցաւ մը կ'զգան , երբ կը վախնան , կամ երբ նօթի են , ցաւաղին ժիշեր կ'արձակեն : Այս ճիշերն իրենց ազօթքն են՝ զոր առ Աստուած կ'ուզեն , և Աստուած զայն կը լսէ : Ուժօտք է ուրեմն որ բովանդակ արարչութեան մէջ մարդը միակ է ակն լլլայ՝ որոյ ձայնը շրարձանայ բնաւ յանին Արարին :

Երբեմն դաշտաց վրայէն հողմ մը կ'անցնի՝ որ տունկերը կը չորցնէ , և այն ատեն ազաղուն բռներուն դէպ յերկիր վայրահանի խոնարհիլը կը տեսնուի . բայց , երբ ցօդով կը թրջուին , նորէն իրենց թարմութիւնը կ'առնուն , և վեր կը վերցնէն իրեանց ճակատն գետնամած :

Կան միշտ հրակէզ հողմաւնք՝ որք մարդոյն հոգւոյն վրայէն կ'անցնին ու զայն կը ցամքեցնեն : Ազօթքը ցօդն է՝ որ զայն առոցք կը գործէ :

ՃԹ .

Դուք միայն մէկ հայր ունիք՝ որ է Աստուած , և միայն մէկ տէր՝ որ է Քրիստոս :

Երբեմն երբ ըսեն ձեղ անենց համար ոյք երեկի վրայ մեծ իշխանութիւն մ'ունին . «Ահա՛ ձեր տէրերը» , մի՛ բնաւ հաւատոցք : Եթէ արդար են , ձեր ծառայքն են . եթէ չեն , ձեր բռնաւորքն են :

Ամենքն հաւատարք կը ծնին . ո՛չ ոք ՚ի ծընանելն իրեն հետ հրամայելու և իշխելու իշտուոնքը կը բերէ :

Տեսի յորբանի մանկիկ մի՞ որ կը ճշէր բերնէն լորձուռնք դուրս տալով , և շուրջ զնովաւ կային ծերանիներ՝ որք կ'ըսէին անոր . « Տէ՛ր , և , ծունը կրկնելով , կ'երկրպագէին անոր : Եւ ՚ի միտ առի մարդոյն քովանդակ չուսուռթիւնը :

Մեղքն է որ իշխաններ ըրաւ . վասն զի , փոխանակ զիրեար սիրելու և իրերաց օգնելու իրը եղբարք , մարդիկ սկան միմեանց մնասել :

Յայնժամ իրենց մէջէն լնտրեցին մէկը կամ շատեր՝ զորս արդարագոյն կը կարծէւին , որպէս զի պաշտպանեն բարիներն ինչպէս չարերը , և տկարն ապրիխաղաղութեամբ :

Եւ իշխանութիւնը՝ զոր ՚ի զործ կ'ածէին՝ օրինաւոր իշխանութիւն մ'էր . քանզի Աստուծոյ իշխանութիւնն էր՝ որ կ'ուզէ որ արդարութիւնը թագաւորէ , և ժողովրդեան իշխանութիւնը՝ որ զայնտ լնորած էր :

Եւ ահա այսու պատճառաւ իւրաքանչ իւր ոք խղճի մտօք անոնց հնազանդիլ պարտաւոր էր :

Բայց եղան ընդ հուսու այնովիք՝ որ ուղեցին ինքնին և ինքնիշխան տիրել , իրու

թէ իրենց եղբարցմէ բարձր բնութիւն մ'ունենային :

Եւ այս իշխանութիւնը չէ՛ր օրինաւոր , զի Սատանին է այն իշխանութիւն , և իրենց տիրապետութիւնը ամբարտաւանութեան և ցանկութեան տիրումնը :

Եւ ասոր համար , երբ աւելի չարեաց պատճառ ըլլալու երկիւղ մը չըլլայ , անցնիւր անհատ կրնայ և երբեմն պալսի խոկ անոնց դիմադրել :

Յաւիտենական իրաւանց կըոյն մէջ , ձեր կամքը ժմուր կը կցուէ քան զարքացից կամքը . զի ժողովուրդներն են՝ որք թագաւորներ կ'ընեն . և թագաւորք ժողովուրդոց համար եղած են , բայց ժողովուրդք թագաւորաց համար եղած չեն :

Երկնաւոր Հայրը խր գաւակաց անդամներն առ այն շատեղծեց որ երկաթներու տակ մաշին ու խորտակին , և ո՛չ նոցա հոգին՝ որպէս զի ատրկութեան ներքե ճնշուի չարատանջ :

Նա զանոնք ընտանիքներով միացուց , և ամեն ընտանիքները քոյլ են . զանոնք ՚ի մի խմբեց աղդերով , և ամեն աղդեր եղ բայր են .

և ա՛վ որ ընտանիքները ընտանիքներէն , աղ-  
դերը աղդերէն կ'անջատէ , կը բաժնէ ինչ որ  
Աստուած գուգած է . Սատուանի գործը կը-  
կատարէ :

Եւ ինչ որ ընտանիքներն ընտանեաց կը-  
դուգէ և աղդերն աղդաց կը կցորդէ , այն՝ նախ  
Աստուածոյ օրէնքն է , արդարութեան և գը-  
թութեան օրէնքը , և ապա աղասութեան օ-  
րէնքը՝ որ նոյնպէս Աստուածոյ օրէնքն է :

Վասն զի առանց աղասութեան ի՞նչ մի-  
ւթիւն կարելի է ըլլալ մարդոց մէջ : Առանց  
անոր՝ նոյա միւթիւնը կը նմանի ծիուն իր  
վերելակին , և տիրոջ խարազանին ատրկին  
մորթին հետ միւթեանը :

Ապա ուրեմն եթէ մէկը գայ ու ըսէ ,  
“ Դուք իմա եք ” , պատասխանեցէք . “ Ոչ .  
մեք Աստուածոյ եմք՝ որ մեր հայրն է , և Քը-  
րիսոսով՝ որ մեր միակ տէրն է : ”

Ի .

Պատիր և ունայն խօսքերէ զիւրեաւ մի'  
խարիք : Բազումք պիտի ջանան համոզելու  
զձեզ թէ դուք առողիս աղատ էք , վա-

որն զի թէրթ մը թղթի վրայ “ Աղասու-  
թիւն ” , բառը պիտի գրեն և զայն ամեն քա-  
սողեաց բերաններն ’ի տես պիտի գնեն :

Աղասութիւնը տախտակ մը չէ՝ զոր փո-  
ղոցին անկիւնը կը կարդան : Կենդանի կարո-  
ղութիւն մը , զօրութիւն մ'է այն՝ զոր մարդ  
յինքեան և զինքեամբ կ'զգայ , լնառնեկան  
յարկին պահապան ողին , ընկերական իրա-  
ւանց երաշխաւորութիւնը , և այս իրաւանց  
սուաջինն է :

Այն հարստահարիչը՝ որ անոր անուամ-  
բը ինքինք կը ծածկէ՝ հարստահարչաց չա-  
րագոյնն է : Նա սուտը բանաւորութեան  
վրայ կը յաւելլու , և անիրաւութեան հետ  
սրբազնութիւնն ալ կը կցէ . զի սուրբ է ա-  
զասութեան անունը :

Զգոյշ եղիք ուրեմն անոնցմէ՝ որք կ'ը-  
սեն . “ Աղասութիւն , Աղասութիւն , ” , և  
իրենց գործերով զայն կը քանդեն :

Գո՞ւք կ'ընտրէք զայնս՝ որք զձեզ կը կա-  
ռավարեն , որք ձեզի կը հրամայեն զայն ինչ  
ընել և զայն ինչ չընել , որ ձեր ընչից , ձեր  
հարուրաւթեան , ձեր աշխատութեան սահ-

ման և օրէնք կը զնեն : Եւ եթէ դուք չէք, ի՞նչպէս ապա ազատ էք :

Կրնա՞ք ձեր կոմաց համաձայն ձեր գաւակաց ապագայն սրամրաստել, զամանք կը ըթելու և նոցա բարբերը կազմակեցվելու հոգը յանձնել որ հաճոյ է ձեղ : Եւ եթէ չը կարէք, ի՞նչպէս ապա ազատ էք :

Երկնից թռչունք և միջատք խակ կը հաշամախմբին՝ միահաղոյն լնելու ինչ որ ո՛չ մին ի նոցանէ կրնար առանձին ընել :

Կրնա՞ք դումարիլ ՚ի միասին ձեր շահուց վրայ խորհրդակցից լու, ձեր իրաւունքները պաշտպանելու, ձեր տառապանաց դարման մը ձեռք բերելու : Եւ եթէ չկարէք, ի՞նչպէս ապա ազատ էք :

Կրնա՞ք երթալ մէկ տեղէն միւսը եթէ ձեղ չթրյալարեն, գործածել երկրին պտուղները և ձեր վաստակոց արդիսնքները, թաթխել ձեր մատը ծովաւն ջրոյն մէջ և կաթիլ մը վազցնել խեղճուկ հոգէ ամանին մէջ՝ որ ձեր սնունդքը կ'եփին, առանց ձեր անձը տուգանաց և բանտարկութեան ենթարկելու : Եւ եթէ չկարէք, ի՞նչպէս ապա ազատ էք :

Կրնա՞ք, երեկոյին պառկելու առեն, վստահ ըլլալ թէ ոչ ոք, ձեր քնոյ միջոցին, պիտի գոյ ձեր տանն ամենէն ծածուկ խորշերը խուզարկելու, զձեզ ձեր ընտանեայ ծուցէն խլելու և բանտի մը խորը նետելու, որովհետեւ կը կիսանութիւնը, իւր երկիւղին մէջ, ձեր վրայ կասկած մ'ունեյեր է : Եւ եթէ չըկարէք, ի՞նչպէս տոպա ազատ էք :

Աղատութիւնն յայնժամ ձեր վրայ պիտի շողայ, երբ բազում արխութեամբ և անխոնջ յարատեւթեամբ յաջողիք զերծանիլ բոլոր այս ստրկութիւններէն :

Աղատութիւնը յայնժամ ձեր վրայ պիտի շողայ, երբ լսէք ձեր հոգւոյն խորոց մէջ և Աղատ ըլլալ կ'ուզեմք ։ Երբ ըլլալու համար, պատրաստ ըլլաք զամեն ինչ զոհելու և զամեն ինչ կրելու :

Աղատութիւնը յայնժամ ձեր վրայ պիտի շողայ, երբ, յան խաչին՝ որոյ վրայ Քրիստոս ձեզ համար մեռաւ, երգնուք միմանց վրայ մեռնիլ :



ԱԱ.

Փողովուրդն անկարող է իւր շահերն ՚ի  
միտ առնելու . պէտք է որ , իւր բարւցն ու  
օգտին համար , իրը անշափահաս ժառանգ մը ,  
միշտ խնամակալ մ՛ունենայ իւր վրայ : Մի-  
թէ լոյս և գիտութիւն ունեցողներուն անկ չէ՝  
վարել զայնս՝ որք զուրկ կան յայսանէ :

Այսպէս կը խօսին խել մը կեղծաւորք՝  
որք կ'ուզեն ժողովրդեան գործերն յահան-  
ձել . նորա կենաց սննդովն պարարելու համար:

Դուք անկարող էք , կըսեն , ձեր շահե-  
րըն հասկընալու . և լստ այսմ չպիտի ներեն  
ձեզ ձերն եղած մէկ բանը գործածել ձեր  
օդտաւէտ գատած մէկ առարկային , և հա-  
կառակ ձեր կամաց պիտի տնօրինեն զայն ու  
գործածեն այնավիս բանի մը՝ որ անհաճոյ է  
ձեզ և ամենակին անպիտրժ :

Դուք անկարող էք հասարակաց փոքրիկ  
աեփհականութեան մը տեսչութիւնն ընելու ,  
անկարող՝ գիտնալու ձեր բարին ու զնասակա-  
րը , հանչնալու ձեր պիտոյքն ու զայնս հո-

գալու . և լստ այսմ , ձեզի պիտի զրկեն ձեր  
ժախրօնին առառապէս վճարւուած մարդիկ՝ ոք  
լստ քմաջ ձեր ընչից ու սոսացուածուց մատակա-  
րարութիւնը պիտի ընեն , պիտի արդիւն ձեզ  
ընել ինչ որ կ'ուգէք , և պիտի բանազբօնեն  
զձեզ լնելու ինչ որ չէք ուզեր :

Դուք անկարող էք որոշելու թէ ի՞նչ  
գասակարակութիւն պատշաճ է տալ ձեր զա-  
ւակաց . և առ ՚ի սէր ձեր որդւոց , զանոնք  
ամպարշութեան և վասուրաբոյութեան աղ-  
բեւանայներու մէջ պիտի նետեն , ՚ի բաց առ-  
եալ միայն երբ նախամեծար համարիք նոցա  
ամեն տեսակ հրահանդումէ զուրկ մնալը :

Դուք անկարող էք դատելու թէ արդ-  
եօք ձեր աշխատութեան փսխարէն ձեզ ընոր-  
հուած թոշակը բաւական է զձեզ և ձեր ըն-  
տանիքն ապրեցնելու . և խիստ ու դժնդակ  
պատիմներով պիտի արդելուն ձեզ միմեանց  
հետ խորհրդակցել այս թոշակին նկատմամբ  
յաւելում մը ձեւոք բերելու մասին , որպէս  
դի կարող ըլլաք ապրիլ գուք , ձեր կանայքն  
ու ձեր զաւակունքք :

Եթէ ոյս կեղծաւոր՝ շահախնդիր ու ան-

յագ մարդոց ըստածն ճշմորիտ ըլլար , դուք  
քան զանբանից դամն կոչի ստորնադրյն պար-  
տեիք լինել , քոնզի անբանը գիտէ բոլոր ինչ  
որ կը հաւատոտեն թէ դուք չշխաէք , և զայս  
գիտելու համար բնազգումնը միայն բաւա-  
կան է անոր :

Աստուծծ զձեղ չտծեց 'ի գոյ զի դուք  
մի քանի մարդոց սեփսկան հօռն ու նախիրն  
ըլլար , Նո զձեղ ստեղծեց լնկիրութեամբ  
ազատորէն ապրելու համար իրրե եղբարք :

Արդ եղբայր մը չունի ինչ հրամոյելու  
իւր եղբարք : Եղբարք իրենց մէջ փոխա-  
դարձ զաշինքներով կը կապուին , և դաշինքն  
ները՝ օրէնքն է , և օրէնքն յորդուիլ պէտք  
է , և ամենքն միանալ պարտին զայն բըռնա-  
բարութենէ զերծ պահելու համար , զի հա-  
մայնից պահապանը , ամենուն կամքն ու շա-  
հըն է այն :

Մարդ եղիք . ո՛չ ոք զձեղ յակամայս  
ձեր լուծի լծելու չափ զօրաւոր է . բայց դուք  
կրնաք ձեր վիզն հոն անցընել եթէ ուղիք :

Կան ապուշ կինդանիներ զորո դոմերու  
մէջ կը փակեն , աշխատութեան համար սը-

նունդ կուտան անոնց , և յետոյ , երբ ծերա-  
նան , կը չարչարեն նոցա միան սատելու համար .

Կան այլք՝ որք ինքնիշխան ու աղիկա-  
մի կ'ապրին դաշտաց մէջ , զորո չիարէ ոք  
ժառայութեան թեքել , որք չեն որսացուիր  
խարեպատիր գուռանքներով և ո՛չ ալ կը յաղ-  
թուին սպառնալեօք կամ շարաչար նեղուա-  
թիւններով :

Արիասիրտ մարդիկ այս վերջիններուն  
նման են . իսկ վասք առաջնոց են հանգու-  
նատիպ :

Ի՞ :

Լաւ 'ի միտ առէ՛ք ինչպէս կրնայ մէկը  
ազատ ըլլալ :

Ազատ ըլլալու համար , պէտք է նախ  
քան զամենայն զԱստուծծ սիրել , վասն զի  
եթէ զԱստուծծ սիրել , նորա կամքը պիտի  
կատարեք , և Աստուծոյ կամքն արդարութիւ-  
նըն ու գթութիւնն է , առանց որոց չիք ա-  
զատութիւն :

Երբ , բանութեամբ կամ խարէութեամբ

իւիք, ուրիշին եղած մի բանն առնէ մէկը, երբ նորա անձին վրայ կը յարձակին, երբ օրինաւոր բանի մը մէջ չթողուն իրեն ընել ինչ որ կ'ուզէ և կամ ստոպեն գործել ինչ որ չուզեր, երբ ո՛ր և է կերպով մը նորա իրաւունքը բննաբարեն, ի՞նչ է այս : Անիրաւութիւն մը : Ուրեմն անիրաւութիւնն է որ զաղաւութիւնը կը կործանէ :

Եթէ անցնիւթ՝ ոք զինքն և եթ սիրէր և յինքն միայն խորհէր, առանց յօդնութիւն փութալու սցըց, բազում այն է զի տղքաւոր պիտի ստոպէր գողնալ ինչ որ խրս չ' ապրելու և իրեններն ապրեցնելու համար, տկարը զօրագունէ մը պիտի կեղեքուէր, և այս վերջինն ալ աւելի զօրաւորագունէ մը. յայնժամ անարգարութիւնն ամեն ուրիշ պիտի տիրէր : Գթութիւնն է ապա որ զաղաւութիւնը կը պահպանէ :

Սիրեցէք զԱստուած առաւել քան զամենայն ինչ և ձեր ընկերը իրիւ ձեր անձնը, և արկութիւնն երկրէ անհետ պիտի կորնչի :

Սակայն նորա որք իրենց եղբարց ըստրիտետն մէջ շահ ոճին և օդուու, ամեն

ինչ ՚ի գործ պիտի գնեն զայն յերկարաձգեւու համար : Եւ այս նպատակիս համար սուստն ու ոյժն ՚ի կիր պիտի արկանեն :

Պիտի ըսեն թէ ոմանց բացարձակ և ինքնակամ տիրապետութիւնը և բոլոր այլոց գերութիւնն յԱստուծոյ հաստատեալ կարգն է . և իւրեանց բոնակալութիւնն անսասան ու յարատե պահելու համար, Նախակնամաւթեան գէմ հայհոյելու իսկ չպիտի երկնչին :

Պատասխանեցէք անոնց թէ Սատանն է իրենց Աստուածը, մարդկային սեռին ոխերիմ թշնամին, և թէ ձերը նա՛ որ Ստոսանին յաղ թանակեց :

Յետ այսորիկ խրեանց արբանեակները ձեզ գէմ շղթայազերծ պիտի արձակեն . անթիւ բանտեր պիտի լինեն, զձեզ նոցա մէջ փակելու համար . հրով և երկաթով զձեզ պիտի հալածեն . պիտի Ակեն զձեզ և ձեր արինը պիտի հեղուն աղբեկներու ջրոյն նման :

Ուրեմն եթէ հաստատ որոշած չէք անդու մարտնչելու, ամեն բանի տոկալու անկուն և անընկձելի, ոչ երբէք յոդնելու, բնա՛ւ տեղի չտալու, պահեցէք ապա ձեր

չըղթայքն ու հբաժարեցի՛ք ազատութենէ մը՝  
որում չէ՛ք արժանի :

Ազատութիւնը Աստուծոյ թագաւորաւ-  
թեան նման է . կը բռնաբարի , և բռունք զայն  
կը յափշոակեն :

Եւ բռնութիւնը՝ որ ազատ պլատի ընէ ըգ-  
ձեզ՝ գողոց և աւազակաց վայրագ բըռնաւո-  
րութիւնը , անիրաւութիւնն ու վրէժիլնդ-  
րութիւնը , անդթութիւնը չէ , այլ հզօր , ան-  
սասան ու անընկելի կամք մը , անխռով և  
վեհանձն արիութիւն մը :

Ամենէն սուրբ ու նուիրական դասը կը-  
փոխուի ամպարշտական՝ պժգալի դասի մը ,  
երբ ՚ի պաշտպանութիւն անոր սճիքն ՚ի գործ  
կ'ածուի : Ոճրագործը գերութենէ կրնայ ՚ի-  
րոնակալսւթիւն փոխակերպիլ , բայց ո՛չ բը-  
նաւ յազատութիւն բարձրանալ :

Ի՞՞ :

Տէ՛ր , առ քեզ կը գոչեմք մեր աղէտից ու  
թշուառութեանց ի՞որէն :

Իրիւ զանասունա՝ ոյք չունին ճարակ իւր-

եանց ձագուց տալու ,

Կը գոչեմք առ քեզ , տէր :

Իրիւ զմաքի յորմէ իւր գառնուկն կը-  
լուն ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

Իրիւ զաղանի՝ որ անգեղ մագլաց մէջ  
կը տանչի ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

Իրիւ զիկիթ ընդ ճիրանօք վագեց ,

Կը գոչեմք առ քեզ . Տէր :

Իրիւ զաղանի վաստակաբեկ և արիւնաշա-  
ղախ ՚ի խթանէ ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

Իրիւ զիւշուն վիրաւոր՝ զսր շուն հա-  
լածէ ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

Իրիւ զծիծուն՝ որ ծովերն անցնելու ա-  
տեն ողեսպատ ինկած , կոհակաց վրայ կը-  
տանչի ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

Իրիւ զաղերոս՝ այրեցեալ ու անջրդի  
անապատի մը մէջ մոլորահետ ,

Կը գոչեմք առ քեզ , Տէր :

իբրև զնաւարեկեալը երփղւտու ու ասկա-  
լեր ծովեզեր մը վրայ,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զայրն՝ որ 'ի պահուն՝ յորում դե-  
շերը կ'սկսի, գերեզմանատան. մը քով ժամ-  
տատեսիլ ուրուականի մը կը պատահի,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զհայրն՝ յորմէ կը կորզեն պատա-  
ռըն հացին՝ զոր խոր քաղցեալ զաւակաց կը-  
տանէր,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զբանտարգելն՝ զոր զօր անիրա-  
ւը նետած է խոնաւ և խաւարամնա բանտի  
մը խորը :

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զստրուկ՝ կոչիմեալ կարեվեր տի-  
րոջ խարազանէն,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զանմեղն՝ զոր 'ի տանջանկ կը-  
տանին,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զժողովը թարայելի յերկրին գե-  
րութեան,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զզաւակս Յակոբայ՝ զորոց Եզիաք  
տոսի թաղաւորը Նեղոսի մէջ կը հեղձուցանէն  
անդրանիկները,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զերկոտասան ցեղմն որոց հարստա-  
հարիչներն ամեն օր աշխատութիւնքը կը յա-  
ւելուին, և ամեն օր իրենց մնունդէն բան մը  
կը պակսեցնէին,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև երկրին բովանդակ ազդերը, դեռ  
ազատութեան արշալյոր չծագած,

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

իբրև զթրիստոս 'ի խաչին, երբ ըոսու-  
ու Հայր իմ, Հայր իմ, ընդէ՞ր թողեր զիս ու.

Կը գոչեմք առ քեզ, Տէր :

Ո՛վ Հայր, զու չեքեր երբէք անօդնա-  
կան քո Որդին, քո Քրիստոսը, բայց միայն  
'ի վերին երես և առ վայր մի ։ չպիսի Լքա-  
նես ընդ միշտ նաև Քրիստոսի եղբարքը :

Նորա Աստուածային արիւնը, որ զայնա  
զնեց, ու փրկեց այս աշխարհի նշխանին գե-  
րութեանէն, պիտի զնէ ու փրկէ նաև զանոնք

այս աշխարհիս Խշխանին պաշտօնէից գերութենէն : Տե՛ս նոյս ծակոսեալ ու արիւնլուայ ուներն ու ձեռները , նոյս խոյ կողը , նոյս վիրալից գլուխը : Երկրին ներքեւ՝ զոր նոյս տուած էիր ՚ի ժառանգութիւն , նոյս համար լոյնաւէտ գերեզման մը պեղեցին , և զանոնք խառնաշփոթ հոն նետեցին , և կափարիչը կնքեցին կնքով մը՝ որոյ վրայ առ ծաղու քո սուրբ անունդ զրաշմեցին : Եւ այսպէս , Տէր , անդ անկեալ գնին նոքա , այլ շպիտի ըլլան հոն առ յաւէտ : Այլ ևս երեք աւուրք , և սրբապիղծ կնքը պիտի քակուի , և կափարիչը պիտի փշրի , և նոքա՝ որք կը չնշեն պիտի զարթնուն , և Քրիստոսի թագաւորութիւնը , որ արդարութիւն և գթութիւն , և խաղաղութիւն և խնդութիւն է ՚ի Հոգին Սուրբ , պիտի սկսի : Եղիցի :

Ի՞ :

Ամեն ինչ որ կը պատահի աշխարհի մէջ՝ իրեն աղդարար ու յառաջընթաց մէկ նընաշն ունի :

Երբ արեգակը մերձ է ՚ի ծաղել , հորիզոնը բիւր գրյներավ կը գեղերփնի , և Արեւելք բոցաբորբոք կը թուին :

Երբ մրրիկը կուգայ , կը լսուի ՚ի ծովեղերըն խուլ սօսափիւն մը , և կոհակը յուզեալ կը ծփին ինքներեր :

Այն այլ և այլ անհամար դաղափարներն որ հսկեղէն աշխարհին հորիզոնին վրայ զիրեար կը կտրեն և յիրեար կը խառնուին ու կը շփոթին , իմացականութեանց արեւուն ժաղման յայտարար նշանն են :

Յուզման մէջ եղող ժողավրդոց խառնաշփոթ մրմանչն ու ներքին խլրտումնը յառաջընթաց նշանն են այն մրրկին՝ որ ընդ հուպ դողդովուն ու սրտաթունդ ազդաց վրայէն պիտի անցնի :

Պատրաստ կացէ՛ք , զի ժամանակները կը մերձենան :

Այն օրը , մեծ սոսկումներ և աղաղակը պիտի ըլլան՝ որոց նմանը լսուած չէ ջրհեղեղին օրերէն ՚ի վեր :

Թագաւորք իրենց դահոյից վրայ պիտի օսրսին . պիտի ջանան իրենց երկու ձեռնե-

բավը պինդ բռնելու իրենց թագերը՝ զորս  
հողմունք պիտի առնեն տանին, և անոնց հետ  
իրենք ևս պիտի աւլուին :

Ճռակը և հզօրք մերկ դուրս պիտի նետ-  
ուին խրեանց պալատներէն զի մի՛ դուցէ նո-  
ցա աւելրակաց տակ. թաղումին :

Թափառական՝ ի ճանապարհս, պիտի տես  
նուի անցորդներէն նոյս մի քանի ցնցոտիներ  
խնդրելն իրենց մերկաթիւնը պատուապարելու,  
և գոյզն ինչ աև հաց՝ իրենց քաղցն յագեցը-  
նելու համար, և զիտեմ թէ այսի ընդունին:

Եւ պիտի ըլլան մարդիկ՝ որք արեան  
ծարաւով պիտի բորբոքին, որք մահը պիտի պաշ-  
տեն, և ախտի ուղղեն ասամեց ուս ուսն.

Եւ մահն իւր կմախային ձեռնը պիտի տարածէ իրուս զայնս օրհնելու համար, և այս օրհնութիւնը պիտի իջնէ իրենց սրավն վրայ, և պիտի դադրի տրոփելէ :

Եւ գիտունք յուղեալ պիտի խռովին ի-  
րենց զիտութեան մէջ՝ որ իրենց իբր փոքրիկ  
սեաւ կէտ մը պիտի երևէ , երբ իմացակա-  
նութեանց արևը ծագի լուսամիւռ և ճանան-  
չութեաց :

Եւ քանի որ նա երկնից մէջ բարձրանայ .  
իւր զերմութիւնը պիտի յնդէ մրրկէն զիղուած  
առմագերը , և անոնք այլ ևս իրրւ թեթև շոդի  
մը պիտի ըլլան՞ զոր քաղաքաշունչ հողմ մը  
գէպ յԱրեւմուստ պիտի վանէ :

Երբէք երկինքն այնքան վճիռ ու պաշտօն , և երկիրն այնքան դաշտագեղ ու արգաւանդ եղած չպիտի ըլլույ :

Եւ փոխանակ աղօտոսիայլ վերջնալուսոյն  
զոր տիւ կը յարջորջենք, չինչ ու սաստիկ լոյն  
մը պիտի ճառագայթէ ՚ի բարձանց, իբրև Աս-  
տուծոյ դիմաց մէկ ցոլը :

Եւ մարդիկ այս լուսոյ փայլման գիրեար  
պիտի նկատեն, և պիտի ըսեն, մեք գիրեար  
չէինք ճանչեր. զգիտէինք ի՞նչ է մարդը:  
Արդ այժմ գիտենք:

Եւ անցնիւր ոք զիւր անձնը պիտի սիրէ  
իւր եղբօրը մէջ և անոր ծառայելովն երջաւ-  
նիկ պիտի համարի ինքը ինք , և չփառի ըլլան  
ո՛չ փոքունք ո՛չ մեծք , սիրոյն պատճառաւ որ  
կը հարթէ ու կը հաւասարէ զամենայն . և  
համայն ընտանիքներ մի և եթ ընտանիք պի-

որի կազմեն, և աղդք ողջոյն և աղինք մի՛ միայն մէկ աղդ պիտի ըլլան :

Այս է իմաստն այն խորհրդաւոր գրեւ-  
րուն՝ զորս կուրամիտ Հրէայք Քրիստոսի խա-  
շին վերևը զրեցին :

ԻԵ .

Դիշեր մ'էր ձմերան : Հողմը կը մռըն-  
չը դուրսը, և ձիւնը տանիքները կը ճերմըկ-  
ընէր :

Այս տանիքներէն միոյն ներքեւ, նեղ ու  
անձուկ խցիկ մը մէջ, նառած էին կին մը  
սպիտակահեր և աղջիկ մը՝ որք ձեռադործով  
կ'աշխատէին :

Եւ պահ ընդ պահ ծերունի կինը փոք-  
րիկ կրակարանի մը վրայ իւր գունաթափ ձեռ-  
ները կը չեւսացանէր : Կաւեղէն կանթեղ մը  
այս աղքատին բնակարանը կը լուսաւորէր, և  
կանթեղին մի ճաճանչը կուգար մեռնիլ պա-  
տէն կախուած Աստուածամօր պատկերին վրայ :

Եւ աղջիկը, աշերը վերցնելով, ըրիկ ու  
անշունդ նկատեց, մի քանի վայրկեան, ըս-

պիտակահեր ծերունի կինը . յետոյ ըստ անոր-  
“ Մա՛յր, դու միշտ այս չուառ կայտթեան  
մէջ չես եղած : ”

Եւ իւր ձայնին մէջ անբաշատրելի քաղց-  
րութիւն մը և գորով մը կար :

Եւ սպիտակահեր կինը պատասխանեց .  
“ Դուստր իմ, Աստուած է տէր . ինչ որ կ'ը-  
նէ՞ բարի է : ”

Այս խօսքելն ըսելէ յետոյ, լուռ կեցա-  
վայրիկ մի . յետոյ յարեց .

“ Երբ քու հայրդ կորուսի, վիշտ մ'ե-  
ղաւ այս՝ զօր անմիթար կարծեցի . սակայն  
դու ինձ կը մնայիր . բայց այն ատեն միայն  
մէկ բան կ'զգայի ես :

“ Այս ատենէն, մտածեցի թէ եթէ կեն-  
դանի ըլլար և զմեղ այս ծայրայեղ չքաւո-  
րութեան մէջ տեսնէր, իւր հոգին պիտի կե-  
ղեքէր . և համոզուեցայ թէ Աստուած անոր  
համար բարի եղած էր : ”

Աղջիկը ոչ ինչ պատասխանեց, բայց գլ-  
ուխն հակեց, և մի քանի արտառոք, զոր

Ֆաթկել կը ճզնէր , ինկան պյն կտաւին վրայ՝  
զոր ունէր 'ի ձեռին :

Մայրը յաւել . “ Աստուած , որ անոր  
համար բարի եղաւ , նաև մեզ համար նոյն  
բարութիւնն ունեցաւ : Խնչ բան պակսեցաւ  
մեզ , միշտեռ այնքան ուրիշներ յամենայնէ  
զորկ են :

“ Ստոյդ է թէ քիչի սովորել հարկ ե-  
ղաւ եւ սյս քիչն ալ մեր աշխատութեամբ  
հայթայթել . բ սյս սյս քիչը միթէ չբաւեր .  
եւ միթէ 'ի սկզբանէ ամենքն իրենց վասնա-  
կօքն ապրելու դասավարտեալ չե՞ն :

“ Աստուած , իւր բարութեամբը , տուաւ  
մեզ մեր ամենօրեոյ հացը . եւ քանինե՛ր զայն  
շունին . տուաւ մեզ ապաստանարան մը , եւ  
քանինե՛ր չգիտեն ո՛ւր պարտին ապաստանիլ :

“ Զքեզ , դուստրդ իմ , ինձ տուաւ . առ  
ի՞նչ ուրեմն տրտնջամ , ի՞նչ բանի համար դըժ-  
գոհիմ : ,

Այս վերջին խօսքերուն , օրիորդը , բո-  
լորովին սրսայոյզ , իւր մօրն ոտքը ինկաւ ,  
նորա ձեռներն առաւ , համբորեց զայնս , եւ

անոր ծոցին վրայ խոնարհեցաւ արտասուա-  
խառն հեկեկանօք :

Եւ մայրը , ձայնը բարձրացնելու համար  
նիդ մ'ընելով , “ Դուստրդ իմ , ըստաւ , երա-  
նութիւնը շատ անենալուն մէջ չկացանար , այլ  
շատ յուսալուն ու սիրելուն մէջ :

“ Մեր յոյսը չէ՝ յաստիս , ո՛չ ալ մեր  
մէրը , կամ , եթէ է , յանցանեն միայն :

“ Յետ Աստուածոյ , զու ամենայն ինչ ես  
վասն իմ յաշխարհի , բայց սյս աշխարհը իր-  
բերագ մը կանհետի , և ահա սյս պատճա-  
ռաւ իմ սէրս քեզի հետ դէպ որիշ աշխարհ  
մը կը վերապահոյ :

“ Երբ դքեզ ծոցիս մէջ կը կրէի , օր մը ,  
առաւել եռանդագին աղօթեցի կուսին , և  
քնոյս մէջ ինձ երեցաւ , և թուեցաւ ինձ թէ  
երկնային ժպիտ մ'ի շրթունս , մանկիկ մ'ինձ  
կը ներկացացնէլ :

Եւ առի մանուկը՝ զբր ինձ կը ներկայա-  
ցընէր , և , երբ զայն բազկացու մէջ բռնեցի  
Կուսամայրը նորա գլխուն վրայ դրսու ոպի-  
տակ վարդից պատկ մը :

“ Քիչ ամիս վերջը ծնար դու , և քաղցր տեսիլը միշտ աչոցա առջևն էր : ”

Զայս ըսելով , սպիտակահեր կինը սարսաւայ , և զօրիորդն իւր ժողին վրայ սեղմեց :

Ժամանակ մը վերջը , սուրբ հոգի մը երկու լուսանիւթ կերպարանաց յերկինս ՚ի վեր սաւառնելը տեսաւ , և հրեշտակաց պարմը կ'ընկերակցէր անոնց , եւ օդը կը թնդայր նոցա ցնծութեան երգերէն :

### Ի՞Զ .

Ինչ որ ձեր աչքերը կը տեսնեն , ինչ որ ձեր ձեռքերը կը ջշտին , սոսուերք են լրկ , և ձայնը որ ձեր սկսնջը կը զարնէ՝ խոպտարձականքն է միայն այն ներքին և խորհըրդաւոր ձայնին՝ որ կը պաշտէ , և կ'աղօթէ , և կը հեծէ արարշութեան ծոյլն մէջ :

Քանզի ամեն արարած կը հեծէ , անցա նիւր արարած ծնման երկանց մէջն է , եւ կը ճգնի ծնանել ՚ի ճշմարիտ կեանս , մուսցէն ՚ի լըս անցնիլ եւ պատիր երեւթից աշխարհէն յաշխարհն իրականութեանց :

Այս ա՛յսքան ճաճանչալոյս , ա՛յսքան գեղանշյլ արեգակնը հանդերձն , մթին օրինակըն է միայն ճշմարիտ Արփույն՝ որ հոգիները կը լուսաւորէ և կը չեռուցանէ :

Այս ա՛յսքան բեղմնառատ , ա՛յսքան դաշլարազուարճ երկիրը բնութեան մահահամբոյր պատահն է եւ եթ . զի բնութիւնն անկեալ ինքն իսկ , մարդուն նման ՚ի գերեզման իջած է , բայց անոր պէս զուրս պիտի ելնէ անսի վերակենդան :

Մարմնոյ ոյս թանձր ծածկութին ներքեւ , զուք նման էք աղեւորի մը՝ որ , զիշեր ատեն , իւր վրանին մէջ , որուականաց անցնիլը կը տեսնէ կամ տեսնել կը կործէ :

Իրական աշխարհը ձեզ համար վարագուրսած է քողածածուկ : “ Նո՞ որ իւր սրտին խորոց մէջ կառանցնանայ՝ կ'ընդնշմորէ զայն հոն իրր ՚ի հեռուատ : Փաղանի զօրութիւններ որք կը ննջեն յինքեան՝ կը զարթնուն վայրկեան մը , վեր կը վերցնեն քողոյն մէկ անկիւնը զոր ժամանակը իւր կնճռեալ ձեռնովը կը բռնէ , եւ ներքին աշը հիացեալ յատրու կը կրթի իւր նկատած սքանչելիքներէն :

Դուք եթզ ովկեանին և դրը նատած էք .  
բայց երբէք չալխաի թափանձէք նորա խորու-  
թեանց մէջ : Ընդ երեկս կը քայլէք յերկաց-  
նութիւն ծովուն , եւ ո՞չ այլ ինչ կը աւենէք  
բայց եթէ դցյղն ինչ փրփուր՝ զոր կոհակը  
ծովեղեր վրաց կը նետէ :

Ի՞նչի տակաւին նմանեցնեմ զձեւք

Դուք նման էք խր մօրն արգանդին մէջ  
եղած մանկան՝ որ ծննդեան ժամուն կ'ըսպա-  
սէ . նման թեւաւոր միշատին՝ որ գետնասող  
որդին մէջ կայ ծածկեալ , կ'ըղձայք դուրս ել-  
նել այս երկրացին բանտէն , որպէս զի ձեր  
թռիչն առնոք . ի վեր ՚ի յերկինս :

Ի՞նչ .

Ո՞վ էր որ կը խոներ Յիսուսի շուրջը նորա  
խօսքը լսելու համար : Փողովուրդը :

Ո՞վ էր որ անոր ետևէն կերթացը ՚ի  
լեառն և յանսպատ տեղիս անոր վարդա-  
պետութեանց , ունկնդրելու համար : Փողո-  
վուրդը :

Ո՞վ կուզէր զայն թագաւոր ընտրել :  
Փողովուրդը :

Ո՞վ նորա սովոց տակ իր զգ եստները կըտա-  
րածէր և նորա առջև արմաւենեաց և ձիւ-  
թենւոյ հիւղեր կը սփռէր . Ովաննա՛ ո գո-  
շլով , երբ նա յերաւաղէմ կը մանէր :  
Փողովուրդը :

Ո՞վ էր որ կը գայթակղէր շաբաթ օր  
հիւանդներ բժշկելուն համար : Դպիրք և Փա-  
րիսեցիք :

Ո՞վ զայն կը հարցափորձէր նենդիւ և զայն  
՚ի մահ մատնելու համար դաւեր ու որոգայթ-  
ներ կը լարէր : Դպիրք և Փարիսեցիք :

Ո՞վ կ'ըսէր նորա համար . Դև գոյ ՚ի զմա-  
Ո՞վ զնա շուստ ու հեշտակը կը կոչէր : Դը-  
ովիրք և Փարիսեցիք :

Ո՞վ զնա մոլորեցուցէն հայհոյին կ'ամուա-  
նէր . ո՞վ դաւակցեցաւ զնա սպաննելու հա-  
մար . ո՞վ զնա գամեց ՚ի խաչին երկոց ա-  
ւազակաց մեջ տեղը :

Դպիրք եւ փարիսեցիք , փարգապետք օ-  
րինաց , Հերովզէս թագաւորն ու իր մարդե-

լցող արականատականներն , հռովմայեցի դեհաւապեսն եւ քահանույսապեսներն :

Խորեանց կեղծաւոր նենդամութիւնը պատրեց ժողովուրդն իսկ : Գրգռաւեցին զայն նորա մահը խնդրելու , որ եօթն հայրւ կերակրած էր զնա յանապատին , որ առողջութիւն կուտայր հիւանդաց , տեսութիւն կուրաց , լսողութիւն խլաց , եւ անդամալցճներուն՝ իրենց անդամոց գործածութիւնը :

Բայց Յիսուս , տեսնելով որ մոլորեցուցած էին զժողովուրդն ինչպէս օձն զկին պատրեց աղաշեցիւր Հօրն , բայլով . « Հայր իմ , թաղ առցա , զի ոչ զիսեն զի՞նչ գործեն : »

Եւ սակայն , անդամոփն յութ եւ տասն դարուց հետէ , Հայրը դեռ չէ ներած անոնց եւ իրենց տանջանքն ընդ քարշ կ'ածեն ընդ բոլոր երկիր , եւ ընդ ողջոյն աշխարհ սորուկը գանոնք տեսնելու համար խոնարհելու առիպուած է :

Քրիստոսի գթութիւնը չ'ունի խորի : Նա յաշխարհ եկաւ ոչ մի քանի մարդկէ ոյլը բզրոլոր մարդկութիւնը փրկելու : Մարդոց իւրաքանչիւրին համար կաթիլ մ'արիւն ունեցաւ

Բայց փոքրունք , տկարք , խոնարհք , աղքատք , բոլոր անոնք՝ ոյք կը տառապէին ու կը նեղուէին , կը սիրէր զանոնք անհուն և սերտ սիրով մը :

Խոր սիրով կը բարախէր ժողովրդեան սրտին վրայ , և ժողովրդեան սիրով կը բարախէր իւր սրտին վրայ :

Եւ հո՛ն , Քրիստոսի սրտին վրայ է՝ որ ախտաժէտ ժողովուրդք բուժեալ կ'ոգեսրին և հարստահարեալ ժողովուրդներն զիրենք աշգատելու ոյժն ու զօրութիւնը կ'ստանան :

Վայ անոնց՝ ոյք 'ի բաց կ'երթան անկէ , ոյք կ'ուրանան զնա : Խորեանց թշուառութիւնըն անդարման է , և ստրկութիւնն՝ անվիրջու յաւերժական :

Ի՞ն .

Տեսնուեցան ժամանակը՝ յորս մարդն , խող խողելով զայն մարդն՝ որոյ դաւանութիւնքը կը տարրերէին յիւրայն , կը կարծէր Աստուծոյ հանոյ զոհ մը նուիրած ըլլալ :

Ատելի ու նողկալի ըլլան ձեզ այդ պըժգալի ապանութիւնքն :

Ի՞նչպէս մարդասպանութիւնը կրնայ հա-  
ճոյ ըլլալ Աստուծոյ , որ ըստ մարդուն . “Մի  
սպանաներ : ”

Երբ մարդկացին արիւնը կը հոսէ յեր-  
կիր , իբրև նուէր մ'առ Աստուած , զեք կը-  
դիմեն զայն ըմպելու , և կը մտնեն նորա սըր-  
տին մէջ՝ որ զայն թափեց :

Յայնժամ միայն հալածել կ'սկսուի , երբ  
ա՛լ համոզելու յոյս շմար , և որ կը յուսա-  
հատի համոզելէ՝ կամ յինքեան կը հայհոյէ  
ճշմարտութեան ուժոյն գէմ , կամ չունի վրա-  
տահութիւն այն վարդապետութեանց ճըշ-  
մարտութեան վրայ՝ զորս կը դաւանի :

Զի՞նչ ի՞նչ առաւել անհանձար և յիմար  
քան ըսելն առ մարդիկ , “ Հաւատացէ՞ք կամ  
մեռի՞ք : ”

Հաւատաքը գուստորն է Բանին . նա խօս-  
քով կը թափանցէ հոգիներումէջ և ոչ դաշունիւ:

Յիսուս անցաւ յաշխարհէս բարիք գործե-  
լով , իւր բարութեամբն առ ինքն յանկուցա-  
նելով , և իւր համբոյք քաղցրութեամբն կարի  
խստափիրտ հոգիներն իսկ շարժելով ,

Նորա աստուածեղէն շրթունք կ'օր հնէ-

ին և շէլն երբէք անիծեր , բայց միայն զկեղ-  
ծաւորմն : Նա դահիճներ չընտրեց իւրեան  
առաքեալ :

Կ'ըսէր իւրոյն . “ Թողէ՞ք աճել ’ի միա-  
սին մինչև ցժամանակ հնձոյ ցորեանն ու որոմ-  
նը . տանուաէրը պիտի մեկնէ զայն ’ի կալին : ”

Եւ առ այս՝ որք կ'ստիպէին զինքն հուր  
յերկնից տեղացնել անհաւատ քաղաքի մը վը-  
րայ . “ Զգիտիք ո՛ր ոգի է ձեր : ”

Յիսուսի ոգին խաղաղութեան , գթոյ և  
սիրոյ ոգի մ'է :

Նոքա՝ որք կը հալածեն յանուն նորին ,  
որք սրով խիղճերը կը խուզեն , որք մարմի-  
նը կը խոշտանդեն հոգին հաւանեցնելու համար,  
որքարտաստոք կը թափեն վողսանակ զայն  
ջնջելու , այնպիսիք չունին զոգին Յիսուսի :

Վայ և եղուկ այնմ՝ որ զԱւետարանը  
կը պղծէ , զայն մարդոց համար արհաւրաց  
առարկաց մ'ընելով : Վայ այնմ՝ որ արիւ-  
սոտ թերթի մը վրայ զաւետիալ կը գրէ :

Յուշ ձեզ գետնագամբանք :

Այն ժամանակ , ’ի ձեզ ’ի կառափնառ  
անդր ընդ քարշ կը ձգէին , ’ի գրօսանս խու-

ժանին ամփիթատուեր մէջ ամեջի գաղանաց կուր կը նետէին, հաղարներով ստորերկրեայ բնակարաններու և բանտերու մէջ կը փակէին, ձեր ինչքն ու ստացուածքն յարքունիս կը գրաւէին, առաթոր կը կոխոտէին զնեղ երբւ զգացո հրապորակոց դուք, ձեր արգելեալ ու վարեալ խորհուրդները կատարելու համար, շունէիք այլ աեղի ապաւինիքաց երկրին ընդերքներէն :

Ի՞նչ կ'ըսէին ձեր հալածիչք : Կ'ըսէին թէ զուք վասնգաւօր վարդապէտութիւններ կը տարածէիք . թէ ձեր աղանդը, ինչտև սուվորէին կ'չել, կը վրդովէր հասարակաց կարգըն ու անդորրը . թէ, բռնտրարիչք օրինաց և ոխերիմք մարդկացին սեռին, կը խախոտէիք պետութիւնը խսխտելով պետութեան կրօնքը :

Եւ այդ ծայրայեղ աղիսից մէջ, այդքուն կեղեք նան ներքեւ, ի՞նչ կը խնդրէիք աղասութիւն : Գուք Աստուծոյ միայն հնազանդելու և ըստ ձեր խողճին՝ անոր ծառայելու ու զնա որաշուելու իրաւունքը կը պահանչէիք :

Եւ, նոյն խել սխալելով իւրեանց հաւա-

տոյն մէջ, այլք սլահանջեն 'ի ձէնջ սոյն սրբազնիրաւունքը, յարգեցէ՛ք զայն ինս սոս, ինչ պէս կը խնդրէիք որ հեթանոսք յարգեն զայն ՚ի ձեզ:

Յարգեցէ՛ք զայն չնախատելու համար ձեր խոստովանողաց յիշտուակը եւ չպղծելու ձեր մարտիրոսաց աճիւնքը :

Հալածումնը երկասցը նուր մ'է . կը խոցէն նա յաջ և յահեակ :

Եթէ ա՛լ չէք յիշեր Քրիստոսի վարդապէտութիւնքը, յիշեցէք գետնադամբաններն :

Ի՞ն:

Խնամավ պահեցէք ։ Եր հոգւոց մէջ զարդարութիւնն ու զթութիւնը . Նոքս չեր պահապանքն պիտի ըլլան, պիտի վատրեն ձեր մեջէն պառակտաւմներն ու գֆտութիւնքը :

Ի՞նչ որ պառակտաւմներն ու գֆտութիւնքը կը ծնանի, ինչ որ յառաջ կը բերէ դատերն որք բարի մարդիկը կը դայթակվեցնեն և ընտանիքները կը կործանեն, նախապէս շահն է գօշաքաղ, ստոցման անյադ ախտը :

Կոռուեցէ՞ք ապա յար ՚ի ձեզ այս ախշախն դէմ՝ զսր Սատան անգաղար կը գրգռէ :

Ի՞նչ պիտի տանիք բոլոր ճոխութիւններէն՝ զորս լւա կամ յոռի միջոցներով կը մըթերէք : Գոյզն ինչ բառ է մարդուն, որոյ ա՛յնքան կարճ է կեանքը :

Անվերջ տարածայնութեանց մի ուրիշ պատճառն ալ յոռի օրէնքներն են :

Արդ գրեթէ մի միայն յոռի օրէնքներ կան աշխարհի մէջ :

Ո՞ր այլ օրէնք պէտք են անոր՝ որ Քրիստոսի օրէնքն ունի :

Քրիստոսի օրէնքը մէկին է, սուրբ է, և չիք որ, որ այս օրէնքն իւր սրտին մէջ ունենալով, չդատէ զիւր անձնը դիւրեաւ :

Լուցէ՞ք ինչ որ ըսուեցաւ ինձ :

« Քրիստոսի զաւակունքը, եթէ ունենան իրենց մէջ վէճ մը կամ կադ, պէտք չէ որ զիմեն այն մարդոց ատեսնը՝ ոյք երկիրը կը հարստահարեն ու զայն կ'ապականեն :

« Զկա՞ն ծերունիք իւրեանց մէջ, և այս ծերունիներն իւրեանց հարքը չե՞ն չ, անուշովք և սիրողք արդարութեան :

“ Թո՞ղ երթան ուրեմն այս ալեւորներէն մին գտնել, և ըսեն անոր . Հայր իմ, չըկրցինք համաձայնել մի միանց հետ ես և եղացինք զոր կը տեսնես . կ'աղաւեմք, դատաւոր եղիր մեր մէջ :

“ Եւ ծերունին պիտի լսէ երկուքին խօսքերը, և դատաստան պիտի լսնէ նոցա մէջ տեղ, և յետոյ պիտի օրհնէ զնոսա :

“ Եւ եթէ հապատակին այս դատաստանին, օրհնութիւնը պիտի մնայ նոցա վրայ. և եթէ ոչ պիտի դառնայ առ ծերն արդարագատ:

“ Զիք ինչ անհնարին նոցա՝ որք մի են, և՛ ՚ի բարին և՛ ՚ի չարն : Այս օրն ուրեմն յորում մի պիտի ըլլաք՝ ձեր փրկութեան օրը պիտի ըլլայ :

“ Երբ Խորայելի զաւակունք Եղիպտոսի երկրին մէջ բռնութեան ու հարստահարութեան ներքել կը հեծէին, եթէ անոնցմէ իւրաքանչիւրն, մոռնալով իւր եղբարքը, ու զած ըլլար դուրս ենել անտի, ոչ մին պիտի կարէր խօս տալ. ամենքն համախուռն դուրս ելան, և ոչինչ զնոսա կասեցոյց :

“ Դուք ևս Եղիպտոսի երկրին մէջ էք ,  
կորաքամակ Փարաւանի գաւաղանին և նորա  
հարկահանուաց խարազանին ներքեւ :

“ Կարդացէք առ Տէր , առ Աստուած  
ձեր , և ապս յոտն կանգնեցէք ու դուրս  
ելք միահամուռ :

Լ .

Այն ինչ դութը նուազեալ ցրտացաւ և  
անիրաւութիւնն սկսաւ աճել յերկրի , Աստա  
տած ըստաւ իւր ծառայներէն միւյն . “ Գնա՛  
իմ կողմէս , դամի՛ր այդ ժողովորդը , և  
յացտնէ՝ անոնց ինչ որ պիտի տեսնես , և ինչ  
որ պիտի տեսնես դու պիտի կարարուի ստու  
զիւ , եթէ , թողլով իւր չար ու յուի . շա  
փղներն ապաշաւէ ու դառնայ առ իս : ”

Եւ Աստուծոյ ծառայն հնազադեցաւ նո-  
րա հրամանին , և քործ հագած ու գլուխը  
մոխիր ցանած , գնաց առ այն ամբոխն , ու ,  
ձայնը բարձրացնելով , կ'ըսէր .

“ Ի՞նչու զջէրն ՚ի կորուատ ձեր կը դըր-  
դէք , թողէ՛ք ձեր չար ու յուի շափղներն

ապաշաւեցէ՛ք ու դարձէ՛ք առ Նա : ”

Եւ կէսք , նորա խոռոքերը լսելով , շար-  
ժեցան , և այլք ծաղկը կ'ընէին ու կ'ըսէին .  
Ա՞զ է դա , և ինչ կուգայ ըսել մեզ : Ո՞զ  
նա կշտամիչ զրաւ մեզ : Չիմար ոք է դա : ”

Եւ ահա ողին Աստուծոյ բռնեց մար-  
դարէն , և ժամանակը բացուեցաւ նորա ա-  
շաց առջև , և դարք նորս աշւէն անցան :

Եւ յեզակարծումն իւր հաղերձները պա-  
տառելով , “ Այսպէս , ըստու , ծուէն ծուէն  
պիտի պատասի Աղ սմայ ընտանիքը :

“ Արք անիրաւութեան լարով չափեցին  
զերկիր , նորա բնակիչները հաշուեցին , ինչ  
պէս կը հաշուեն անդեայն , գլուխ առ դլուխ :

“ Ըսին . Բաժնենք զայս , և զրամ մը  
ընենք մեր գործածութեան համար :

“ Եւ բաժանումը եղաւ . և իւրաքան-  
չար ոք առաւ իւր բաժինը , և երկիրն և իւր  
բնակիչները անիրաւութեան արանց ստայ-  
ուածքն եղան , և , իրերաց հետ խորհրդակ-  
ցելով , հարցին ցմիմիանս . ” Ա՞րքան կ'ար-  
ժէ մեր ստայուածքը . ” և ամենքը մէկէն  
պատասխանեցին . ” Երեսուն լրւմայ :

“ Եւ սկառն առ եւ տուր լնել իրարու հետ այս երեսուն լումայով :

“ Եղան դնմունք , վաճառմունք , փոխանակութիւնք , մարդիկ երկրի տեղ , երկրի փոխան մարդոց , և ուկի ՚ի լրումն :

“ Եւ անցնիւր ոք միւսոյն բաժնին ցանկացաւ , և փոխադարձաբար զիրեար կողոպտելու համար զմիմիւնս խողխողել սկսան , և գետահետող արեամբն պատառ մը թղթի վրայ զրեցին “ իրաւունք ” , և ուրիշի մը վրայ “ Փառք ” :

“ Տէր , բա՛ւ է , բա՛ւ :

“ Ահա՛ երկու , որք իրենց երկաթի հանկը կը նետեն ժողովրդեան մը վրայ . իւրաքանչիւրն անկէ իւր պատառը կ'առնու կ'երթայ :

“ Սուրն անցաւ ու վերստին անցաւ : Կը լսէ՞ք սա որտակտոր ձիչերն , սոքա բողոքք էն մանկամարդ հարուանց , սոքա չայլմունքն էն մարց :

“ Երկու ուրուական կը սոլոդին մթութեան մէջ , կը յածին դաշտերն ու քաղաքները . մին չոր ու վտիտ զերթ կմախ , զա-

դիր կենդանւոյ բեկոր մը կը կրծէ , միւսը անութին տակ ու պալար մը ունի , և աղուիսագայլը ոռնածայն նորա ետևէն կը վազեն :

“ Տէ՛ր , Տէ՛ր , յափսենակա՞ն պիտի ըլւայ քո ցասումնը : Քո բազուկը զարնելու համա՞ր միայն պիտի ձգի : Խնայէ՛ հարց զաւակացն ի սէր : Ի գութ շարժէ՛ այս հէք ու տիեզդ արարածոց արտասուքէն , որք տակաւին իրենց աջ ձեռնը ձախէն որոշել չդիտեն :

“ Աշխարհ կը նդլայնի . խաղաղութիւնը պիտի ծնանի անդրէն , ամենքն իրենց համար աերլ պիտի ունենան :

“ Վա՛յ , եղու՛կ , արիւնն յորդեալ կը զեզու . կը շրջապատէ զերկիր երրեւ գօտի մի կարմիր :

“ Ո՞վ է այդ ծերունին՝ որ արդարութեան վրայ կը խօսի , մէկ ձեռքը թունալից բաժակ մը բռնած և միւսովը փայփայելով շնացեալ կին մը՝ որ զնա իւրհ այրը կը կոչէ :

“ Կըսէ . “ Իմ է Աղամայ սերունդը : Ո՞յք են ձեր մէջէն զօրաւորագոյններն , և անոնց պիտի բաժնեմ զայն :

“ Եւ կը կատարէ ինչ որ կ'ըսէ , և , ի՛ր

դահէն առանց եշնելու , իւրաքանչիւրումն  
կընշանակէ իւր որսը :

Եւ համայնք կը լափեն , կը լափեն . և  
իրենց քաղցը եւս քան զեւս կրյաճախէ , եւ ի-  
րերաց վրայ կը յարձակին , եւ մարմինը կը-  
գոզգոջէ եւ ոսկերք կը ճայթին ատահանց  
ներքեւ :

“ Վաճառաստեղի մը կը բացուի , հոն կը-  
բերեն ազգերն պարան՚ի վիզ . կը շօշափեն  
զանոնք , կը կշռեն , վազել ու քայլել կուտան  
այսքան կ'արժեն : Զեն այլ եւս այն նախնին  
աղմուկն ու վրդալը . կանոնաւոր առ և տուր  
մ'է այս :

“ Երանի՛ երկնից թռչուններուն և երկ-  
րին անասնաց . ո՞չ ոք զանոնք կը բանազոսէ  
կ'երթան ու կուգան ինչպէս հաճոյ է իրենց

“ Զինչ են երկանաքարերն՝ որք անդուզ  
կը դառնան , և ին՞չ կը փշրեն : ”

“ Որդի՛ք Ադամոյ , այն երկանաքարինք  
օրէնքներն են անանց՝ որք զձեղ կը վարեն ,  
և դուք էք զորս այնք կը փշրեն :

Եւ քանի որ մարդարէն ապագային վրայ կը-  
ներէր այս չարագուշակ նշալներն , խորհըր-

գաւոր սոսկում մը կը տիրէր անոնց վրայ՝ որք  
իրեն կ'ունկնդրէին :

Յանկարծուստ իւր ձայնը դաղրեցաւ  
լուելէ , և իրքեւ խորին մոածման մը մէջ  
խորասոյզ երեցաւ :

Ժողովուրդը կ'աղասէր լուս անմոռնչ ,  
արտադրով և ողեծովի :

Այն ատեն մարդարէն , “ Տէ՛ր , գու  
վքեր բնաւ այս ժողովուրդն իւր թշնառու-  
թեան մէջ . դու առ յաւէտ շմառնեցիր զայն  
իւր հարստահարշոց ձեռքը : ”

Եւ առաւ երկու ոստ , և տերեները փե-  
տեց , և , խաչաձև իրարու վրայ զնելով , ի-  
միասին կոսպեց , և բարձրացոց զայն խռան  
վրայ , ըսելով . “ Այս պիտի ըլլայ բռ նեցուկը  
այս նշանով պիտի յաղթես :

Եւ զիշեր եղաւ , և մարդարէն անհե-  
տացաւ իրբեւ ստուեր մը որ կ'անցնի , եւ  
ամբոխը ցրուեցաւ ամեն կողմ խաւարին մէջ :



Ա.Ա.

Երբ և երկարատեւ երաշտէ մը յետոյ ,  
քաղցրախորժ անձրեւ մը կը տեղայ յերկիր  
հողն անյագաբար կը խմէ երկնից ջուրը՝ որ  
զովութիւն եւ արդասաւորութիւն կուտայ  
իրեն :

Այսպէս ծարաւի աղդերն անյագաբար  
պիտի ըմպեն Աստուծոյ խօսքը , երբ տե-  
ղայ նոցա վրայ իբրեւ զանձրեւ զովարար :

Եւ արդարութիւնը սիրոյ չետ , եւ խա-  
ղաղաւթիւնն ու ազատութիւնը պիտի բող-  
բոշեն նորա ծոցին մէջ :

Եւ այն ատենուան պէս պիտի ըլլայ՝  
յորում բնաւք եղբարք էին , եւ այլ շախոի  
լսուի ոչ տիրոջ ձայնը ոչ գերւոյն լսացը ,  
ոչ աղքատին հեծեծանքն ոչ կեղեքելոց հա-  
ռաշանքը , այլ ցնծութեան եւ օրհնից բարձ-  
րաձոյն նուազներ :

Հարք պիտի ըսեն իւրեանց որդւոց . “Մեր  
առաջին օրերն խոռվայոյդ , արտասուլից ու  
բազմավիշտ եղան . արեւը մեր ուրախու-

թեան վրայ կը ծագի ու կը մտնէ : Օրհնեա՛լ  
ըլլայ Աստուծո , որ ցոյց մեղ այս բարիքնե-  
րըն յառաջ քան վմեռանել :

Եւ մարք պիտի ըսեն իւրեանց գստերց .  
“Տեսէ՛ք մեր ճակատները՝ որք այժմ այսքան  
անխռով կ' երեւին . վիշոր , ցաւու ու անձկու-  
թիւնը երբեմն խոր ակօսներ գործեցին հոն :  
Զեր ճակատներն կը նմանին գարնան մէջ  
լի մը երեւին՝ զոր բնաւ սիւք մը չկնճռեր :

Օրհնեա՛լ ըլլայ Աստուծո , որ ցոյց մեղ  
այս բարիքներն յառաջ քան զժեռանել :

Եւ երիտասարդք պիտի ըսեն կուսից .  
“Գեղանի էք դաշտաց ծաղկանց նման . ան-  
րիծ ցողցն նման որ զայնս կը կաղգուրէ , լու-  
սոյն նման՝ որ զայնս կըդեղերինէ : Փաղցր  
է մեղ տեսանել մեր հայրերն , սիրելի է  
մեղ ըլլալ մեր մարց քով . բայց երբ զձեղ  
տեսնենք և երբ հուս կամք առ ձեղ , սեր  
հոգիներուն մէջ բան մը կ'անցնի որ յերկինս  
միայն ունի անուն :

Օրենեա՛լ ըլլայ Աստուծո : որ ցոյց մեղ  
այս բարիքներն յառաջ քան զմեռանել :

Եւ կցուք պատասխանի պիտի տան . “Ծաղ-

կունք կըթարշամին , կ'անցնին . կուզայ օր  
մը՝ ար ո՛չ ցաղն սյլ զանոնք կը կազդարէ և  
ո՛չ լոյրը կը գեղերբնէ : Յերկրի առաքինու-  
թինն է միայն անթարշամ և անանց : Մեր  
հարք նման են Համկին՝ որ աշնան զէմ ցո-  
րեններով կը լոյրի , և մեր մարք՝ կը նմանին  
որթին՝ որ ողկուզ իւք կը ծանրաբնանի : Գաղ-  
ցը է տեսմնէլ մեր հայրերն . սիրուի է մեզ  
ըլլալ մեր մարց քով . և քաղցը են մեզ նաև  
ու սիրելի մեր հարց ու մարց որդիք :

Օրհնեա՞լ ըլլայ Աստուած որ ցցց մեզ  
այս բարիքներն յառաջ քան զմեռանել :

### ԼԲ .

Կը տեսնէի ոփի մը երկնամբարձ : Գու-  
գաթէն գրեթէ մինչ ՚ի ստորան լի էր խիտ  
առ խիս ահագին ճիւղերով՝ որք շուրջանակի  
երկրը կը ծածկէին , այնպէս զի մերի էր  
ու չունէր շիւղ մի խոսոյ : Հակային ոսպէն  
կաղնի մը կ'ելնէր՝ որ մի քանի ոտք բարձ-  
րանալէ յեայ , կը կրէր , կը գալարէր , յե-  
տոյ հորիզոնական ուղղութեամբ կը տարած-

ուէր , յետոյ գարձեալ դէպ ի վեր կ'ելնէր և  
կրկին կը գալարէր . և հուսկ ուրեմն , կը-  
տեսնուէր իւր մերկ ու վախտ գլուխը ոփւոյն  
աճումնածիդ ոստոյ տակ երկնցնելը , դոյդն ինչ  
օդ և լոյս վինտուելու համար :

Եւ խորհեցայ լնդ միտս իմ . այս օրինա՛կ  
կ'աճին փոքունք մեծերուն հովանուոյն տակ :

Ո՞վ կը խմբուի աշխարհի հզօրաց քավ :  
Ո՞վ կը մատչի անոնց . ո՛չ եթէ աղ-  
քատը . նորա տեսիլը իւրեանց հայեցուածքը  
կը պղծէ : Խնամով կը հեռացնեն զայն նոցա  
ներկայութենէն և պալատէն . չթողուն իսկ  
անոր նոցա պարտեղներէն անցնիլ՝ որք բաց  
են ամենուն բաց անկէ , զի իւր վաստակա-  
մաշ մարմինը չքաւորութեան հանդերձներով  
ծածկուածէ :

Ո՞յք ուրեմն կը ժողովին աշխարհի հզօ-  
րաց շարչը , ճոխք և վաղաքաւշը որ ճոխ  
ըլլալ կը ցանկան , լվափ կանայք , վատշուէր  
պաշտօնեայք նոցա գաղտնի զուարծութեանց ,  
հտափտք և միմուք , յիմարք՝ որք նոցախիու-  
ճը կ'զբացնեն , և սուռ մարգարէք՝ որք զայն  
կը պատրեն :

Ոյք տակաւին : Բունութեան և նենդութեան մարդիկ , հարստահարման գործակատաք , անխիղճ հարկահանք , ամեն անոնք որ կ'ըսեն . “ Մեզ յանձնեցք ժողովուրդը , և մեք նորա ուկին ձեր արկղերուն մէջ կըվաղցընեմք և ձեր երակաց մէջ՝ նորա իւղն պարաբութեան : ”

Անդ՝ ուր գէջն է , կը ժողովին արծուիք :  
Փոքրիկ թռչունք խոսին մէջ իրենց բոյնը կը շինեն , և գիշակեր հաւք՝ բարձրաբերձ ծառոց վրայ :

ԼԳ.

Ի ժամանակին՝ յորում տերեք կը գեղակին ազազուն , ծերունի մը , տերեւալից ուստերու ծանր ըեռ մը կռնակը , յամբաքոյլ կը զառնայր գէպ յիւր տնակը՝ որ ձորակի մը զառ ՚ի վայրին վրայ շինուած էր :

Եւ այն կողմը՝ ուր ձորը կը բացուէր , աստանդ բարձրացած մի քանի ծառերու մէջտեղին կը տեսնուէին արդէն մարդ մտած արեւ-

ուն կողմանկի ճառագայթները՝ որք արևամոխ ամպերուն մէջ կը խաղոյին և զանոնք երփն երփն գոյներով կը ներկէին՝ որոնք քիչ քիչ նսեմանալով անհետ կ'ըլլային :

Եւ ծերունին , իւր հիւղը հասնելով՝ որ իր միակ ստացուածքն էր քովը փոքրիկ տրամիմը հետ զոր ինք կը մշակէր , վար դրաւ տերևալից ոստերու զէզը , նստաւ խարուկին ծոխէն սեւ ւացեալ փայտեաց աթոտի մը վրայ , և խորին խոկման մը մէջ գլուխը կըծոյը վրայ հակեց :

Եւ մերթ ընդ մերթ , իւր լահջքն ուռեւ լով , սաւզ հառաջ մը կ'արձակէր , և բեկեալ ձայնալ մը կ'լսէր .

“ Որդի մը միայն ունէի , առին զայն յիշնէն . իսեղճ կավ մ՛ունէի , առին զայն յինէն արտիս հարկին համար : ”

Եւ յետոյ , աւելի նուազածայն , կը կըրկանէր . “ Որդեա՛կ իմ , սրդեա՛կ իմ , և արտօսը մի կազայր թրչել իւր ծեր արաւանունքը , բայց չկարէր վիժել :

Երբ կայր այսպէս խորասոյզ ՚ի թախիծ , լեց ձայն մը որ կ'լսէր . “ Հայր իմ , Աս-

տուծոյ օրհնութիւնը քու և քոյսդ վրայ  
ըլլայ : ”

“ Իմիններո՛ւս , ըստ ծերունին , չունիմ  
այլ մէկը՝ որ իմս ըլլայ . անոք եմ ու միակ : ”

Եւ աշերը վերցնելով , տեսաւ ուխտաւոր  
մը կանգնած՝ ՚ի դուռն և երկայն ցուպի մը  
կրթնած . և գիտնալով թէ Աստուած է որ  
հիւրերը կը դրկէ , ըստ անոր :

“ Աստուած քեզի դարձնէ քո օրհնու-  
թիւնը : Մտի՛ր , որդեակ իմ . ինչ որ ունի  
աղքատը աղքատինն է : ”

Եւ վառարանին վրայ իւր բերած ոստե-  
րու խուրձնը վառելով , սկսաւ ուղեւորին ճա-  
շը պատրաստել :

Բայց ոչ ինչ կրնար մոռնալ տալ անոր մը-  
տածութիւնը՝ որ զայն կը կեղեքէր . միշտ հո՛ն  
որոին վրայ էր :

Եւ տիտառուն նորա սրտատանջ յուզման  
պատճառն իմանալով , ըստ անոր , “ Հայր  
իմ , Աստուած զ քեզ մարդոց ձեռքով կը փոր-  
ձէ : Սակայն քու թշուառութենէդ աւելի մեծ  
աղէտներ կան : Ոչ եթէ հարստահարեալն է ”

որ ամենէն աւելի կը տառապի , այլ հարըս-  
տահարիչք :

Ծերունին գլուխը երերեց և ոչ ինչ պա-  
տասխանեց :

Ուստաւորն յարեց . “ Դու չես հա-  
ւատար այժմ , այլ պիտի հաւաստաս ընդ հուպի : ”

Եւ զայն նստեցնելով , դրաւ ձեռները  
նորա աշաց վրայ . և ծերունոյն վրայ գրու  
մ'եկաւ նման Աբրահամու վրայ եկած ծանր՝  
խաւարին ու սակալի քնոյն , երբ Աստուած  
ցոյց տուաւ անոր իր ցեղին ապագայ աղէտ-  
ները :

Եւ թուեցաւ իրեն տարուիլ լայնարձակ  
պալատի մը մէջ , անկողնոյ մը քով , և ան-  
կողնոյն մօտ թագ մը կայր , և այս անկող-  
նոյն մէջ մարդ մ'ի գրու , և ինչ որ կ'անցնէր  
այս մարդուն սրտին մէջ՝ ծերունին զայն կը-  
տեսնէր , ինչպէս ցորեկը , ՚ի հսկման , կը-  
տեսնէ մարդ ինչ որ կը պատահի իւր աշաց  
առջև :

Եւ մարդը՝ որ սոկեհուռն անկողնոյն մէջ  
պառկած էր , կը լսէր իբրու հաց ինդրող ամ-  
բոխի մը խառնագոչ աղաղակները : Այդ ա-

դաղակները նման էին կոհակաց ահեղամռունչ  
գոշման՝ որ մրրիի տաեն ծավիզեր ժայռերուն  
դէմ կը խորտակին : Եւ մրրիկը կը տաստկա-  
նայր, և գոչիւնը կը յաճախէր . և քնացող  
մարդը վայրկենէ վայրիեան փաթորկոյց կո-  
հակաց բարձրանալը կը տեսնէր՝ որք արդէն  
սպալատին որմաւնքը կը ծեծէին, և անլուր ճի-  
գեր կը ճգնէր իրր փսխչելու համար, և չէր  
կրնար, և իւր տաղնապն անհնարին էր :

Եւ մինչես կը հայէր նա սարսափահար՝  
ծերունին յանկարծուստ տարուեցաւ որիշպա-  
լափ մը մէջ : Հոն պառկողը դիակի մը մա-  
նաւանդ քան թէ կենդանի մարդու մը նը-  
մանութիւնը կը բերէր :

Եւ իւր քնացն մէջ, կը տեսնէր իւր առ-  
ջեւ կտրուած կառափներ . և բերաննին բա-  
նալով, այդ կառափունք կ'ըսէին .

Ա Մեք քեզ համար մեր անձը նուիրած  
էինք, և ահա՛ վարձքը՝ զոր լնդունեցանք, ։  
քնացի՛ր, քնացի՛ր, մեք չեմք քնանար : Վլ-  
րէմիսնդրութեան ժամը կը հսկենք . մերձ  
է այն :

Եւ արխանը կը պաղէր քնացող մարդուն

երակաց մէջ : Եւ կ'ըսէր իւրովի՛ . “ Եթէ  
գէթ կարենայի թագս թողուլ սա մանկան . ”  
և իւր մոլորեալ ականողիքը կը դառնային  
գէոլ յորորան մի՞ որոյ վերայ թագուհւոյ նա-  
րու մի կայր ոսկեթել :

Բայց, մինչդեռ այս խորհուրդը դոյզն  
ինչ զայն խաղաղել և սիփոփել կ'սկիէր, ու-  
րիշ մարդ մը, զէմքով հանգունաստիպ իրեն,  
առաւ տղայն և պատին զարնելով ջախջա-  
խեց դոյզն :

Եւ այնքան սաստիկ էր ծերունոյն սոս-  
կումնը զի մերձ էր ՚ի նուաղել :

Եւ մի և նոյն վարկենին մէջ երկու տար-  
բեր տեղեր տարուեցաւ . և այս տեղերը,  
թէւ բաժնուած, իրեն համար միսյն մէկ  
տեղ մը կը կաղմէին :

Եւ տեսաւ երկու մարդիկ՝ որք ամեն  
կերպով իրարու նմանաստիպ էին և տարիքով  
միսյն իրարմէ կը տարբերէին . և հասկըցաւ  
թէ միւնոյն ծոցի մէջ սնած էին :

Եւ նայա քունը նման էր մահապարափ  
քնոյն՝ որում կառափնասը կ'աղասէ ՚ի զարթ-  
ման :

Արիւնաշաղալախ պատաններու մէջ փաթ-  
թուած ստուերներ նոյս առջևէն կ'անցնէին,  
և իւրաքանչիւրն յանցանելն անոնց կըդպչէր  
և նոյս անդամքը կը քաշուէին ու կ'ամփոփ-  
ուէին իրու թէ մահուան այս շօղփմանէն՝  
փախչելու համար :

Յետոյ զիրեար կընկատէին տեսակ մը  
սոսկալի ժալիտով, և իրենց աշը կը բոցա-  
առէր, և ձեռնը ջղաձգօրէն կ'երերէր դա-  
շունի դաստապանին վրայ :

Եւ ծերունին տեսաւ ապա դալկադէմ  
ու նիհար մարդ մը : Կասկածք խուռնամբովն  
կը վխսային նորա անկողնոյն քով, իրենց  
թոյնը կը սրակէին նորա երեսը, չարադոյժ-  
խոսքեր կը մրմնչէին մեղմաձայն, և յամբ  
յամբ իւրեանց ըդունդները կը միմէին նորա  
ցուրտ քրտամբ թըլուած գանկին մէջ : Եւ  
մարդկեղեն կերպարանք մը, տժդոյն զերթ  
պատան, մերձեցաւ առ նա, և անխօս ու ան-  
բարբառ եցոյց անսր մատամբն կապոյտ նշան մը  
զոր ունէր պարանոցին բալորտիքը : Եւ ան-  
կողնոյն մէջ՝ յորում անկեալ դնէր, դալ-  
կադէմ մարդուն ծունդերն զիրար բախեցին,

և իւր բերանը բայցուեցաւ առ սոսկման, և  
ահուելի կերպով մը խոշորցան լայնաբաց :

Եւ ծերունին, սարսափէն ընդարձացեալ,  
տարուեցաւ աւելի մեծ պալատ մը :

Եւ այն որ հոն կըքնանար՝ մեծ դժուա-  
րութեամբ կ'առնոյր շունչ ու կուտայր : Սե-  
ւաթորմի ուրուական մը նորա լանջաց վրայ  
կծկուած հեղնական ծաղրով մը զայն կընը-  
կատէր : Եւ կը խօսէր նորա-ականնն ՚ի վայր  
և իւր խօսքերը տեսիներ կ'ըլլային մարդուն  
հոգւոյն մէջ՝ զոր իւր սրածայր սակրներովը  
կը ճնշէր ու կը կ'խօստէր :

Եւ մարդը ինքզինքն Մըլապատեալ կը-  
տեսնէր անհամար բազմութենէ մը՛ որ սոս-  
կաձայն աղաղակիներ կ'արձակէր .

“ Դու աղատութիւն խոստացաք մեզ և  
դերութիւն տուիր :

“ Դու օրինօք թագաւորել խոստացաք  
մեզ, և օրէնք քո մտահաճութիւնք են մի-  
այն :

“ Դու մեր կանանց ու զաւակաց հացը  
խոստացաք մեզ, և քո գանձերն բաղ-

մացնելու համար մեր թշուառութիւնը կըրկնապատկեցիր :

“Դու փառք խստացար մեղ , և ժողովը դրդոց արհամաքհանքն ու նոյա արդար առելութիւնը մեր վրաց հրաւերեցիր :

“Ե՞՞ , Ե՞՞ , և գնա՛ ննջել երդմնաղբուժից ու բւնակալաց հետ : ”

Եւ ինքզինք այս բաղմութենէն ընդ քարշածեալ ու գահամիժեալ կ'զգոյցր , և ոսկոյ պարկերու կըդասալարտէր թշուառներ որոց վրաց կասկած ունեցած էր թէ հայրենիք բառն և ոսկին կը թափէր ՚ի գետին :

Եւ այնպէս իմ կը թուէր իրեն թէ հէք ու չուառական կը թափառէր աշխարհի մէջ և ծարաւելով չուր կը խնդրէր առ զթութեան և իրեն տղմալից բաժակ մը կը մաստացնէին և ամենքն ՚ի նմանէ կըդասալիքին , ամենքը զայն կը նղովէին , զի մատնչաց նշանն ունէր , ի ճակատուն :

Եւ ծերունին պժդանօք ՚ի բաց դարձոյց անկէ իւր աշերն :

Եւ երկու ուրիշ պալատներու մէջ , տեսաւ երկու ուրիշ մարդիկ որք տանջանքներ

կերաղէին . և Քանդի , կ'ըսէին , ու՞ր պիտի գտնենք ապահովութիւն :

Գեւսինը փրուած է մեր ուրից տակ . նողկալի ու տառելի եմք ազդաց . մանկունք իսկ իրենց աղօթէց մէջ , առաւօտ և երեկոյ կը ինդրեն յԱստւածոյ որ զերկիրն ազատէ մեր ձեռքին :

Եւ մին (իսխառ բանտի) և այսինքն մարմնոյ և հոգւց ամեն լվանաց ու սովաստանչ մահուան կըդասալարտէր թշուառներ որոց վրաց կասկած ունեցած էր թէ հայրենիք բառն արտասանած էին . և միւսը , նոցա ինչքն յարքունիս զրաւելէ յետոյ , կը հրամայէր ՚ի բանտ արկաննել երկու զեռահաս աղջկունք որոց յանցանքն էր հիւանդանոցի մը մէջ իւրենց վիրաւոր եղբարքը դարմանած ըլլալ :

Եւ երբ այս գահճային գործով էին ըզբաղած , պատգամապերք հասին :

Եւ մին պատգամաբերներէն կ'ըսէր . և Զեր հարաւային գաւառները իրենց ըըդաթայքը խորտակեցին , և անոնց կոտրներովն գանեցին ձեր կուտակալքն ու զօրքերը : ”

Եւ միւսը . “Զեր գրօնները ծաւէն ծաւէն

պատառեցան լայն գետոյն եղերաց վրայ .  
ալիք պատառներն առած կը տանին : „

Երկու թագաւորներն իրենց անկողնոյն  
վրայ կը գալարէին :

Եւ ծերունին տեսաւ երրօդ մը : Վըտա-  
րած էր զԱստուած իւր սրտէն . և իւր սրտին  
մէջ , փոխան Աստուծոյ , կայր որոր մը՝ որ  
յարաժամ զայն կը կրծէր , և ժամանակ առ  
ժամանակ տագնապը սաստկանարով , խուլ  
հայհոյութիւններ կը թոթվէր և շրթերն շա-  
ռագոյն փրփրով մը կը ծածկուէին :

Եւ կըթուէր իրեն ըլլալ անսահման դաշ-  
տի մը մէջ , միայնակ որդին հետ՝ որ ան-  
մեկին էր անկէ : Այս զաշոը գերեզմանա-  
տուն մ'էր , սրախողիսող ժողավրդեան մը  
գերեզմանատունը :

Եւ ահա յեղակարծումն երկիրը կը շար-  
ժի . շիրիմք կը բացուին , մեռեալք կըյառ-  
նեն և յառաջ կուզան խուռնամբով . և ին-  
քը չէր կարող ո՛չ շարժում մ'ընել , ոչ ճիկ  
մի հանել :

Եւ բոլոր այս մեռեալք , այր , կին ,  
տղայ , լրիկ գնա դիտէին . խուն ինչ յետոյ

մի և նոյն լբութեամբ գերեզմանաց քարերն  
տանին և անոր շորջը շարեցին :

Քարերը նախ մինչև ծունդերը բարձ-  
րացան , յետոյ մինչև կուրծքը , յետոյ մին-  
չև բերանը , և բուռն ճգամբրք պարանոցին  
զերը դէպ ՚ի վեր կը ձգտէր դամ մի ևս  
չնչելու համար . և չենքը կը բարձրանայր  
միշտ և երբ յրացաւ , կատարը մթին ամպի  
մը մէջ երկնածրար կը կորսուէր :

Ծերունին քիչ քիչ ողեթափ կըլլար .  
իւր հոգին անբաւական էր տանիլ այնչափ  
արհաւրաց ու տոսկման :

Եւ ահա շատ մը թափուր սրահներէ անց-  
նելէ յետոյ , փոքր սենեկի մը մէջ , անկող-  
նոյ մը վրայ՝ զոր հազիւ կը լուսաւորէր աղօ-  
տաշահ կանթեղ մը , տարիներէ մաշած մարդ  
մը կը տեսնէ :

Անկողնոյն շորջը կային եօթն երկիւղք,  
շորսը մէկ կողմ երեքը միւս կողմ :

Եւ երկիւղներէն մին ձեռնը դրաւ տարեւոր  
մարդոյն սրտին վրայ , և նա սաթուաց , և  
անդամները դողացին , և ձեռնը հոն մնաց  
ցորչափ դոյզն ջերմութիւն մը զգաց :

Եւ ասկէ յետոյ ուրիշ մը , առաւել յըրտին , ըրաւ ինչ որ առաջինն ըրած էր , և ամենքն իրենց ձեռնը դրին տարեսոր մարդուն սրտին վրայ :

Եւ իւր սրտին մէջ անցան իրեր՝ զորս անհնար է մերկանալ :

Կը տեսնէր հեռաւն բեեսին կողմը , սասկատեսիլ ուրուական մը՝ որ կ'ըսէր ինքնիթէն . « Անձնատուր եղի՛ր ինձ , և ես իմ չնչովս կը տազցնեմ զքեզ :

Եւ երկիւզի մարդն , իւր սառուցեալ մատներովը դաշնագիր մը կը գրէր , չգիտեմ ինչ դաշնագիր , բայց մէն մի բառը ողեվարութեան հնչման կը նմանէր :

Եւ այս վերջին տեսիլն եղաւ : Եւ ծերունին արթնալով , չորհակալ եղաւ նախախնամւթեան կենաց ցաւերուն մէջ իրեն հանած բաժնին համար :

Եւ ուխտաւորն իրեն ըստ . « Յուսա՛ և աղօթէ . աղօթքն ամեն ինչ կ'ընդունի : Որ զիդ չէ կորած . աշերդ գեռ չփակուած զայն սփառի աեսնեն : Խաղաղութեամբ Առողութոյ օրերուն սպասէ :

Եւ ծերունին սպասեց խաղաղութաւ .  
թեամբ :

ԼՂ .

Զեն յԱստուծոյ չարիքն՝ որոց ներքեւ աշխարհ կը տառապի հեծեծագին , զի Աստուած աչը է , և բարի է բոլոր ինչ որ ըրած է նա . նոքա ՚ի սատանայէ են , զոր Աստուած անիծեց , և այն մարդոցմէ՝ որք զսատան իրենց հայր և աէր ունին :

Արդ , Սատանի զաւակունք բազումք են յերկրի : Փանի որ նոքա կ'անցնին , Աստուած իւրեանց անսւնները կնքեալ զրքի մը մէջ կը զրէ՝ որ պլոտի բացուի ու կարգացուի ՚ի լուր ամենեցուն ՚ի վախճան ժամանակաց :

Կան մարդիկ՝ որք զինքեանս միայն կը սիրեն . և ասոնք ատելութեան մարգիկ են , վասն զի զիւր անձնը միայն սիրելը՝ զայը ատել է :

Կան ամբարտաւանութեան մարդիկ , որք իրենց հաւասար չեն ուզեր և ինքեանք միշտ կ'ուզեն հրամայել և իշխել :

կան ցանկութեան ու զօշաքաղութեան մարդիկ , որք միշտ ոսկի , մեծութիւնք , վայելք կը ինդրեն , և չեն յագենար երբէք :

Կան յափշտակութեան մարդիկ , որք տըշկարը կը լրտեսեն կողոպտելու համար բռնի կամ ներքին , և որք գիշեր ատեն այլրոյն և որբոյն բնակարանին բոլորտիքը յածեալ կը շըլեն :

Կան սպանութեան և եղեռան մարդիկ , որք բռնական խորհուրդներ ունին ու որք կ'ըսեն . « Դուք մեր եղբարքն էք » , և զանոնք զօրս իրենց եղբայր կ'անուանեն կ'սպաննեն խելոյն երբ կասկածին թէ իրենց խորհրդոց համաձայն չեն , և անոնց արեամբն օրէնքներ կը գրեն :

Կան երկիւղի մարդիկ , որ կը դողդղան ժանտին առջև և նորա ձեռնը կը համբուրեն , այսու նորա կեղեքմանէն զերծանիլ յուսաւով , և երբ հրապարակի մէջ անմեղ մը յանիրաւի յարձակում և զրկանք կը կրէ , կը փութան իրենց տունը մտնել և դուռնը ամրափակ գոցել :

Բոլոր այս մարդիկ երկրի վրայ պատճառ-

եղան խաղաղութեան , ապահովութեան և ազատութեան կործանմանն ու բարձմանը :

Ուրեմն ուրիշ կերպով վերստին չպիտի գտնէք ազատութիւնը , ապահովութիւնը , խաղաղութիւնը , բայց եթէ անդուլ անդադար մարտնչելով նոցա դէմ :

Քաղաքը՝ զոր նոքա կառուցին՝ Սատանի քաղաքն է . գուք Աստուծոյ քաղաքն ունիք վերականգնել :

Աստուծոյ քաղաքին մէջ , անցնիւր անհամա կը սիրէ իւր եղբարքն իր անձին պէս , և ահա՛ ասոր համար չկայ հոն մէկը երեսի վրայ թողրուած . ո՛չ ոք կը նեղի հոն , եթէ կայ գարման մ'իւր նեղութեանց :

Աստուծոյ քաղաքին մէջ , ամենքն հաւասար են , ոչ ոք անդ կը տիրապետէ , զաւըն զի արդարութիւնը միայն կը թագաւորէ հոն՝ աթուակից ունենալով սէրը :

Աստուծոյ քաղաքին մէջ , իւրաքանչիւր ոք աներկիւղ կը վայելէ ինչ որ իւրն է , և չցանկար աւելի բանի մը , վասն զի ինչ որ իւրաքանչիւրինն է՝ ամենուն է , և ամենքն ունին զԱստուծոյ որ բոլոր բարեաց աղբիւրնէ ,

Աստուծոյ քաղաքին մէջ, ո՞չ ոք դայլո  
իւր անձին կը զոհէ, այլ ամենքն պատրաստք  
են իւրեանց անձնը այլոց զոհ մատուցանելու :

Աստուծոյ քաղաքին մէջ, եթէ չար մը  
սպրդի մտնէ, ամենքն անկէ կը խորշին ու  
մեկուսի կ'երթան, և բոլորք կը միանան զայն  
կշտամբելու կամ վտարելու . զի չարը իւրա-  
քանչիւրին թշնամին է, և իւրաքանչիւրին  
թշնամին ամենուն թշնամին է :

Երբ վերաշխեք զԱստուծոյ քաղաքը, եր-  
կիրք վերասին պիտի ծաղկի բարգաւաճ, և  
պիտի ծաղկին ժողովուրդք, վասն զի նկուն  
ըրած պիտի ըլլաք Սատանի զաւակունքը՝ որք  
ժողովուրդները կը կեղեն և զերկիր ցաւօք և  
արտասուօք կը լնուն . վասն զի նկուն ըրած  
պիտի ըլլաք ամբարտաւանութեան մարդիկը,  
յափշտակութեան մարդիկը, սպանութեան  
մարդիկն ու երկիւղի մարդիկը :

ԼԵ .

Եթէ ազգաց հարատահարիչներն իրենք  
իրենց մային աննեցուկ և անօդնական, ի՞նչ  
կրնային ընել անոնց դէմ :

Եթէ, զաղինս ծառայութեան մէջ բըս-  
նելու համար, չունենային այլ ձեռնտու՝ բաց-  
յայնցանէ՝ որք իրենց շահն ստրկութեան մէջ  
կ'որոնեն, ի՞նչ կ'ըլլար այս չնչին թիւը ամ-  
բողջ ժողովուրդներու դիմաց :

Եւ Աստուծոյ իմաստութիւնն է՝ որ այս-  
պէս տնօրինած է զիրերը, որպէս զի մար-  
դիկ կարենան միշտ բռնութեան դիմակալել,  
և բռնութիւնն անհնար կ'ըլլար՝ եթէ մարդիկ  
' միտ առնուին Աստուծոյ իմաստութիւնը :

Բայց աշխարհի տիրապետները, իրենց  
սիրտն ուրիշ մտածմանց դարձնելով, Աստո-  
ծոյ իմաստութեանը դէմ, զոր այլ ևս մար-  
դիկ չէին հասկնար, հանեցին այս աշխարհի  
իշխանին՝ այն է Սատանի իմաստութիւնը :

Որդ Սատան, որ ազգաց հարստահա-  
րիչներուն թագաւորն է, նոցա բռնակալիշ-  
խանութիւնն հաստատուն ընելու համար, դը-  
ժոխանենդ Հնարք մը թելազրեց անոնց :

Ըստ անոնց . “ Ահա՛ ինչ որ պէտք է  
ընել : Ամեն ընտանեաց մէջէն առէ՛ք ամե-  
նէն կորովի երիտասարդները, և գէնք աը-  
է՛ք անոնց, և վարժեցուցէ՛ք զայնս գործա-

ձելու . ձեզի համար պիտի պատերազմին նուքա իւրեանց հարց ու եղբարց դէմ . վասն զի են պիտի համողեմ զիրենք թէ փառաւոր գործ մ'է այն :

“ Անոնց երկու կուռք պիտի շինեմ , որք պիտի կոչուին Պատիւ և Հաւատարմութիւն , և Օրէնք մը՝ որ պիտի անուանի Կրաւորական հնագանդութիւն :

“ Եւ պիտի պաշտեն այս կուռքերը , և կոյր զկուրայն պիտի հնագանդին այս օրէնքին , վասն զի պիտի մոլորեցնեմ ես նոցամիտքը , և ա'յլ ո՛չ ուստեղ պիտի ունենաք երկիւղ , :

Եւ հարստահարիչք ազգաց ըրին ինչ որ Սատանն ըսած էր անոնց , և Սատան ալ կատարեց ինչ որ խոստացած էր ազգաց հարըստահարիչներուն :

Եւ տեսնուեցաւ ժողովրդեան զաւակաց ժողովուրդին վրայ բազուկ վերցնելը , իրենց եղբարքն ՚ի սուր մաշելը , իրենց հայրերն շղթայելը , և մինչև իսկ զիրենք կրող աղեաց դէմ անդութ ու ապերախտ գտնուիլը : Երբ իրենց կ'ըսէին . “ Յանթւն այն ամեն

բանի՝ որ սրբադան է , խորհեցէ՛ք թէ սրպիսի անիրաւութիւն , օրպիսի գազանային վայրագութիւն է՝ զոր հրամայեն ձեզ գործել , կը պատասխանէին . “ Զեմք խործիր , կը հնագանդիմք :

Եւ երբ կ'ըսուէր իրենց . “ Զմաց ի ձեզ սիրոյ դոյզն մնացորդ մը ձեր հարց , ձեր մարց , ձեր եղբարց և ձեր քերց նկատմամբ , , , կը պատասխանէին . “ Զեմք սիրեր , կը հընագանդիմք ,

Եւ երբ ցոյց կուտային իրենց զմարդն ստեղծող Աստուծոյն ու զնա փրկող Փրիստոսի սեղանները , կը գոչէին , “ Դոքա հայրենեաց Աստուծքն են . մեր Աստուածք հայրենեաց տէրերուն աստուածներն են , Հաւատարմութիւն և Պատիւ :

Կ'ըսեմ ձեզ ստուգիւ . Օձին ձեռքով կնոջ առաջին պատրումէն ՚ի վեր , քան զայս ահաւոր ու քստմելի պատրանք չէ եղած :

Բայց իւր վախճանին կը մօտի : Եթէ չար ոգին ուղիղ հողիները կը հրապարէ , առժամանակ մ'է միայն : Կ'անցնին նոքա իրբ ահռելի տնրլոյ մը մէջէն , և ՚ի զարթման

կ'օրէնեն զԱստուած՝ որ զիրենք աղատեց  
այս տանշանքէն :

Այլ ևս աւուրք ինչ, և նոքա՝ որք հա-  
րըստահարչաց համար կը կուռէին՝ պիտի  
մարտնչին հարստահարելոց համար . նոքա՝  
որք կը պատերազմէին իրենց հայրերը, մայ-  
րերը, եղբայրներն ու քոյրերն սորկութեան  
շղթաներով ուժդին պարաւանդելու, պիտի  
պատերազմին անոնց աղատութեանն համար:

Եւ Սատան աղգաց տիրապետներուն  
հետ իւր անդնդախոր անձաւաց մէջ պիտի  
ծածկի փախատական :

19.

Արի զինուոր, յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ Աստուծոյ և Հայ-  
րենեաց սեղաններուն վրայ :

Օրէնեա՛լ ըլլան քո զէնքերն, արի  
զինուոր :

Արի զինուոր, յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ արդարութեան,

ժողովրդոց սրբագան դատին, մարդկային  
ազգին նուիրական իրաւանց համար :

Օրէնեա՛լ ըլլան քո զէնքերն, արի  
զինուոր :

Արի զինուոր, յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ եղբարքս կեղեք-  
մանէ աղատելու, նոցա և աշխարհի շղթայ-  
քը խորտակելու համար :

Օրէնեա՛լ ըլլան քո զէնքերն, արի  
զինուոր :

Արի զինուոր, յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ անիրաւ մարդոց  
դէմ անոնց համար՝ զորս նոքա կը կործա-  
նեն և առաթուք կը կոմեն, տէրերուն դէմ  
սորկաց համար, բռնաւորաց դէմ աղատու-  
թեան համար :

Օրէնեա՛լ ըլլան քո զէնքերն, արի  
զինուոր :

Արի զինուոր, յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ որպէս զի այլ  
ևս ամենքն ոմանց որս ու ճարակ չըլլան,  
զեր բարձրացնելու կքած գլուխները և  
կթոտեալ ծունդերը զօրացնելու :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ որպէս զի հարգ չա-  
սիծեն այլ ևս զօրն՝ յորում իրենց ըսուե-  
ցաւ . “Որդի մի ծնաւ քեզ , . և ոչ ալ  
մարգ զայն օրն՝ յորում զառաջինն ճնշեցին  
զայն իրենց ծոցին վրայ :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ որպէսզի եղբայրն  
չտիրի այլ ևս՝ տեսնելով իւր քրոջ թարշա-  
մելն զերթ բոյս անսնուռն , որպէս զի ֆոյրն  
այլ ևս արտասուաթոր աչօք չդիտէ զիւր  
եղբայրն որ տարադէմ գնայ անդարձ :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ որպէսզի անցնիւր  
ոք ուտէ խաղաղութեամք իւր վաստակոց  
արգասիքը , ցամքեցնելու տիսեղծ մանկանց  
արտասուքը՝ ոյք հաց կըխնդրեն լալագին ,

և պատասխան կ'ընդունին , “Այլ չիք հաց :  
մասցածն ալ առին մենէ :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ աղքատին համար ,  
որպէսզի յաւերժ զգրկուի ու ընդ միտ չը-  
կողապտուի հասարակաց ժառանգութեան  
մէջ իւր ունեցած բաժնէն :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ հիւզերէն քաղցը  
արտաքսելու և ընտանեաց մէջ վերադար-  
ձընելու համար առատութիւնը , ապահովու-  
թիւնն ու բերկրութիւնն :

Օրհնեա՛լ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :  
Կ'երթամ մարտնչիլ բռնաւոր հարստա-  
հարիչներէն բանտերուն խորը նեղուած թըլ-  
ուառներուն տալու համար օղը՝ որ իրենց

Կրծոց կը պակասի և լոյսը՝ զոր իրենց աշեւ-  
ըը կը կնքը բեն:

Օրհնեալ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ հիմն ՚ի վեր տա-  
պալելու համար պատուարներն , որք զժողո-  
վուրդս իրարմէ կ'անջատեն և չոսն թոյլ  
ողջագուրել զիրեար իբրև միոյ հօր որդիք  
ճակատագրեալք մի և նոյն սիրոյ մէջ միա-  
ցեալ ապրելու :

Օրհնեալ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ մարդուն բռնակա-  
լութենէն թափելու ազատելու համար մտա-  
ծութիւնը , խօսքը , խիղճը :

Օրհնեալ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ յերկնուստ իջեալ  
յաւիտենական օրինաց համար , արդարու-  
թեան համար որ իրաւունքները կը պաշտ-

պանէ , զթութեան համար որ անխուսափե-  
լի չարիքը կ'ամոքէ :

Օրհնեալ ըլլան քո զէնքերն , արի  
զինուոր :

Արի զինուոր , յո՞ երթաս :

Կ'երթամ մարտնչիլ առ այն զի հա-  
մայնք յերկինս ունենան մի Աստուած , և  
յերկրի մի հայրենիք :

Օրհնեալ ըլլան քո զէնքերն , եօթնիցա  
օրհնեալ , զինուորդ արի :

Լէ .

Ինչո՞ւ ընդ վայր կը տաղնապիք ձեր չը-  
ուառութեան մէջ : Ձեր տենչը բարի է , բայց  
չգիտէք թէ ինչպէս պարտի կատարիլ :

Քաջ ՚ի միտ առէք զայս ճշմարտութիւն .  
նա , որ կեանք տուած է , նա և եթ կարէ  
վերստին կենազործել :

Յո՛չ իմիք ալիտի յաջողիք առանց Աստուածոյ:

Կը դառնայք ու կը դառնայք ձեր հե-  
ծութեան անկողնոյն վրայ . ի՞նչ սփոփանք  
կրցիք դանել :

Կործանեցիք մի քանի բռնապետներ , և  
այլք եկին շարք քան զառաջինն ։

Զնիցիք սորկութեան օրէնքներ , և ու-  
նեցաք արեան օրէնքներ , որոց յաջորդեցին  
գարձեալ օրէնք սորկութեան ։

Զգոյշ լերուք ապա այն մարդերէն , ոյք  
Աստուծոյ և ձեր մէջտեղ կը մտնեն , որպէս  
զի իրեանց ստուերը ծածէկ զայն 'ի ձէնջ ։  
Այդ մարդիկ գէշ խորհուրդներ ունին ։

Զի յԱստուծոյ կուգան զօրութիւնն ա-  
զատադործ և սէր միարար ։

Ի՞նչ կարէ ընել ձեզ համար մարդ մը  
որոյ կանոն իւր մտածութիւնն է միայն , և  
օրէնք իւր կամքը ։

Նոյն իսկ եթէ հաւատարիմ ըլլայ և բար-  
եաց փափաքող , պէտք է որ ձեզի իւր կամ-  
քը տայ օրէնք և իւր մտածութիւնը կանոն ։

Արդ , ո՞չ ապաքէն ամենայն բռնակալք  
զնոյն գործեն ։

Ի՞նչ շահ զամեն ինչ վեր 'ի վայր շըր-  
ջելէ և ամեն վտանգաց դիմագրաւելէ , երբ  
բռնակալութեան մ'այլ բռնակալութիւն յա-  
լորդէ ։

Ազատութիւնը ո՛չ եթէ յայնմ կը-  
կայանայ զի այս անուն տիրապետէ փո-  
խան այնր , այլ յայնմ զի ո՛չ ոք տիրէ ։

Արդ , ուր Աստուծած չը թագաւորեր ,  
հարկ է որ մարդ մ'իշխէ , և այս յաւէտ :

Աստուծոյ թագաւորութիւնը , կրկին կ'ը-  
սեմ արդարութեան թագաւորութիւնն է 'ի մի-  
տըս և զթութեան 'ի սիրտս . և ունի յերկրի իւր  
հիմնը Աստուծած և 'ի Քրիստոս հաւատոյն մէջ  
'ի Քրիստոն՝ որ հրատարակեց Աստուծոյ օ-  
րէնքը , այն է զթութեան և արդարութեան  
օրէնքը ։

Արդարութեան օրէնքը կ'ուսուցանէ թէ  
բնաւք հաւասարք են իրեանց հօր առջև՝  
որ է Աստուծած , և իրենց միակ ուսուցչին՝  
որ է Քրիստոս :

Գթութեան օրէնքը կ'ուսուցանէ անոնց  
միրել զմիմիանս և օգնել իրերաց իբրև միոյ  
հօր որդիք և միոյ ուսուցչի աշակերտք :

Եւ յայնժամ ազատք են , զի ո՛չ ոք կը-  
հրամայէ այլում , եթէ չէ ազատօրէն ընտ-  
րեալ ամենէն հրամայելու համար . և ո՛չ ոք  
կարէ կորզել անոնցմէ իրեանց ազատու-

թիւնը՝ զի ամենքն մի են զայն պաշտպանեւ-  
լու համար :

Այլ նոքա որք կ'ըսեն ձեզ . «Յառաջ  
քան զմեղ, ո՞չ ոք գիտցած է թէ ինչ է ար-  
դարութիւնը . յԱստուծոյ չդար արդարութիւնն  
ոյլ ի մարդոյ . 'ի մեզ վատահեցէ՛ք, և մեք  
արդարութիւն մը պիտի շինենք՝ որ պիտի գու-  
հայնէ զձեզ :

Դոքա կը խաբեն զձեզ, կամ, եթէ ան-  
կեղծօրէն աղատութիւն կը խոստանան ձեզ,  
ինքեանք կը խաբին :

Վասն զի կը խնդրեն ձեզմէ զինքեանս  
տէր ճանաչել, և այսպէս ձեր աղատութիւնը  
ոչ այլ ինչ կը լինի՝ բայց եթէ այս նոր տէ-  
րերուն հնազանդութիւն :

Պատասխանեցէ՛ք անոնց թէ ձեր տէրը  
Քրիստոս է, թէ չկամիք այլ ոք տէր, և Քը-  
րիստոս աղատ պիտի զօրծէ զձեզ :

— ՀՅՒՅՑ —

ԼՅ.

Բաղում համբերութիւն և անխոնջ ու  
անլքանելի արիութիւն պէտք են ձեզ . վա-  
սըն զի մէկ օրուան մէջ չպիտի տանիք յաղ-  
թանակը :

Աղատութիւնը այն հայն է՝ զոր ժողո-  
վուրդք իւրեանց հակտին քրամբն պարտին  
շահել :

Բաղում եռանդեամբ ու աշխուժիւ կ'ըս-  
կըսին, և յետոյ վհատեալ կը թուլանան դեռ  
հնձոց ժամանակին չհասած :

Նման են նոքա այն մեզկ ու լյծ մարդ-  
կան՝ որք, չկարենալով տանիլ իրենց արտե-  
րէն մլասակար խոտերը խլելու աշխատանքը  
քանի որ կ'աճին կը սերմանեն և չեն բը-  
նաւ քաղեր, զի թողած են որ փուշերու մէջ  
հեղձուի սերմնն բարի :

Կ'ըսեմ ձեզ, միշտ մեծ սոլ մի կայ այդ  
երկը մէջ :

Նման են գարձեալ այն անմիտ մարդոց՝  
որք, բնակութեան համար մինչեւ տանիքը

տուն մը բարձրացնելէն յետոյ , նորա ծած .  
կոյթը շինելու անփոյթ կ'ըլլան , զի քիչ մ'առ  
ելի յոդնեւթենէ կը վախնան :

Կը շնչեն հողմունք , կը տեղան անձրեք ,  
և տունը կը կործանի , և նոքա՝ որք զայն շի-  
նած էին՝ յանկարծ նորա աւերակաց տակ  
կը թաղուին :

Նոյն իսկ երբ ձեր ակնկալութիւնքն ՚ի-  
դերև ելնեն ո՛չ միայն եօթն անգամ , այլ  
եօթանասնիցս եօթն անգամ , մի՛ երբէք լը-  
քանիք յուսահատ :

Արդար դատը , երբ մարդ հաւատք ու-  
նի անոր վրայ , միշտ յաղթանակը կը կանգ-  
նէ , և նա կ'ապրի ու կը փրկի՝ որ ցվերջ կը  
յարատեէ անվհատ :

Մի՛ ըսէք . այսքան տառապանք շատ են  
այնպիսի բարեաց հոմար՝ ոյք անագան պիտի  
դան :

Եթէ այդ բարիք անագան գան , եթէ  
սուզ ինչ ժամանակ միայն վայելէք յայնս ,  
կամ թէ շորուի ձեզ բնաւ վայելել , ձեր զա-  
ւակունք պիտի վայելեն , և ձեր զաւակաց  
զտւակունք

Նոքա պիտի ունենան միայն ինչ որ ա-  
նոնց պիտի թողուք . տեսէ՛ք որեմն թէ կ'ուզէ՞ք  
թողուլ անոնց երկաթներ և դաւազան , և  
Փաղցն ՚ի ժառանգութիւն :

Նա՞ որ կը հարցնէ իւրովի թէ ի՞նչ օ-  
դուտ է արդարութենէն , իւր սրտին մէջ զայն  
կը պղծէ , և որ ՚ի հաշիւ կը զնէ թէ ի՞նչ ար-  
ժէք ունի ազատութիւնը՝ իւր սրտին մէջ ա-  
զատութենէն կը հրաժարի :

Ազատութիւնն ու արդարութիւնը պիտի  
կը ունի զձեզ այն կը ովկ՝ որով զայնս կը կըշ-  
ոէք : Սովորեցէ՛ք ուրեմն նոցա յարգը ճանչել :

Կան ժողովուրդք՝ որ չեն ճանչած զայն  
երբէք , և բնաւ աղէտ մը չեկաւ ՚ի կշիռ նու-  
ցա աղիտին :

Եթէ յերկրի կայ մեծ ու վսեմ բան մը ,  
այն է անսասան որոշումնը ժողովրդեան մը՝  
որ , Աստուծոյ աշաց առջև , առանց վայրիկ  
մի կասելու , կը քայլէ զէոլ ՚ի զբաւթուն այն  
երաւանց՝ զորս իրմէ ընդունած է . որ չաշ-  
ուեր ո՛չ իւր վերքերն , ո՛չ անհանգիստ օրերն ,  
ո՛չ անգուն գիշերներն , և որ կ'ըսէ իւրովի .  
ի՞նչ է զեռ այս : Արդարութիւնն ու ազա-

տութիւնը շատուրիչ վաստակմանց արժանի են:

Պատի կը թերեւս ձախողութիւնք , զրժախտութիւնք , մատնութիւնք , վաճառիլ Յուդայէ մը : Յօնի չլհատի երբէք :

Քանդի , յերափի կ'ըսեմ ձեզ , եթէ Քը բիստոսի նման գերեզման ալ իջնէ , Քրիստոսի պէս զարս պիտի ելնէ անտի երրորդ օրն , յազթող մահուն , և այս աշխարհի իշխանին պաշտօնէից :

### Լիթ.

Մշակը՝ օրուան ծանրութիւնը կը կրէ , անձրեխն , արեւուն , հողմոց զէմ 'որ տոկայ , ովատրատելու համար իրեն իւր աշխատութեամբը հունձը՝ որ յաշնան իւր շտեմարանըը պիտի լու:

Արդարութիւնը հունձն է ժողովրդոց :

Արհեստաւորը կ'ելնէ վաղայարոյց քան զարշարյու , կը վառէ իւր կանթեղիկը , և անզուլ կը յոդնի շահելու համար գոյզն ինչ հաց որ զինքն ու իւր զաւակրւնքը սնուցանէ :

Արդարութիւնը հացն է ժողովրդոց :

Վաճառականը կը ճշնի ու կը տքնի անշխոնջ ու անտրտունջ . մարմինը կը մաշէ և քունը կը մոռնայ , հարստութիւններ կուտելու համար :

Աղատութիւնը հարստութիւնն է ժողովրդոց :

Նաւազը կը կարէ կ'անցնի ծովերը , ինք զինք ալեւաց ու փոթորկաց կը մատնէ , խութերու և ժայռերու մէջն դիմագրաւ կ'ընթանայ , ցրտին ու չերպին կը տանի , ժերօրերուն մէջ իրեն հանդիսատ մը պատրաստեւ համար :

Աղատութիւնը հանգիստն է ժողովրդոց :

Զինուորը յանձնառու կը լայ ամենէն զընդուակ զրկմանց , կը հսկէ և կը մարտնչէ , և իւր արիւնը կուտայ փոխան այն բանին՝ զոր փառք կ'անուանէ :

Աղատութիւնը փառքն է ժողովրդոց :

Եթէ կայ ժողովրդոց մը՝ որ նուազ յարդէ զարգարութիւնն ու զաղատութիւնը քանթէ հողագործն իւր հունձը , արհեստաւորն չայի պատառը , վաճառականը հարստութիւնը , նաւազը հանգիստը և զինուորը փառքը,

այդ ժողովրդեան շարձը կանգնեցէ՝ք բարձր  
պարփակ մը , որպէս զի իւր շունջը չափակա-  
նէ երկրին մնացողդը :

Երբ զայ ժողովրդոց դատման մեծ օրը,  
պիտի ըստի իրեն . “ Ի՞նչ ըրեր քո հոդին .  
նորա ոչ մէկ նշանը և ո՛չ մէկ հետքը տես-  
նուեցաւ , Անասնային վայելք ամեն բան ե-  
զան քեզ համար : Դու տիզմը սիրեցիր , զը-  
նա՛ փախլ տղմին մէջ ” :

Իսկ այն ժողովը ըստ հակառակն ,  
որ իւր սրտին մէջ նիսթական բարիքներէն  
գեր ՚ի վերոյ կը դասէ ստոյդ բարիքները , որ  
զայն ձեռք բերելու համար չոլիտի ինայէ  
ո՛չ մի ճիգ , ո՛չ մի նեղութիւն , ո՛չ մի զոհո-  
դութիւն , նա սա խօսքը պիտի լոէ .

“ Դոցա՞ որը հոդի մ՛ունին վարձք հոդ-  
եաց : Քանզի առա ել քան զամենայն սիրե-  
ցիր գու ազատութիւնն ու արդարութիւնը ,  
ե՛կ ու վայելք՝ առ յանէտ արդարութիւնն ու  
ազատութիւնը ” :



Խ .

Կը կարծէ՝ք թէ եզնը՝ զոր կը սնուցանեն  
գոմին մէջ լծելու համար և կը պարարեն ու-  
տելու համար , աւելի նախանձելի ըլլայ քան  
զցուն՝ որ ազատ ու արձակ դաշտաց մէջ իւր  
մնունդը կը փնտոէ :

Կը կարծէ՞ք թէ ձին զոր կը թամրեն ու  
կըսանձեն և որ միշտ առատ վարսակ տակ մը-  
սուրին մէջ , նախամեծար վիճակ մ՛ունենայ  
մատալախաղին վիճակէն , որ ազատ ամեն  
կազ մերէ՝ կը իրինցէ ու կը խայտաց դաշտին  
մէջ :

Կը կարծէ՞ք թէ որձատը՝ որոյ առջե-  
յարդ ցորեն կը նետն հաւանոցին մէջ , ա-  
ւելի երջանիկ ըլլայ քան զհաւփալն՝ որ ա-  
ռաւաօտուն չդիտէ թէ ո՛ւր պիտի գտնէ օր-  
ուան բուազ :

Կը կարծէ՞ք թէ նա՞ որ հանդարտ կը-  
շրջի այն երէոցներէն միոյն մէջ՝ որք թադա-  
ւորութիւնք կը կոչին , ունենայ կեանք մը  
քաղցրագոյն քան փախտեայն որ անտառէ

յանտառ և ժայռէ 'ի ժայռ կը թափառի ,  
սիրտը լի ինքն ինքեան հայրենիք մը սահ-  
մանելու յուսով :

Կը կարծէ՞ք թէ ստրուկն պանդպր , նըս-  
տած իւր տիրոջ սեղանը , աւելի ախորժակով  
ձաշակէ անոր համագամ խորտիկները՝ քան  
թէ զինուորն ազատութեան իւր մե հացին  
պատառը :

Կը կարծէ՞ք թէ նա՝ որ , պարան 'ի վիզ ,  
կը քնանայ խշտեկին վրայ զոր տէրն իրեն  
նետած է , ունենայ նինջ մը հեշտ ու ախորժ  
քան այն որ , ոչ մէկ տէրէ մը կախումն ու-  
նենալուն համար երեկը կռուելէ յետոյ , զիշերը  
մի քանի ժամ կը հանգչի գետնին վրայ դաշտի  
մ'անկիւնը :

Կը կարծէ՞ք թէ վատը որ ամենուրեք  
ընդ քարշ կ'ածէ շլթայն գերութեան , նուազ  
կաշկանդեալ ըլ լայ քան զայրն արիամիրտ  
որ բանտարկելոյ երկաթները կը կրէ :

Կը կարծէ՞ք թէ վեհերոտ մարդը որ իւր  
անկողնոյն մէջ զիւր ողին կը փէ , հեղձա-  
մղձուկ այն պիզծ ու ապականեալ օդէն որ  
դրունակալութիւն կը պատէ շուրջ , ունենայ

մահ մը առաւել տենջալի քան այրն հաստա-  
տամիու ու անյողողողէ որ , կառափինարին  
վրայ առ Աստուած կ'աւանդէ իւր հոգին  
ազա՞ս ինչպէս ընդունեց զայն 'ի նմանէ :

Ամենուրեք է վաստակն և ամենուրեք են  
նեղութիւնք . միայն թէ կան ամուլ վաստա-  
կըք և արդասաւոր վաստակք , նախատակ ից  
նեղութիւնք և վաստաւոր նեղութիւնք :

ԽԱ :

Կ'երթայր նա թափառական և աստան-  
դական երկրի վրայ : Աստուած առաջնորդ  
ըլ լայ հէք տարագրելոյն քայլից :

Անցի ժողովրդոց մէջէն , և նոքա յիւ  
հայեցան , և ես 'ի նասա , և չճանչցանք զիր-  
եար : Տարագիրն միայնակ է ամենուրեք :

Մինչ , յաւուրն տարաժամել , կը տեսնէի  
ձորակի մը խորէն խրճի մը ծխոյն բարձրա-  
նալը , կ'ըսէի ինքնիրենա . Երանի՛ այնմ՝ որ  
յերեկցին կը գոնէ իւր ընտանի յարկը եւ  
կը նատի հոն իրեններուն մէջտեղ՝ Տարագի-  
րըն միայնակ է ամենուրեք :

Յո՞ երթան այդ ամպերն զոր մրրիկը կը-  
վանէ իւր առջեւէն : Կը վանէ նա զիս նոցա-  
պէս, եւ զի՞նչ փոյթ ու'ր : Տարագիրն միայ-  
նակ է ամենուրեք :

Այս ծառերն սաղարթագեղ են, այդ  
ծաղկունք չքնաղ . բայց չեն դոքա ծաղկունք  
եւ ծառք իմ երկրին, չեն խօսիր ինձ հետ :  
Տարագիրն միայնակ է ամենուրեք :

Սա վտակն հանդարտընթաց կը սողոսկի  
հովտին մէջ . այլ նորա կարկաջը չէ՝ այն  
զոր լսեց իմ մանկութիւն . բնաւ յիշա-  
տակ մը չզարթուցաներ հոգւոյս մէջ : Տա-  
րագիրն միայնակ է ամենուրեք :

Քաղցը են այդ նուագներն, այլ թա-  
խծքն և խինդք՝ զորս սոյնք կ'արթնցնեն՝ չեն  
իմ թախծքն, չեն իմ բերկրանք : Տարագի-  
րըն միայնակ է ամենուրեք :

Հարցին ցիս . “ Զի՞ լսա: , Եւ երբ ըսի  
թէ ինչո՛ւ, ոչ ոք լացաւ, գի չէին հասկընար  
զիս : Տարագիրն միայնակ է . ամենուրեք :

Տեսի ծերունիներ մանուկներէ շըրջա-  
պատեալ, ինչպէս ձիթենին իւր շառափոնե-  
րէն . բայց ոչ մին այս ծերունիներէն կը կու-

չէր զիս իւր որդին, ոչ ոք այս սողաքներէն  
զիս իւր եղբայրը կ'անուանէր : Տարագիրն  
միայնակ է ամենուրեք :

Տեսի դեռափթիթ օրիորդաց ժայռելն առ այն  
զոր իւրեանց սէրն ընտրած էր իրենց յամու-  
սին, և իրենց ժողովն անրիծ էր ու սուրբ  
իրրե զսիւք առաւօտին . բայց ո՛չ մին ժայռե-  
ցաւ առ իս : Տարագիրն միայնակ է ամեն-  
ուրեք :

Տեսի պատանիներ որք լանջ առ լանջ  
զիրեար կը սեղմէին իբրու թէ երկու կեան-  
քեր ՚ի մի խառնել ուզէին . բայց ո՛չ մին  
եկաւ իմ ձեռնս սեղմել : Տարագիրն միայ-  
նակ է ամենուրեք :

Չիք մտերիմ, չիք հարսն, չիք հայր,  
չիք եղբայր, բայց միայն ՚ի հայրենիս : Տա-  
րագիրն միայնակ է ամենուրեք :

Հէ՛ք տարագիր, դաղրէ՛ հեծելէ .  
ամենքն վտարանդի են քեզ հանգոյն . ամեն-  
քըն հարց, եղբարց, հարսանց, մտերմաց  
անցնիլն ու անհետանալը կը տեռնեն :

Հայրենիքն չէ յաստիս . ՚ինանիր մարդն  
հոս կը խնդրէ զոյն, ինչ որ հայրենիք կը-

կարծէն առ գիշերուան մը թջեան է միայն :  
Կ'երթաց նա թափառական ու աստանա-  
դական երկրի վրայ : Աստուած առաջնորդ  
բլլայ հէք տարապրեցն քսիլից :

ԽԲ.

Եւ հայրենիքն ինձ ցուցաւ :

Եւ տարուեցայ ՚ի վեր քան զաշխալի  
ասուերաց , և կը տեսնէի որ ժամանակը  
զատարկութեան մէջն կ'առնուր կը տանէր  
զանոնք անձառ արագութեամբ մը , ինչպէս  
կը տեսնուի հարաւաշունչ հողմայ վաճելն այն  
թէթև շոգիները որք կը սահին հեռուն հով-  
տին վրայ :

Եւ կ'ելնէի միշո ՚ի վեր , կը սաւառնէի  
յար , և իրականութիւնք անտեսանելիք մարմ-  
նեղեն աշաց երնցան ինձ , և լսեցի ձայներ՝  
որք չունին ինտ արձագանք այս անէակ  
ասուերներու աշխարհին մէջ :

Եւ ինչ որ կը լսէի , ինչ որ կը տեսնէի  
այնպէս իմն կենդանի էր , և այնպիսի աղ-  
դուութեամբ մը հոգւոյս մէջ կը տպաւօրուէր ,

որ կը թուէր ինձ թէ բոլըր ինչ որ յառա-  
ջադոյն տեսնել և լսել կարծած էի՞ գիշերա-  
յին շփոթ ու տարտամ անուրջ մ'էր միայն :

Ի՞նչ ըսեմ ուրեմն գիշերոյն զաւակաց ,  
և զի՞նչ կարող են ՚ի միտ առնուլ : Եւ յափ-  
տենական լուսոյն բարձրութենէն չ'ինկա՞յ ես  
ալ վերստին գիշերոյն գիրկը ։ Ժմանակին և  
ատուերաց աշխարհին մէջ :

Կը տեսնէի իրըու ովկէան մի անշարժ ,  
անեղը , անծայր , և այս ովկէանին մէջ ե-  
րեք ովկէան , ովկէան մի զօրութեան , ով-  
կէան մի լուսոյ , ովկէան մի կենաց . և այս  
երեք ովկէաններն , առանց յիրեար խառնուե-  
լու յիրեար թափանցելով մի և եթ ովկէան  
կը յօրինէին , մի և եթ միւթիւն աներևոյթ  
բացարձակ , յաւերժական :

Եւ այս միութիւնն էր Որ ին . և նորա  
էութեան խորը անպատճամ հանդոյց մը յիր-  
եար կը կցորդէր երեք Անձինք , որոց ան-  
ուանքն ինձ ըսուեցան , և անուանք նոյին էին  
Հայր , Արդի , Շոգի . և կայր անդ խորհրդա-  
ւոր բխում մը , խորհրդաւոր կենդանի , ար-

կասաւոր չունչ մը . և Հայրը , Որդին , Հո-  
ղին էին Որ էն :

Եւ Հայրը կ'երեէք ինձ իբրև կարսղու-  
թիւն մը որ , անհուն Եին մէջ , մի և համա-  
գոյ անոր հետ , որ մի միակ գործ մը ունի  
մշտակայ , կատաք եալ , անսահման , որ նոյն  
ինքն է Են անհուն :

Եւ Որդին կ'երեէք ինձ իբր բան ինչ  
մշտակայ , կատաք եալ , անսահման , որ կ'ըսէ  
ինչ որ կը գործէ Աստուծոյ կարողութիւնը .  
ինչ որ է ինքն , ինչ որ է Են անհուն :

Եւ Հոգին կ'երեէք ինձ իբրև Հօր և  
Որդոյ փոխաղարձ սէրը , զեղումնը , շունչը ,  
որ կ'ոգեւորէ զանոնք հաւասար կեանքով մը ,  
մշտակայ , կատաք եալ , անսահման կեանքով  
մը , որ է Են անհուն :

Եւ այս երեքն մի էին , և այս երեքն  
էին Աստուծ , և կը զրկէին զիրեար և կը-  
միւտորէին միոց գոյութեան անմատոյց Սըր-  
բարանին մէջ . և այս միւտորութիւնը , այս  
զրկախառնումը , անսահմանութեան ծոցին  
մէջ , յաւէրժական բերկրութիւնն , յաւի-  
տենական հեշտութիւնն էր Նորա՝ որ է :

Եւ Եին այս անհուն ովկէանին խորոց  
մէջ կը լուզացր և կը ծփէր և ձգտեալ կը-  
տարածուէր արարչութիւնն , իբրու կղզի մի  
որ անդուլ անդադար ընդարձակէր իւր ա-  
փունքէն անծայրածաւալ ծովու մը մէջ տեղ :

Կը փթթէր այն իրեւ ծաղկի մի որ իւր  
արմասները կը ձգէ ալեւաց մէջ և իր ծիլերն  
ու թերթերը կը տարածէ ջուրց երեսը :

Կը տեսնէի որ էակը էակաց հետ շղթա-  
յապէս կը միանային , կ'արգասաւորէին ու  
կը բազմանային իրենց անթուելի զանազանու-  
թեան մէջ , արբենալով ու սնանելով անըս-  
պառելի հնոթով մը , զօրութեամբը , լուսավե-  
ու կենոնքը նորա՝ որ է :

Եւ ամենայն որ ինչ ծածկեալ էր ցայն  
ժամ քօղաղերծեալ կը պարզէր հայեցաւա-  
ծոցս առջև զորս չարգելոյր այլ և էութեանց  
նիւթեղէն ծածկյմը :

Զերծ յերկրացին կալմանաց , սլոցեալ  
կ'երթայի աշխարհէ յաշխարհ , ինչպէս յամ-  
ափս միւտքը կը թռչի մոտածութենէ ՚ի մոտ-  
ծութիւն , և իմարողութեան իմաստութեան և  
սիրոյ այս սքանչելեաց մէջ խորառոյզ ընկըզ-

մեղ յետոյ , կը տուզէի , կը կորսուէի նոյն  
խակ սիրոյ , խմաստութեան և կարոզութեան  
աղբիւրին մէջ :

Եւ կ'զգայի թէ ինչ է հայրենիքն . և  
արբեալ էի լուսով , և հոդիս ներդաշնակու-  
թեան կոհակներէն մզուել վ , կընիրհէր երկ-  
նային ալեաց վրայ , անճառյափշտակութեան  
մը մէջ :

Եւ յետոյ կը տեսնէի զ՞իրիստոս իւր Հօր  
աշ կողմը , լուսափողվու անմահ փառքով մը :

Եւ կը տեսնէի նաև իրրեւ խորհրդական  
դառն մը բագնի մը վրայ զենուած , և բիւրք  
բիւրց հրեշտակաց և նորա արեամբ գնեալ  
մարդիկն , զայնու սար առած , նորա զո-  
վեստները կ'երդեն և զնա կը փառաբանէին  
երկրային լեզուով :

Եւ Գառին արեան մի կաթիւը կ'իյնար  
ծնդեալ և ախտաժէտ բնութեան վրայ , և  
տեսի զի փոխուեցաւ նա այլակերպ , և հա-  
մայն արարածք որ ՚ի նմա նոր կեանքով խայ-  
տացին , և ամենքն բարձրացուցին իրենց ձայնը ,  
և այս ձայնը կ'ըսէր .

“ Սուրբ , Սուրբ , Սուրբ է նա որ կոր .

ծանեաց դշարն . և յաղթեաց մահուն : ”

Եւ Որդին խոնարհեցաւ Հօր ծոցին վրայ ,  
և Հոգին ծածկեց զնոսա իւր ստուերովն , և  
եղաւ անոնց մէջ Աստուածային խորհուրդ մը  
և երկինք լուռ և անշունչ սորտացին :

Վ Ե Ր Զ

Վ Բ Ի Պ Ա Կ Ք

Երես	Տող	Այսաւ	Ուղիղ
Ժ.Գ.	17	մռունջ	մռունչ
Ժ.Գ.	18	կը քոչէ	կը դոչէ
Ժ.Գ.	15	Քրիստոնէութեան	Քրիստոս նէական
Ժ.Ե.	4	զայրութիւն	զայրութիւ
Ժ.Ե.	9	կը նուիրէ	կը նուիրէ
Ժ.Զ.	17	ևս	և
	5	մարդոյ	մարդոց
	26	եթէ աշխափմ	եթէ չաշխափմ
	64	որ յերկինսէ	զայրը՝ որ յեր- կինս է :
	87	քաղցրաշունջ	քաղցրաշունչ
	92	արձագանքն	արձագանդն
	111	օրընեալ	օրչնեալ
	126	հնչման	հռնչման
	149	մատակախաղին	մատակախաղին
	149	յարդ ցորեն	յորդ ցորեն
	150	երեկը	ցերեկը

3204 - 3207

ՀՀ Ազգային գրադարան



NL0028852

ՀՀ Ազգային գրադարան



NL0028851

ՀՀ Ազգային գրադարան



NL0028850

ՀՀ Ազգային գրադարան



NL0028849



3204  
3205  
3206  
3207

(3)

14,06

